



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ ՄԻՇՏ Ի ԶՕՐՈՒ ԿԸ ՄՆԱՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
ՀԱՐԱԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՍՏԱՏՈՒՄ ՔՈՒՈՆ ԱՌԱՅԺՄ ԶԵՌՆՏՈՒ Է ԹՈՒՐՔԻԱՅԻՆ. ՍԱՖՐԱՍՏԵԱՆԸ ԲԱՅԱՏՐՈՒՄ Է՝ ԻՆՉՈՒ.....	5
ԿԻՊՐԱՀԱՅ.....	8
ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀՈՒՆՁՔԸ.....	8
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	10
ՄԻԱՊԵՏՈՒԹՐՈՒՆ ՍԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ.....	10
ԵԿԵՂԵՅԻՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ-ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵԻ	10
ԱՊԱԿԱՆՈՒՄՆԵՐՈՒ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒ ԼՈՅՄԻՆ ՏԱԿ.....	20
ԴԱՏ-ԴԱՏԱՐԱՆ, ԴԱՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ-ԴԱՏԱՎՃՈՒԹԻՒՆ,	20
ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆ-ՋԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ.....	21
ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅ ԿՈՂՄԷ ԲՈՆԱԳՐԱԽՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՒԱԾՔԻ ՑԱՆԿԸ.....	24
ՊՐԻՄՄԱԿԷՍ	27
-----	27
ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ	27
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ	30
ՏԵՍԱԿԷՏ	31
ՓԱՇԽԵԱՆԻ «ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ- ԻՆՉ Է ԵՒ ԻՆՉ ՉԷ.....	31
ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆԻ ՇԵՄԻՆ. Ո՞ՐԻ ԵՆՔ ՄԵՆՔ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ, ԵՒ ԻՆՉ ԿԸ ԲԱՆԻՆՔ	34
ԵԿԵՂԵՅԻՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ.....	36
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՍԿԱՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ.....	38
ՀԱՅ ՈՐՈՇ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ	41
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	44
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	44
ՆՈՒՐԵԱԼ ԱԶԳԱԳՐԱԳԷՏ, ԽՍԲԱԳԻՐ ՄԵՐԿԷՑ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.....	48
ՓԱՐԻՋԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ.....	48

ՀՈՐԻԶՈՆԻՆ ԵՏԻՆ ՄՆԱՅԻՆ ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐՆ ՈՒ ԱՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ.....	51
ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ.....	53
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ.....	55
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	58

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ ՄԻՇՏ Ի ԶՕՐՈՒ ԿԸ ՄՆԱՆ

Համայն աշխարհը կ'ապրի աշխարհաքաղաքական թոհուրոհի օրեր: Կարծես հին աշխարհը կը քանդուի եւ նորի ստեղծման ճանապարհին ենք: Եթէ մեր հայեացքը սեւեռենք մեր տարածաշրջանին, աշխարհի վերաբաժանման կամ վերաձեւման ծրագիրը սկսաւ դեռեւս արաբական գարուններէն, շարունակուեցաւ Իրաքով, Լիպիայով, վերջերս՝ Սուրիայով եւ այսպէս շարունակ: Աշխարհի գերեզօր ոյժերը մրցավազքի մէջ են տիրանալու «փոքր» երկիրներու հումքային պաշարներուն՝ նաւթի, կազի, վառելիքի, հանքանիւթի...եւ իրենց ախորժակները ուտելով կը բացուին շարունակ եւ անյազուրդ են:



Մեր մի բոլոր մնացած երկիր Հայաստանը եւս յայտնուած է այս մրցավազքի խաչուղիներուն վրայ: Մենք կորսնցուցինք Արցախը, ունեցանք հազարաւոր զոհեր եւ հաշմանդաններ, որդեկորոյս մայրեր, քանդուած օճախներ...Պատճառը այս ահաւոր աղէտին կարելի է փնտռել ի մասնաւորի Ատրպէյճան-Թուրքիա-Իսրայէլ-Բրիտանիա-Ռուսաստան երկիրներու շահամուլ եւ ծաւալապաշտ

նկրտումներուն մէջ: Զմոռնանք որ մեր երկիրը կը գտնուի նաւթի եւ այլ պաշարներու փոխադրութեան ճանապարհին վրայ: Աւելին, ան ունի կարեւորագոյն հանքանիւթեր, ոսկի, պղինձ, մոլիպտէն, արժէքաւոր հանածոներ...եւ այլ, որոնց վրայ աչք տնկած են գաղութատէրերը, որոնք ամէն ջանք ի գործ կը դնեն մեզ խեղճացնելու, տկարացնելու, նոյնիսկ ի չիք դարձնելու, որպէսզի տիրանան մեր հողին, անոր ընձեռած ճանապարհներուն, անոր հողի ու ընդերքի հարստութեանց: Ի գուր չէ որ Անգլիան՝ իր աղուէսային եւ մաքիավելեան քաղաքականութեամբ ձեռք դրած է Ամուլսարի ոսկիին՝ իր թագաւորին իսկ ձեռամբ...

Այս բարդագոյն եւ պայթիւնաւտանգ իրավիճակին մէջ ընթացաւ Իսրայէլ-Իրան յունիսեան 12-օրեայ պատերազմը, որուն աւարտին Իրանը բարեբախտաբար չպարտուեցաւ եւ ծունկի չեկաւ: Քանզի այդ պարտութեան պիտի յաջորդէր վստահաբար «ՄԻՒՆԻՔԻ ՄԻԶԱՆՑՔ»ի



առգրաւումը, միջանցք՝ որ կարմիր գիծ է յայտարարուած Իրանի կողմէ, ելլելով մեր գոյգ երկիրներու հասարակաց շահերէն: Պատերազմի աւարտը սակայն վերջնական չէ, այլ հաւանաբար՝ զինադադար, որ նաեւ հնարաւորութիւն պէտք է ընձեռէ մեզի հօգորանալու ռազմականօրէն, ձեռքբերելու կամ արտադրելու ամենէն ժամանակակից զէնքեր, տրոններ եւ այլ ռազմական թեքնիք սարքեր, որպէսզի կարենանք պաշտպանել մեր ԿԱՐՄԻՐ ԳԻՇԵՐԸ եւ ամբողջ երկիրը գալիք հաւանական պատերազմէ, պատերազմներէ:

Մենք պիտի չտարուինք եւ չխաբուինք Էրտողանի երկարած ձեռքի սեղմումէն եւ կեղծ ու դաւադիր, մոլորեցնող ժպիտներէն, ոչ ալ մեծ ակնկալութիւն ունենանք 10 Յուլիս 2025-ին՝ Ապու Տապիի մէջ կայացած Փաշինեան-Ալիեւ հանդիպումէն, թէեւ ընդունինք որ անկկա Հայաստան-Ատրպէյճան ուղղակի երկխօսութեան քաղաքական նշանակալից քայլ էր, անկախ ամէն ինչէ: Իսկ Թուրքիոյ մօտ ԱՄՆ դեսպանի առաջարկած Մեղրիի ճանապարհներու կամ կապուղիներու հարիւրամեայ վարձակալութեան հարցը՝ ԱՄՆ-ին, նկատառելի զիջում է ՀՀ ինքնիշխանութենէն եւ յղի է լուրջ վտանգներով: Հայաստանի որեւէ տարածք պէտք է վերահսկուի միայն ու միայն հայկական ոյժերու կողմէ:

Յիշենք Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի խօսքերը, որոնք ի գօրու են նաեւ ու յատկապէս այսօր. «Զինադադարի սկզբունքները, որոնք մենք փոխանցել ենք հայերին, պէտք է ուղղուած լինեն ոչ թէ մեր Հայաստանից հեռանալուն - այլ Եւրոպայի առջեւ խաղաղ երեւալուն եւ հայերին մոլորեցնելուն: Ներկայումս խիստ անհրաժեշտ է հայկական բանակի զօրացումը և զինամթերքի առգրաւումը՝ դրանով իսկ կանխելով նրանց ռազմական կառուցուածքի վերականգնումը: Երկաթուղիները պահպանելու եւ մահմեդական բնակչութեան իրաւունքները պաշտպանելու պատրուակով, անհրաժեշտ է Հայաստանի ողջ տարածքում հաստատել մեր ռազմական վերահսկողութիւնը և այդպիսով վերահսկել նաեւ Թուրքիան Ազերպայճանի հետ կապող բոլոր ճանապարհները»: (Հատուած «Պայքար Հայաստանի Հանրապետութեան դէմ» գիրքէն):

Յիշենք մեծն զօրավար Անդրանիկի խօսքերը, որոնք ճշմարտացի կը հնչեն այսօր եւ ընդմիշտ. «Երբեք չվստահիլ թուրքին»: Միշտ յիշենք եւ երբեք չմոռնանք թուրանական ծրագիրը, որուն իրականացման ճամբուն վրայ ՄԻԻՆԻՔԻ ԲՌՆԱԳՐԱԻՄԱՆ խնդիրն է դրուած:

Յիշենք մեծ ցեղասպանագէտ դոկտ. Վահագն Տատրեանի խօսքերը փանթուրանականութեան մասին. «Փանթուրանականութիւնը իսկական վտանգ կ'ըլլայ, երբ որ Ռուսիա բոլորովին տկարանայ եւ քանդուի: Այն ատեն, Թուրքիոյ ասպարէզ կը բացուի: Թուրքիա հօգր կայսրութիւն մը կ'ըլլայ, ճամբաները կը բացուին դէպի Կեդրոնական Ասիա...»:

Մեծ իրաւաբան-քաղաքագէտ Մեթր Գասպար Տէրտէրեան կ'արձանագրէ որ համաթուրանական կամ փանթուրքական ծրագրին բուն հեղինակները սիոնափանթուրք ոյժերն են, որոնք այս ծրագիրով ծառայութիւն կը մատուցանեն Արեւմուտքի կայսերապաշտական տէրութիւններուն, անոնցմէ ստանալով տարբեր նպաստներ ու հատուցումներ:



Ներկայիս եւս, ճիշդ այն օրերուն երբ Էրտողան «բարեկամութեան» ձեռք կ'երկարէր ՀՀ վարչապետ Փաշինեանին, Իսթանպուլի մէջ կայացաւ 57 իսլամական երկիրներու համաժողովը, եւ կեանքի կոչուեցաւ համաձայնագիր մը՝ հինգ կէտերէ բաղկացեալ, ուր Ալիեւ Հայաստանի դէմ կը բարձրացնէր Խոճալուի, «արեւմտեան ասորայեճան»ի, Ասորայեճանին Հայաստանի իբր ունեցած պարտքերու, մուսուլմանական արժէքներու պահպանման եւ այլ շինծու եւ յերկրածոյ հարցեր: Յետոյ տեղի ունեցաւ Ստեփանակերտի մէջ 13 իսլամ պետութիւններու տնտեսական համագործակցութեան զագաթաժողովը, մասնակցութեամբ նաեւ Իրանի...Օրակարգերը կրնան տարբերիլ, բայց Հայաստանի դէմ ուղղուած ալիեւներու նկրտումները նոյնը կը մնան:

Մենք որքան ալ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ուզենք ու տենչանք, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ իրականացման ըլլանք հետամուտ, միեւնոյնն է, Ալիեւի բուն նպատակը Հայաստանի ոչնչացումն է: «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐՈՒ»։ Վկայ՝ իր շարունակական ոտնձգութիւններն ու մեզի պարտադրած զիջումները՝ Հայաստանն ու հայութիւնը խեղճացնելու, բարոյագրկելու, տկարացնելու նպատակով:

Այս խորապատկերին վրայ յատկապէս, մենք հարկադրուած ենք բռնեցնելու եւ թոյլ չտալու, բացառելու որեւէ ներքին պառակտում մեր երկրէն ներս:

Մեզի համար կործանարար է որեւէ ընդհարում պետութեան իշխանաւորներուն եւ հայոց եկեղեցիի սպասաւորներուն միջեւ: Սահմանադրութեամբ ընդունուած է որ եկեղեցին միջամուխ չըլլայ քաղաքականութեան, ինչպէս որ պետութիւնն ալ միջամուխ չըլլայ եկեղեցոյ իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն: Իսկ Սահմանադրութեան կամ Օրէնքին ենթակայ են բոլորը՝ հոգեւորական թէ աշխարհական, կառոյց թէ անձ: Եթէ իշխանափոխութիւն պիտի ըլլայ, ապա միայն քուէարկութեամբ, հայրենի ժողովուրդին ազատ եւ արդար կամարտայայտութեամբ:

Հայկական եկեղեցին հայ հոգիին ծննդավայրն է, ինչպէս կ'ըսէ բանաստեղծը, ան է որ դարերու մէջ պահած-պահպանած է ազգային մեր ինքնութիւնը, հոգեմտաւոր ու բարոյական արժէքները, աւանդութիւնները, ան միշտ կ'ապրի մեր հոգիներուն մէջ, եկեղեցին մենք ենք ազգովին: Հայութիւնը ոգիի, հաւատքի ժողովուրդ է: Սակայն եւ այնպէս, եկեղեցին, աւելի ճիշդ՝ անոր բոլոր սպասաւորները կամ եկեղեցականները, պիտի զբաղի մեր հոգեւոր-բարոյական արժէքներու վերանորոգման եւ զօրացման հարցերով գերազանցօրէն, հոգեւոր մխիթարութիւն պարգեւէ մեր ժողովուրդին, պիտի պայքարի յատկապէս օտար ու խորթ աղանդներուն դէմ որոնք ներխուժած են մեր երկիրը յետ վերակախութեան տարիներուն եւ կը վիստան անսանձ կերպով, իրենց աւերը տարածելով...Իսկ պետութիւնը պիտի զբաղի քաղաքականութեամբ՝ ներքին թէ արտաքին, ազգային անվտանգութեան եւ բազում-բազում խնդիրներով...«ՏՈՒՐ ԶԿԱՅՍՏԵՐ՝ ԿԱՅՍՏԵՐ ԵՒ ԶԱՍՏՕՈՅՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ»:

Հիմա առաւել քան երբեք, ԶԳԱՍՏԱՆԱԼՈՒ, ՍԹԱՓԵԼՈՒ, ԼՐԶԱԽՈՀՈՒԹԵԱՆ պահն է, ամբանալու եւ հզօրանալու պահն է, երբ կը գտնուինք գոյութենական, լինել-չլինելու ճակատագրական եւ օրհասական խնդրի առջեւ: Իսկ հզօրանալու եւ ոգեզինուելու գլխաւոր

նախապայմանը՝ մեր միությունն է, մեր համախմբումն է: ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԱՄՐԱԿՈՒՌ ՈՒ ԱՆՍԱՍԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՍՏԱՏՈՒՄ ՔՈՒՈՆ ԱՌԱՅԺՄ ՁԵՌՆՏՈՒ Է ԹՈՒՐԳԻԱՅԻՆ. ՍԱՖՐԱՍՏԵԱՆԸ ԲԱՑԱՏՐՈՒՄ Է՝ ԻՆՉՈՒ



20:29 14.07.2025

Sputnik / Aram Nersesyan

Ռուբեն Սաֆրաստեանը նշում է, որ այս պահին Անկարայի ուժերը չեն հերիքի միաժամանակ Մերձավոր Արեւելքում և մեր տարածաշրջանում հարցեր լուծելու համար, սակայն Անկարան Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու գերխնդրից չի հրաժարուել:

-Հարաւային Կովկասը ցնցում է, որովհետեւ Մերձավոր Արեւելքը դողդում է

Ի սկզբանէ պէտք է հասկանալ ամենակարեւորը՝ Հարաւային Կովկասում հենց հիմա արմատապէս փոխուում է տարածաշրջանային անվտանգութեան ոչ միայն աշխարհաքաղաքական, այլեւ տնտեսական ճարտարապետութիւնը: Sputnik Արմենիայի հետ զրոյցում այս տեսակէտը յայտնեց թուրքագէտ, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստեանը:

-«Ստեղծուած իրավիճակը ես կը բնութագրէի այսպէս՝ մեր տարածաշրջանը սկսել է ինտեգրուել այն գործընթացներին, որոնք վաղուց արդէն ընթանում են ամբողջ աշխարհում: Հենց դրանով էլ կարելի է բացատրել իրավիճակային լարուածութիւնը Հարաւային Կովկասում», -ասաց մեր զրուցակիցը:

-Իսկ եթէ կոնկրետացնենք իրավիճակը և փորձենք հասկանալ, թէ ինչու տարածաշրջանը «յանկարծակի» բախուեց մի շարք հակասութիւնների, ապա առաջին հերթին պէտք է ուշադրութիւն դարձնել հարեւան տարածաշրջանին: Չափերով փոքր Հարաւային Կովկասը հսկայական Մերձավոր Արեւելքի հարեւանն է, որը վերջին տարիներին միջազգային հանրութեան և ուժային կենտրոնների ուշադրութեան կենտրոնում է, իսկ այդ կենտրոնները պայքարում են առաջիկայ նոր աշխարհակարգում ազդեցութիւն ունենալու համար:



Այս կապակցութեամբ ակադեմիկոս Սաֆրաստեանը յիշատակում է ն' Գագայի, ն' Սիրիայի իրադարձութիւնները, ն' մերձաւորարեւելեան հիմնական խաղացողների կտրուկ աճող ակտիվութիւնը: Այս ամէնը վաղուց է ցնցում տարածաշրջանը, և, ինչպէս ընդունուած է ասել, աշխարհաքաղաքական տեկտոնական տեղաշարժերի արձագանգը չէր կարող վաղ թէ ուշ չհասնել հարեւաններին և չազդել Հարաւային Կովկասի անվտանգութեան ճարտարապետութեան վրայ:

-Ինչո՞ւ միայն հիմա: Ինչո՞ւ նման ցնցումներ չկային մեր տարածաշրջանում, օրինակ, սիրիական իրադարձութիւնների կամ Իրաքի տարածքներին թուրքական հարուածների ժամանակ: Ակադեմիկոսը դա բացատրում է այն հանգամանքով, որ Ռուսաստանի ազդեցութիւնը Հարաւային Կովկասում այն ժամանակ աւելի ուժեղ էր, եթէ կարելի է այսպէս ասել, համապարփակ: Եւ նաեւ կար Իրանը՝ որպէս տարածաշրջանային գերիշխող գործօն, մեր տարածաշրջանը մերձաւորարեւելեան ցնցումներից ծածկող իւրատեսակ վահան:

-Թուրքիան իր ցուցանիշներով «միջին խաւի» երկիր է, այնպէս որ կարող է կոտրուել

-Այսօր Ռուսաստանի ազդեցութիւնը միանգամայն հասկանալի և օբյեկտիվ հանգամանքների բերումով փոքր-ինչ նուազել է: Իրանն իր հերթին թուլացրել է իր ֆունկցիոնալութիւնը որպէս զսպող գործօն՝ կրկին հասկանալի պատճառներով: Ճիշտ է՝ այս ամէնը ժամանակաւոր երեւոյթներ են, և Իրանը շատ արագ կը սկսի վերականգնուել: Հիմա մի իրավիճակ է ստեղծուել, երբ Մերձաւոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձութիւններն ուղղակիօրէն անդրադառնում են մեր տարածաշրջանի վրայ:

Այն, որ Թուրքիայի ակտիվութիւնն ու ազդեցութիւնը Հարաւային Կովկասում վերջին տարիներին կտրուկ աճել է, անգէն աչքով տեսանելի, անվիճելի փաստ է: Ակնյայտ է, որ այդ երկրի ղեկավարութիւնը փորձելու է ստեղծուած իրավիճակը «լիարժէք» օգտագործել: Միւս կողմից չի կարելի մոռանալ, որ Թուրքիան հիմա բաւական ակտիվ է, առաջին հերթին՝ Մերձաւոր Արեւելքում, և առաջին հերթին դա վերաբերում է սիրիական իրադարձութիւններին:

Սակայն իրականում Թուրքիան իր իրական ցուցանիշներով, այնուամենայնիւ, միջին խաւի երկիր է, եթէ կարելի է այդպէս ասել: Եւ միաժամանակ փորձում է մեծ, հզօր պետութեան դեր խաղալ: Մի տեսակ տէրութիւն, որն ունակ է աշխարհաքաղաքական, քաղաքակրթական մակարդակի խնդիրներ լուծել: Թուրքագէտը վստահ է, որ արդիւնքում նա ուղղակի կոտրուելու է, ոչինչ էլ չի ստացուելու:

Պէտք է հասկանալ, որ Մերձաւոր Արեւելքը թուրքական յաւակնութիւնների համար շատ աւելի կարեւոր է, քան Հարաւային Կովկասը: Եւ իր բոլոր ցուցանիշներով լինելով միջին խաւի պետութիւն՝ Թուրքիան ի վիճակի չէ լուրջ և լիարժէք աշխարհաքաղաքական խաղ վարել միանգամից մի քանի և նոյնիսկ միաժամանակ երկու ճակատով: Ամէն դէպքում գերտէրութիւն չէ, որ ներուժը հերիքի միանգամից մի քանի աշխարհաքաղաքական ճակատներին:

-Ադրբեջանն «իրեն թափ է տուել» և նոյնիսկ Թուրքիայի՞ն է փորձում «զցել»

Անկարան ստիպուած է հաշուի նստել իր ռեսուրսի հետ, և այս առումով ստացում է, որ արտաքին քաղաքական ուղղութիւնները պէտք է բաժանել գլխաւորի և երկրորդականի: Այս առումով Հարաւային Կովկասը երկրորդական է. առաջին տեղում Մերձաւոր Արեւելքն է: Պէտք է հաշուի առնել, որ Թուրքիան մեր տարածաշրջանում նաեւ յուսալի դաշնակից ունի՝



Ադրբեջանը: Հենց Բաքուի հաշուին էլ Անկարան փոխհատուցում է Հարաւային Կովկասում գործողութիւնների համար պակասող իր ներուժը:

«Այստեղ նաև մէկ այլ, շատ հետաքրքիր գործօն է առաջանում: Կարծես թէ Ադրբեջանը փորձում է սեփական տարածաշրջանային խաղը սկսել: Ընդ որում՝ Բաքուն ոչ միայն կտրուկ առճակատման է գնում Ռուսաստանի հետ, այլև, թուում է, պատրաստ է սկսել վիճարկել իր աւագ եղբոր՝ Թուրքիայի կարծիքն ու դիրքորոշումը», -ասում է Սաֆրաստեանը:

Նախիջևանի Ինքնավար Հանրապետութեան Սահմանադրութեան տեքստից Մոսկուայի և Կարսի հին պայմանագրերը հանելու Բաքուի վերջին որոշման դէպքը, ըստ թուրքագետի, բաւական ուշագրաւ է: Բոլշեւիկների և Աթաթուրքի միջեւ կնքուած այդ պայմանագրերով Թուրքիան ինչ-որ ձայնի իրաւունք ունի Նախիջևանի հարցերում: Բաքուն, ըստ երեւոյթին, ցանկանում է բացառել ոչ միայն հանրապետութեան ինքնավար կարգավիճակը, այլև փորձում է Թուրքիան դուրս հանել խաղից...

Հայաստանը բնական էներգետիկ ծուղակն են գցում. Ձիւնիկ Աղաջանեան

«Արդէն որպէս պատմաբան, որը ժամանակին ուսումնասիրել է այդ փաստաթղթերը, ասում եմ՝ այն ժամանակ Թուրքիան ինքն էր ուզում Նախիջևանը միացնել իր տարածքին, բայց բոլշեւիկները թոյլ չտուեցին: Բայց Աթաթուրքը կարողացաւ դիւանագիտօրէն այնպէս խաղալ, որ հանրապետութիւնն այնուամենայնիւ մտաւ Ադրբեջանի, այլ ոչ թէ Հայաստանի կազմի մէջ: Ազդեցութեան ինչ-որ իրաւունք թուրքերն այն ժամանակ բոլշեւիկեան դեկլարութիւնից «քերեցին»: Շատ հետաքրքիր իրավիճակ կարող է ստեղծուել արդիւնքում, տեսնենք», -կարծում է Sputnik Արմենիայի գրուցակիցը:

-Հարաւային Կովկասի ստատուս քուռն առայժմ ձեռնտու է թուրքերին

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, որի հետ Թուրքիան ու Ադրբեջանը ստիպուած են հաշուի նստել Հարաւային Կովկասում, ապա իրավիճակն էլ աւելի հետաքրքիր է դասաւորուում: Հասկանալի է, որ Անկարայի գլխաւոր ռազմավարական նպատակն ու խնդիրն է ամէն գնով, ցանկացած իրավիճակում Ռուսաստանին իր ազդեցութեամբ դուրս մղել տարածաշրջանից ընդհանրապէս, ամբողջութեամբ և ընդմիշտ: Սաֆրաստեանը համոզուած է՝ սա թուրքական դիւանագիտութեան պատմական և աւանդական նպատակն է, գերխնդիրը:

«Եթէ այդ դիրքերից դիտարկենք Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարութիւնը, ապա տուեալ ժամանակահատուածում Անկարան իր համար շահեկան դիրք է գրաւում Հարաւային Կովկասում: Ես առիթ եմ ունեցել շփուելու թուրքական աշխարհաքաղաքականութեան տեսաբանների և ճարտարապետների հետ, որոնց գնահատմամբ՝ Թուրքիայի համար իր դիրքը մեր տարածաշրջանում այսօր աւելի բարենպաստ է, քան մի քանի տարի առաջ», -ասում է փորձագետը:

Ստացւում է, որ այսօրուայ ստատուս քուռն ձեռնտու է Թուրքիայի գործող դեկլարութեանը: Այս պահին խնդիրը «գետնի վրայ իրավիճակը» ֆիքսելն է, որպէսզի հնարաւոր լինի ապագայում (ոչ հեռու) վերադառնալ հարցին և անպայման իրականացնել

ռազմավարական գերխնդիրը՝ այնուամենայնիւ դուրս մղել ռուսական ազդեցութիւնը Հարաւային Կովկասից: Ինչպէս արդէն ասուեց, հիմա Թուրքիան զբաղուած է այլ մերձաւորարեւելեան խնդիրներով:

Բայց Հարաւային Կովկասի համար ռուս-թուրքական դիմակայութիւնը մեծ հաշուով չի վերացել: Պարզապէս հիմա Անկարան բաւարար ներուժ չունի միաժամանակ Մերձաւոր Արեւելքում ու մեր տարածաշրջանում հարցեր լուծելու համար: Այս ստատուս քոնո պահպանելու առաքելութիւնը հաւանաբար վստահուել է Ադրբեջանին: Իսկ Թուրքիան, ըստ երեւոյթին, կը ների նրա որոշ ինքնագլուխ քայլերը, որոնցից մէկը Մոսկուայի և Կարսի պայմանագրերը Նախիջեւանի Սահմանադրութիւնից հանելն է...

ԿԻՊՐԱՀԱՅ

ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀՈՒՆՁՔԸ



Ուրբաթ, 20 Յունիս 2025, կ.ե. ժամը 7:00-ին, Նիկոսիոյ Նարեկ վարժարաններու ամփիթատրոնին վրայ, Նարեկ վարժարաններու Նախակրթարանի բաժինը հայ կեանքին ընծայեց իր հերթական նոր հունձքը, որ կը բաղկանայ 31 աշակերտ-աշակերտուհիներէ՝ Նիկոսիոյ, Լառնագայի եւ Լիմասոլի Նախակրթարանի բաժիններէն:



Իսկ Չորեքշաբթի 25 Յունիս 2025, ժամը 7:30-ին, Նիկոսիոյ Նարեկ վարժարանի Միջնակարգի բաժինը հայ կեանքին ընծայեց 8 շրջանաւարտ-շրջանաւարտուհիներ Միջնակարգի բաժինէն: Ամավերջի հանդիսութիւնը անցաւ յուզաթաթաւ մթնոլորտի մը մէջ, հայ դպրոցին յատուկ ազգային-հայրենասիրական վառ ապրումներով եւ յոյգերով:

Զոյգ հանդիսութիւնները կը վայելէին հովանաւորութիւնը Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի եւ նախագահութիւնը կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի: Հանդիսութիւններէն երկրորդը իր ներկայութեամբ պատուեց Կիպրոսի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Վսեմաշուք Տիկ. Իննա Թորգոմեան:

Կիպրոսի Հանրապետութեան, Հայաստանի Հանրապետութեան եւ Նարեկ Հայկական Վարժարաններու քայլերգներու կատարումով սկիզբ առին հանդիսութիւնները՝ շրջանաւարտներու մուտքէն ետք, առաջնորդութեամբ Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի:

Երգերով, ասմունքով, հրաժեշտի ուղերձներով, վկայականաց եւ մրցանակներու տուչութեամբ յազդեցած մթնոլորտը ազգային-հայրենասիրական վառ զգացումներով համակեց ներկաները: Զոյգ հանդիսութիւնները տեղի ունեցան անթերի կազմակերպուածութեամբ, ճոխ եւ առինքնող յայտագիրներու գործադրութեամբ, որոնց համար ծափահարելի են տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը:

Կ'արժէ մէջբերել տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի Հուսկ Բանքէն հետեւեալ յորդորները, որպէս սրտագին մաղթանք մեր շրջանաւարտներուն.-

-Երբեք մի դադրիք սորվելէ: Կեանքը դպրոց մըն է, ուր ամէն օր նորութիւններ սորվելու առիթ կ'ընծայէ ձեզի: Բաց պահեցէք ձեր միտքերը նոր գիտելիքներու եւ փորձառութիւններու դիմաց: Պահեցէք ձեր հետաքրքրասիրութիւնը, համարձակեցէք նոր գաղափարներ փորձել, նոր ոլորտներ ուսումնասիրել եւ ձեր ձիրքերը զարգացնել, որովհետեւ աճելու կամ զարգանալու միակ ձեւը մշտապէս սորվիլն է:

-Եղէք բարեկամութիւններու արժէքը գնահատող անձեր: Ձեր ընկերները ձեր ամենամեծ հարստութիւնն են: Դպրոցին մէջ ձեռք բերած բարեկամութիւնները ձեզի պիտի ուղեկցին ձեր ամբողջ կեանքի ընթացքին: Յարգեցէք այդ կապերը, գուրգուրացէք անոնց վրայ եւ միշտ եղէք բարի, արդար եւ աջակից ձեր ընկերներուն եւ շրջապատին, որովհետեւ յաջողութիւնը միայն անձնական իրագործումներով չի չափուիր. Ձեր ցուցաբերած համեստութիւնն ու հոգատարութիւնը այլոց հանդէպ ձեր իսկական արժէքը ցոյց կու տան:



-Եղէք հպարտ ձեր ազգային ինքնութեամբ, որովհետեւ ձեր արմատները կը դարձնեն ձեզ հզօր եւ աննկուն:

Պահեցէք ու տարածեցէք հայկական ժառանգութիւնը, որովհետեւ մեր լեզուն, գրականութիւնը, երաժշտութիւնն ու ասանդութիւնները հարուստ են: Միշտ ջանացէք փոխանցել այդ արժէքները, հպարտութեամբ պահպանելով ձեր ինքնութիւնը:

Այս խրատներուն վրայ կարելի է աւելցնել Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի խորիմաստ պատգամը, զոր ան փոխանցեց շրջանաւարտներուն, նախքան իր եզրափակիչ Պահպանիչ աղօթքը:

Ան յատկապէս պատգամեց որ իւրաքանչիւր շրջանաւարտի կեանքի նաւակը պիտի առաջնորդուի դէպի նորանոր հորիզոններ, դէպի կեանքի ովկէանոսը...եւ շեշտեց կարեւորութիւնը ունենալու հաւատք, տեսլական, կամքի ոյժ եւ բարոյական ամուր նկարագիր կարենալու համար անվրէպ նաւարկել հայօրէն, հաւատարիմ մնալով բարոյական արժէքներուն: Միաժամանակ զինուիլ գիտելիքներով, արհեստական բանականութեան ընձեռած բարիքներով եւ այլ յառաջդիմութիւններով: «Առաջնորդարանի դռները միշտ բաց են ձեր առջեւ», շարունակեց ան, եթէ որեւէ դժուարութեան ատեն կարիքը զգաք մեր խորհուրդին:

ԱԶԱՏ ԽՕՍՔը սրտագին զգացումներով կը շնորհաւորէ ՆԱՐԵԿ հայկական վարժարաններու բոլոր շրջանաւարտները, իրենց մաղթելով կանաչ ճանապարհ դէպի նորանոր յաջողութիւններ, որոնցմէ միշտ բաժին հանեն մեր ազգին, հարենիքին եւ համայնքին բարօրութեան ու վերելքին:

Ե.Գ.

ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ...

ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ-ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ



Ժողովրդավարութիւնը պետական-քաղաքական կառավարման ձեւ մըն է, որ կը լիազօրէ ժողովուրդը իրականացնելու քաղաքական վերահսկողութիւն՝ սահմանափակել կարենալու համար իր ընտրաքուէներով կազմաւորուած պետութեան ղեկավարի իշխանութիւնը, քաղաքական



Իշխանութիւնը բաժնելով պետական մարմիններու միջեւ, – խորհրդարան, կառավարութիւն, սահմանադրական դատարան, մարզպետարան եւ այլն, – եւ կ'ապահովէ քաղաքացիական իրաւունքներու ու անոնց ազատութեան պաշտպանութիւնը: Ժողովրդավարութեան ընդհանրացած գոյգ՝ ուղղակի եւ ներկայացուցչական տարբերակներէն բացի, նաեւ որոշ երկիրներու մէջ կը կիրառուին ղեկավարման այլ ձեւեր, որոնք կը դրսեւորուին իբրեւ մասնակցային, ազատական, խորհրդարանական, բազմակարծական, սահմանադրական եւ ընկերվարական ժողովրդավարութիւններ բնորոշումներով:

Ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, թեպէտ ժողովրդավարութիւնը միատեսակ չէ, սակայն անոր հիմնական բաղադրիչ կը կազմեն մրցակցային ընտրութիւնները, խօսքի ազատութիւնը, անհատական քաղաքացիական ազատութիւնները եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութիւնը:

Ժողովրդավարական սկզբունքներով կառավարուող երկիրներու մէջ, մեծաւ մասամբ, քաղաքացիները կ'ընտրեն պատգամաւորներ՝ խորհրդարանէն ներս ներկայացնելու եւ հետապնդելու համար իրենց պահանջները, ցանկութիւններն ու շահերը: Ժողովուրդին քուէներով ընտրուած խորհրդարանի անդամները կը քննարկեն ու կ'ամրագրեն օրէնքներ, եւ զանոնք իրագործելու համար կը մշակեն համապատասխան քաղաքականութիւն:

Հակառակ Ռուսիոյ, Չինաստանի, Հիւսիսային Բորնէյի, Իրանի եւ Ափրիկէի որոշ ոչ-ժողովրդավարական, մենատիրական պետութիւններուն, արեւմտաեւրոպական ժողովրդավարութեան համակարգը շատ մը երկիրներու կողմէ որդեգրուած եւ աշխարհի ամենատարածուած կառավարման ձեւերէն մին է:

Հայաստան ժողովրդավար եւ սահմանադրականօրէն կազմակերպուած պետութիւն է՝ ազատ ընտրուած խորհրդարանով եւ գործադիր իշխանութեան գլուխը կանգնած վարչապետով: Իբրեւ խորհրդարանական հանրապետութիւն՝ Հայաստան ինքնիշխան պետութիւն է, որուն քաղաքական համակարգը հաստատուած է իշխանութիւններու անջատման, մարդկային իրաւունքներու ու հիմնարար ազատութիւններու պաշտպանութեան, ինչպէս նաեւ խօսքի ազատութեան եւ ազատ ընտրութիւններու իրաւունքի հիմնասիւններուն վրայ: Անոր օրէնսդիր իշխանութիւնը կը պատկանի Ազգային ժողովին: Արդարեւ, Հայաստան խորհրդարանական ներկայացուցչութեամբ ժողովրդավար կառավարման համակարգ ունեցող երկիր մըն է, որուն պետական իշխանութիւնը կը բխի ժողովուրդէն եւ կ'իրագործուի անկէ ընտրուած ներկայացուցիչներուն միջոցաւ:

Սակայն առաւել ուշագրաւ է, որ այս ժողովրդավարական-սահմանադրական կառավարման արժեհամակարգին մէջ Աստուծոյ դրօշին ներքոյ գոյություն ունի հաստատութիւն մը, որուն ներքին կարգը եւ որոշումներու կայացման գործընթացը կը հետեւին միապետական կառոյցներու՝ Եկեղեցին: Այսպէս, երբ պետութիւնն ու հասարակութիւնը կազմուած են բազմակարծիք եւ թափանցիկ ըլլալու հիմունքներով, Եկեղեցւոյ իշխանական



կառոյցներուն մեծ մասը ունի վեհապետական, այլ խօսքով՝ նուիրապետական եւ ոչ-ժողովրդավարական դեկլարման բնոյթ:

Արդարեւ, կառուցուածքային այս լարուածութիւնը ինքնաբերաբար կը բարձրացնէ կեդրոնական հարց մը. ինչպէ՞ս կրնայ դեկլարման միապետական աւանդոյթ ունեցող կազմակերպութեան մը գոյութիւնը համատեղելի նկատուիլ ժողովրդավարական-սահմանադրական պետութեան հիմնարար արժեքներուն հետ, եւ ի՞նչ դեր կը խաղայ Եկեղեցւոյ պատմականօրէն ձեւաւորուած յատուկ դիրքը այս իրավիճակին մէջ: Առկայ յօդուածին առաջադրանքն է քննարկել այս հարցը եւ քննադատաբար լուսաբանել, թէ Եկեղեցին որքանո՞վ կը գործէ իբրեւ «իրաւական միապետութիւն» ժողովրդավարական-սահմանադրական պետութեան եւ հասարակարգի շրջանակներուն մէջ:

Արդար գնահատականով մը անդրադառնալու համար նախ պէտք է զանազանել Հայց. առաք. եկեղեցին իր կառավարման իւրայատուկ ձեւին մէջ՝ զայն տարբերելով Հռոմէական կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիներէն: Հայ եկեղեցին աւանդաբար ինքն իրեն գնահատած է իբրեւ կառավարման ժողովրդավարական աւանդոյթներ ունեցող եկեղեցի մը: Առնուազն 447 թուականին գումարուած Շահպիվանի ժողովի կազմութեան մէջ նկատելի կը դառնան նախադրեալները եկեղեցական օրէնսդիր համագումարի մը, որ հայոց եկեղեցական պատմութեան մէջ կը գնահատուի որպէս Ազգային-եկեղեցական ժողով՝ Յովսէփ Ա. Հոռոցմեցի կաթողիկոսի, 40 եպիսկոպոսներու, բազմաթիւ երէցներու, սարկաւազներու եւ Եկեղեցւոյ համօրէն ուխտի՝ իշխաններու, գաւառապետերու, գաւառակալներու, բռնաւորներու, զօրագլուխներու, հարիւրապետերու, ազատներու, շինականներու, կուսակալներու, նաեւ բոլոր նախարարներու մասնակցութեան համար: Սոյնը ունի եզակի նշանակութիւն, որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումէն ոչ իսկ 150 տարի անց, Հայ եկեղեցին իր որոշումները կ'առնէ ոչ թէ բացառաբար եկեղեցականներուն մենաշնորհուած իրաւասութիւններով, այլ Եկեղեցւոյ համօրէն ուխտին՝ հայ ժողովուրդի բոլոր խաւերէն ներկայացուած մասնակիցներու գործակցութեամբ:

Բայց միթէ՞ այսպէս եղաւ բոլոր ժամանակներու ընթացքին՝ դժուար է ըսել: Այնուամենայնիւ ժամանակի հոլովոյթին եւ պատմութեան վերիվայրումներուն մէջ պահպանուեցաւ գոնէ վաւերական աւանդոյթ մը, որ կը յարատեւէ մինչեւ այսօր՝ կրելով առանձնայատուկ տիտղոս մը «Հայաստանեայց առաքելական սբ. եկեղեցւոյ ազգային-եկեղեցական ժողով» անունով:

Սոյն ժողովը կը հանդիսանայ Հայ եկեղեցւոյ իրաւական եւ վարչական կառոյցին ամենահեղինակաւոր մարմինը՝ խտացնելով իր մէջ օրէնսդրական, որոշումներու կայացման եւ ընտրական բոլոր լիազօրութիւնները:

Անդրադառնալով Հայ եկեղեցւոյ այս կարեւորագոյն կառոյցին՝ Մայր աթոռ սբ. Էջմիածնի կայքէջը անոր իրաւասութիւններուն մասին կը նշէ.

«ա. Կ'ընտրէ Ամենայն հայոց կաթողիկոսը:

բ. Որոշումներ կ'ընդունի ազգային-եկեղեցական հիմնահարցերու վերաբերեալ:



գ. Որոշումներ կ'ընդունի դաւանաբանական, ծիսական, կանոնական, ինչպէս նաեւ վարչական կառավարման էական հիմնահարցերու վերաբերեալ:

դ. Կ'ընդունի Հայց. առաք. սբ. եկեղեցւոյ սահմանադրութիւնը եւ անոր մէջ կատարուած փոփոխութիւններն ու լրացումները:

ե. Կը սահմանէ Հայց. առաք. սբ. եկեղեցւոյ կառոյցներուն կարգավիճակը՝ հոգեւոր իշխանութեան, պատասխանատւութեան, իրարու հետ փոխյարաբերութիւններու սահմաններն ու կարգը, ինչպէս նաեւ անոնց գործունէութեան նկատմամբ վերահսկողութեան ընթացակարգերը:

զ. Կը սահմանէ այլ եկեղեցիներու, կրօնական համայնքներու, պետութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու հետ փոխյարաբերութեան հիմնադրոյթները:

է. Կը լսէ Ամենայն հայոց կաթողիկոսին, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին, Գերագոյն հոգեւոր խորհուրդին, ինչպէս նաեւ իր կողմէ ձեւաւորուած յանձնաժողովներու զեկոյցները, եւ ըստ անհրաժեշտութեան կը կայացնէ որոշումներ:

ը. Իր որոշումներուն իրագործումը վերահսկելու նպատակով, անհրաժեշտութեան պարագային, կը ձեւաւորէ համապատասխան յանձնաժողովներ:

թ. Կ'ընդունի Ազգային-եկեղեցական ժողովին կանոնակարգը:

ժ. Կ'ընտրէ Ազգային-եկեղեցական ժողովին դիւանը»:

Այսուհանդերձ, Հայ եկեղեցիին «ժողովրդավարական» բնութագիր ընծայող այս եզակի կառոյցն ալ գերծ չէ բացթողումներէ, որոնք յատկապէս վերջին շրջաններուն առաւել եւս զգալի դարձան ազգային-եկեղեցական կեանքին մէջ, եւ այս առումով յառաջացած բարդութիւնները չեն նպաստեր Եկեղեցին եւ հասարակութիւնը դրական լուծումներու ուղղորդելու:

Ազգային-եկեղեցական ժողով հրաւիրելու լիազօրութեան խնդիրը

Մայր աթոռ սբ. Էջմիածնի վերը մէջբերուած կայքէջը կը նշէ.

«Ազգային-Եկեղեցական Ժողովի նիստը կը հրաւիրէ Ամենայն հայոց կաթողիկոսը: Իսկ Կաթողիկոսական աթոռի թափուր ըլլալու պարագային Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան համար Ազգային-Եկեղեցական Ժողովի արտահերթ նիստ կը հրաւիրուի Կաթողիկոսական տեղապահին կողմէ վեց ամսուայ ընթացքին»:

Այսպէս յստակ կը դառնայ, որ Ազգային-եկեղեցական ժողով հրաւիրելու իրաւասութիւնը սահմանափակուած է բացառաբար երկու անձերու պաշտօնին մէջ՝ յանձինս Ամենայն հայոց կաթողիկոսին եւ իր վախճանման առթիւ եպիսկոպոսական արտահերթ ժողովէն ընտրուած Կաթողիկոսական տեղապահին:



Մակայն այս կանոնակարգը ինքնին կը յառաջացնէ եկեղեցաբանական եւ կառուցուածքային լուրջ խնդիր: Նախ, որ կաթողիկոսական տեղապահի գործունէութիւնը պայմանաւորուած է կաթողիկոսի վախճանումով եւ աթոռի թափուր մնալու փաստով: Պաշտօն մը, որ կը գոյատեւէ առաւելագոյնը վեց ամիս՝ մինչեւ նոր կաթողիկոսի մը ընտրութիւնը: Սոյնը կը նշանակէ, որ Ազգային-եկեղեցական նոր ժողովի մը գումարումը հրաւիրելու լիազօրուած միակ հեղինակութիւնը կը մնայ Ամենայն հայոց կաթողիկոսը:

Վերջին երկու տասնամեակներու եկեղեցական կեանքի վերվայրումները ցոյց կու տան, որ նոյնիսկ անհրաժեշտութեան պարագաներուն, երբ կաթողիկոսը կը դժկամի հրաւիրելու Ազգային-եկեղեցական ժողովի մը գումարումը, գոյութիւն ունի ոչ մէկ կառոյց իրականացնելու սոյնը՝ շրջանցելով կաթողիկոսը: Կրնայ ըլլալ, որ հայոց պատմութեան մէջ գոյութիւն ունեցած ըլլան նմանօրինակ նախադէպեր: Բայց կանոնագիտական առումով հարցը կը մնայ առկա, թէ ինչքանով իրաւասութեան հիմք ունին նման իրադարձութիւնները: Զորօրինակ՝ 1441 թուականին, երբ Սիսի մէջ Ամենայն հայոց կաթողիկոսութեան պաշտօնով տակաւին կ'աթոռակալէր Գրիգոր Թ. Մուսաբէկեանց (1439–1446), Արեւելեան վարդապետներ, Յովհաննէս Հերմոնացիի եւ Թովմա Մեծփեցիի գլխաւորութեամբ, հրաւիրեցին Ազգային-եկեղեցական ժողով եւ Էջմիածնի մէջ կաթողիկոս ընտրեցին Կիրակոս Ա. Վիրապեցին (1441–1443): Այդ ժամանակ Արեւելեան վարդապետներ ստոյգ շարժեցան «հարկ լուծանէ զօրէնս» սկզբունքով, գուցէ շրջանցելով Հայ եկեղեցոյ կանոնական կարգն ու նուիրագործուած աւանդոյթները: Միեւնոյն է, կատարուած իրողութիւնը պատմականօրէն, նաեւ Եկեղեցոյ իրաւունքի ընկալումներէն մեկնելով, կը մնայ խնդրայարոյց, որքան ալ արդարացուած ու ազնիւ ըլլային Արեւելեան վարդապետներու նման քայլի մը ձեռնարկելու դրդապատճառները:

Բաց աստի, կիլիկեան շրջանին նաեւ հայոց որոշ թագաւորներ, ինչպէս Հեթում Բ. (1266–1301) լատինասէր, Սիսի մէջ կը հրաւիրէ ժողով մը եւ 1289 թուականին աթոռագրկելով Կոստանդին Բ. Կատուկեցին (1286–1289), տեղը կը բազմեցնէ Ստեփանոս Դ. Կլայեցին (1290–1293), իսկ վերջինիս Եգիպտոս գերեվարութենէն ետք իրեն համախոհ՝ Գրիգոր Է. Անավարզեցին (1293–1307):

Որեւէ կաթողիկոս, բնականաբար, իրմէ աւելի գերադաս ժողով մը պիտի չուզէր հրաւիրել, եթէ երբեք համոզուած չըլլար, որ անոր արդիւնքը ի նպաստ իր անձին պիտի վերջանայ: Ժողով մը, որուն ինք կանոնագրային իմաստով հաշուետու է մասնաւորաբար թերացումներու, հաւատքէ անկումներու, հերետիկոսութեան, հերձուածներ ստեղծելու, կուսակրօնութեան ուխտը խախտելու, նիւթական եւ բարոյական տարատեսակ չարաշահումներու, ազգային-եկեղեցական կանոններուն եւ շահերուն դէմ գործելու փաստերու պարագային:

Մայր աթոռ սբ. Էջմիածնի կայքէջը Ազգային-եկեղեցական ժողովի իրաւասութիւններուն անդրադառնալով ցաւօք չի նշեր, որ այդ ժողովը միաժամանակ ամբողջական ու անմնացորդ լիազօրութիւնը ունի կաթողիկոսը աթոռագրկելու, երբ,– ինչպէս վերոգրեալ նշուեցաւ,– առկայ են չարաշահումներու եւ բացթողումներու ծանրակշիռ պարագաներ: Բնականաբար տրամաբանական եզրակացութիւնը այն է, որ Լուսաւորչի գահուն վրայ Ամենայն հայոց կաթողիկոս ընտրելու միակ իրաւասութիւն ունեցող կառոյցը միաժամանակ ունի ամբողջական լիազօրութիւնը նոյն կաթողիկոսը իրեն վստահուած պաշտօնէն հեռացնելու:



Այս խորապատկերին վրայ կը յառաջանայ հիմնարար եւ կարեւորագոյն ուրիշ հարց մը. արդարեւ ո՞վ է իրաւասու, որ հրաւիրել կարենայ Ազգային-եկեղեցական ժողովը, եթէ կաթողիկոսը չի կատարեր զայն, այլեւ չի հրաժարիր իր պաշտօնէն: Այսպէս, նմանօրինակ դէպքերու առթիւ, Եկեղեցին վարչական առումով խցումը կը մնայ փակուղիի մէջ: Սոյնը հասկնալի ու մեկին կը դարձնէ, որ ճգնաժամային իրավիճակներու ստեղծման պարագային Հայ եկեղեցոյ որոշումներ կայացնելու ու անոնց վերահսկողութեան հետեւելու քայլերը երաշխաւորուած չեն:

Ցաւալին այն է, որ Ազգային-եկեղեցական ժողովը իր ներկայացուցիչներու կազմութեամբ մնալուն կառոյց չէ: Այսինքն՝ կաթողիկոս ընտրելու նպատակով հայրենիքի եւ սփիւռքի թեմերէն ներկայացուած պատգամաւորները ընտրական գործընթացը լրացնելէ ետք՝ կը դադրին իրենց հանգամանքէն: Անոնց բերած առաջարկները, թէկուզ կարեւորագոյններէն շատեր, կը մնան անգործադրելի, եւ սոսկ արձանագրութիւն Ազգային-եկեղեցական ժողովի ատենագրութիւններուն մէջ:

Արդարեւ այսպէս եղաւ պարագան 3–5 ապրիլ 1995 թուականին գումարուած Ազգային-եկեղեցական ժողովին, ուր նորընտիր կաթողիկոսին հրաւերով պատգամաւորներ ներկայացուցին առաջարկներ, որոնց քննարկումը, ապա ասոնց առնչուած որոշումները կրնային ստոյգ նպաստել Եկեղեցոյ զարգացման եւ բարեկարգութեան գործընթացին: Այստեղ շահեկան պիտի ըլլայ նշել ընդամենը քանի մը օրինակ.

- «Ազգային-եկեղեցական ժողովի պատգամաւորները մինչեւ Եկեղեցական նոր սահմանադրութեան ընդունումը (երկու տարի ետք) պահեն իրենց պատգամաւոր ըլլալու հանգամանքը:
- Իւրաքանչիւր երկու-երեք տարին հրաւիրել Ազգային-եկեղեցական ժողով:
- Կաթողիկոսութեան կառավարման առաւելագոյն տարիք համարել 75-ը:
- Կատարել որոշ բարեփոխութիւններ կուսակրօնութեան ասպարեզին մէջ:
- Ամուսնացեալ քահանաները կարենան դառնալ կամ ընտրուիլ թեմակալ առաջնորդներ:
- Ամուսնացեալ քահանաները կարենան դառնալ եպիսկոպոս:
- Արժանաւոր ամուրի անձեր առանց կուսակրօնութեան ուխտ կատարելու դառնան քահանայ՝ հետագային ամուսնանալու թոյլտւութեամբ:
- Կանայք սարկաւազ ձեռնադրելու թոյլտւութեան ստացում»:

Ահաւասիկ, Եկեղեցին յուզող առաջադրուած այս հարցերէն ո՛չ մին եւ ո՛չ միւսը նկատի առնուեցան յաջորդող Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգին մէջ, յաւելեալ՝ 27 հոկտեմբեր 1999 թուականին, այսպէս կոչուած կաթողիկոսական ընտրութեան ընթացքին, Ազգային ժողովին մէջ տեղի ունեցած ահաբեկչութեան ստեղծած տխուր մթնոլորտը, հայոց պետական այրերուն դէմ իրագործուած ոճիրը գրեթէ ընդարմացուց խորքային իմաստով արդիւնաւետ ժողովականութեան աշխատանքային ծրագիրը:



Այնուհանդերձ, 6-8 յունիս 2017 թուականին Մայր աթոռ սբ. Էջմիածնի մէջ գումարուած Եկեղեցական-ներկայացուցչական Զ. ժողովը կը քննարկէ 1945 թուականին Ազգային-եկեղեցական ժողովի ընդունած կանոնադրութեան փոփոխութիւններու լրամշակուած նախագիծը: Ժողովականները քուէարկութեամբ կ'ընդունին ներկայացուած փաստաթուղթը, որ վերջնականապէս պիտի հաստատուէր յառաջիկայ Ազգային-եկեղեցական ժողովին կողմէ:

Վերատեսութեան ենթարկուած շատ մը յօդուածներու շարքին այս փաստաթուղթը կը նշէ.

«Ազգային-եկեղեցական ժողովի նիստը հրաւիրում է Ամենայն հայոց կաթողիկոսը՝ առնուազն եօթ տարին մէկ անգամ: Ամենայն հայոց կաթողիկոսը, ըստ անհրաժեշտութեան, կը հրաւիրէ նաեւ Ազգային-եկեղեցական ժողովի արտահերթ նիստ»:

Ուր տարի առաջ առաջադրուած Ազգային-եկեղեցական ժողովի նիստ հրաւիրելու վերաբերեալ այս յօդուածը Եկեղեցին վարչականօրէն կրկին կը կեցնէ փակուղիի մը առջեւ, երբ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը փաստօրէն միանգամայն կը սահմանափակէ բացառաբար կաթողիկոսի լիազօրութիւններուն մէջ: Ուրեմն լիայոյս ըլլանք եւ սպասենք յառաջիկայ տարիներու խորհրդաւոր եօթը թիւերու իրականացումին.

Ի դէպ, պէտք է նկատի առնել նաեւ հետեւեալ մտահոգիչ պարագաները.

ա. Չեմ խօսիր Հայաստանի թեմերէն ներկայացած պատգամաւորներու հետապանդած շահերուն մասին: Ներքին սփիւռքի թեմերէն՝ մասնաւորաբար Ռուսիոյ եւ Նոր Նախիջեւանի թեմերուն պատգամաւորները, որոնք լուրջ թիւ մը կը ներկայացնեն, անհաւանական չէ, որ, ի պահանջել հարկին, հետապնդեն ռուսական գաղտնի ծառայութիւններէ թելադրուած շահեր: Իսկ Հիւսիսային Ամերիկաներու, նաեւ Եւրոպայի Էջմիածնական թեմերէ ներկայացող պատգամաւորները, որոնք նմանապէս մեծ թիւ մը կը կազմեն,՝ սովորաբար անդամներ կամ համակիրներ սփիւռքեան զանազան ազգային-մշակութային կառոյցներու, այլապէս՝ տարբեր կուսակցութիւններու,՝ բնականաբար պիտի հետապնդեն իրենց պատկանած կազմակերպութեանց հետաքրքրութիւնները եւ պիտի ջանան իրագործել իրենց տրուած համապատասխան թելադրութիւններն ու հրահանգները: Այսպէս, ստոյգ խնդրայարոյց կը դառնայ Ազգային-եկեղեցական ժողովին մէջ առնուելիք որոշումներուն, նաեւ կաթողիկոսական ընտրութեան գործընթացին անաչառութիւնը:

բ. Պատգամաւորներուն ճնշող մեծամասնութիւնը անտեղեակ է Եկեղեցւոյ հնաւանդ ժառանգութեան, կանոններուն, վարդապետութեան, դաւանաբանական-աստուածաբանական դրոյթներուն, պատմութեան եւ,՝ ինչո՞ւ հեռուները երթանք,՝ իցիւ թէ գոնէ մէկ անգամ ծայրէ-ծայր կարդացած ըլլայ Աստուածաշունչը: Եօթանասուն տարի առաջուան Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցող պատգամաւորներուն, սփիւռքի մէջ երբեմնի թեմական կամ ծխական խորհուրդներու անդամներուն կրօնական բանիմացութիւնը սերնդափոխութեան հետ անհետացած է: Արդի կրթական համակարգին մէջ գրեթէ վերացած են եկեղեցական պատմութիւն եւ քրիստոնէական դաստիարակութիւն առարկաները: Հետեւաբար, այսպէս կոչուած «սրբագումար ժողովը» ինքնստինքեան կը գտնուի աշխարհիկ մտածելակերպի եւ հոգեբանութեան գերակշիռին տակ: Հայ եկեղեցին անոնցմէ շատերուն համար պատմական յուշարձան մըն է, ազգային գոյութեան կարելորդ յենասիւն մը, զոր պէտք է պահել ձեւականօրէն՝ առանց առաջնահերթ կարելորդութիւն



ընծայելու անոր հոգեւոր բովանդակութեան, ջերմեանդութեան եւ այն առաքելութեան, որ գերազանցապէս կը ձգտի Յիսուս Քրիստոսի չարչարանաց, խաչելութեան, մահուան եւ յարութեան խորհուրդներուն ընդմէջէն Աստուծոյ շնորհած սէրն ու փրկութիւնը տեսանելի ու արդիւնաւէտ դարձնել աշխարհի մէջ խօսքով, գործով, հաղորդակցութեամբ եւ վկայութեամբ:

Արդարեւ, ինչպէս նկատած ենք 1995 եւ 1999 թուականներու Ազգային-եկեղեցական ժողովներու կայացման առթիւ, մասնակցող պատգամաւորներու մեծամասնութեան մօտ եկեղեցական ասպարէզին մէջ անգիտութիւնը բացայայտօրէն Աքիլլէսեան խոցելի զարշապար մըն է, որ հեշտութեամբ կրնայ չարաշահուիլ նոյն ժողովին մասնակցող եկեղեցականներու կողմէ:

Արդ, անհրաժեշտ կը նկատուի ստեղծել հեղինակաւոր եւ անկախ մարմին մը, որ պարտի կազմուիլ աշխարհական գործիչներէ: Այս մարմինը, կաթողիկոսին եւ տեղապահին վերագրուող իրաւասութիւններէն բացի, պէտք է ունենայ եկեղեցական կեանքին մէջ ստեղծուած ճգնաժամի պարագային,– հակառակ կաթողիկոսի ընդդիմութեան կամ վերապահութեան,– Ազգային-եկեղեցական ժողով հրաւիրելու լիազօրութիւն: Սոյն մարմինը կը ձեւաւորուի յաջորդ Ազգային-եկեղեցական ժողովին ու կը դառնայ անոր ենթակառոյցը:

Հայ եկեղեցին չունի պետութեան հետ կնքուած համապատասխան պայմանագիր՝ *քոն-քորտաթ*, ինչպէս ան գոյութիւն ունի մասնաւորաբար Վատիկանի եւ շարք մը ինքնիշխան պետութիւններու միջեւ:

ՀՀ սահմանադրութեան մէջ կրօնական կազմակերպութիւններուն, ընդամին Հայ եկեղեցիին վերաբերեալ յօդուածները անոնց ամենեւին պետութեան մէջ պետութիւն մը ըլլալու կարգավիճակ չեն շնորհեր:

Հայ եկեղեցին, այս պարագային Մայր աթոռ սբ. Էջմիածինը, Վատիկանի նման եկեղեցապետութիւն մը չէ եւ պէտք չէ որ ըլլայ՝ պահելու համար իր ազգային, հոգեւոր-բարոյական նկարագիրն ու գերազանց կարեւորութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ, ինչպէս այդ մասին ամրագրուած է ՀՀ սահմանադրութեան «Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին» առանձին խորագիրը կրող 18-րդ յօդուածի առաջին համարին մէջ.

«Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպէս ազգային եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում»[5]:

ՀՀ սահմանադրութեան մէջ նշուած պետութեան կողմէ երաշխաւորուած *կրօնական կազմակերպութիւններու գործունէութեան ազատութիւնը* եւ *պետութենէն անջատ* ըլլալու փաստը կամայականութիւն չի նախադրեր: Հայաստանի մէջ գործող կրօնական կազմակերպութիւններու, ընդամին Հայ եկեղեցիին հոգեւոր առաքելութիւնը իրաւունք չի վերապահեր պետական-քաղաքական ներքին գործերուն միջամտելու եւ հակառակը՝ պետութիւնը կամ օրուան քաղաքական իշխանութեան ներկայացուցիչները իրենց կարգին ներգրաւուելու Եկեղեցոյ դաւանաբանական, ծիսական եւ հովուական հարցերուն մէջ:



Ամփոփելով՝ Հայ առաքելական եկեղեցիին նման ազգային-ժողովրդական կառոյց մը պէտք չէ 21-րդ դարու մարտահրաւերներուն դիմաց կառչած մնայ իր երբեմնի հաստատութեան, միապետական անգիջող դիրքերուն: Ժամանակակից կեանքը կը բնութագրուի ընկերային-հասարակական, գիտական, ճարտարագիտական եւ արհեստական բանականութեան ասպարէզներու աննախընթաց նուաճումներով, որոնք շարունակաբար աճող եւ նոր մարտահրաւերներ կը յղեն աւանդական կառոյցներուն՝ դնելով ազգերն ու ժողովուրդները աննախադէպ յառաջընթացի եւ ինքնորոշման լայն հորիզոններու առջեւ: Ինչքան ալ Եկեղեցին ճիգ գործադրէ իր խօսքը հաղորդակից դարձնել արդի սերունդին, միեւնոյն է, աւանդական շատ մը երեւոյթներ այնուհետեւ ընկալելի չեն հասարակութեան լայն խաւերուն: Ժողովրդավարական-սահմանադրական հանրապետութեան մէջ, ուր թափանցիկութիւնը, մասնակցութիւնը եւ բազմակարծութիւնը ընկերային-հասարակական կեդրոնական արժէքներ են, չափազանց կարեւոր է, որ Եկեղեցին ներս որոշումներու կայացումը նոյնպէս դառնայ աւելի ժողովրդավարական եւ ոչ թէ աւանդական կառոյցներէ կառչած կայանայ բացառաբար միապետական, նուիրապետական եւ, իսկութեան մէջ, կղերապետական սկզբունքով:

Առ այս անհրաժեշտ է, որ որոշակի սահմանափակուի կաթողիկոսի միահեծան հեղինակութիւնը: Այսօրուան վիճակով փաստօրէն Եկեղեցին ներս որոշումներ կայացնողը բացառաբար ինք է, իսկ իր շուրջբոլորը գտնուող կառոյցները բառացիօրէն իրեն ենթակալ եւ, խորքին մէջ, իրեն սպասարկող մարմիններ են: Վկայութիւն մը չունինք, որ այսպէս կոչուած Եպիսկոպոսաց ժողովին կամ Գերագոյն հոգեւոր խորհուրդի ժողովներէն մէկուն մէջ որեւէ եպիսկոպոս կամ աշխարհական ներկայացուցիչ հակադրուի կաթողիկոսի թէկուզ ամենաանհեթեթ որոշումին կամ կամայական ցանկութեան: Իսկ անոնք, որոնք համակարծիք չեն, բայց չեն բարձրաձայներ իրենց անհամաձայնութիւնը՝ լռելեայն սատարողներ կը հանդիսանան նուիրապետական բրգաձէլ կառոյցին, վերէն-վար թելադրուող հրահանգներուն եւ միահեծան հեղինակութեամբ կայացուած որոշումներուն: Սոյնը ենթադրել կու տայ, որ Հայ եկեղեցւոյ եպիսկոպոսները մեծաւ մասամբ, թերեւս ամբողջութեամբ, կաթողիկոսին ենթակալ պաշտօնակատարներ են եւ, հետեւաբար, հիմնականին մէջ ընդամենը կախեալ, վարչական նուաստ դեր մը կը զբաղեցնեն Եկեղեցւոյ որոշումներ կայացնելու ընթացակարգին մէջ:

Իրականութեան մէջ կաթողիկոսն ալ եպիսկոպոս մըն է Եկեղեցւոյ նուիրապետական (սարկաւազ, քահանայ, եպիսկոպոս) եռաստիճան կարգին մէջ: Ուստի ան, հակառակ իրեն շնորհուած մասնաւոր օծումին, «եպիսկոպոսապետ», «հայրապետ», «ծայրագոյն պատրիարք» եւ «կաթողիկոս» կոչումներուն, կը գլխաւորէ եպիսկոպոսաց դասը՝ որպէս *primus inter pares*, այսինքն՝ առաջինը պաշտօնով հաւասարներուն մէջ: Այսպէս, Եկեղեցւոյ իշխանութիւնը չի կեդրոնանար մէկ անհատի ձեռքին մէջ, այլ հաւասարապէս կը տարածուի բոլոր եպիսկոպոսներուն վրայ՝ բարձրացնելով Եպիսկոպոսաց ժողովի հեղինակութիւնը Հայց. առաք. եկեղեցւոյ վարչական կառոյցէն ներս:

Հայրապետական կոնդակներու վերտառութեան մէջ գործածուած «ծառայ Յիսուսի Քրիստոսի» տիտղոսը պէտք է ճիշդ ընկալել եւ իրագործել Եկեղեցւոյ կեանքին մէջ:



Իշխանատենչութիւնը յարիր չէ հոգեւոր առաջնորդի ու սպասաւորի կոչումին: Եկեղեցիին մէջ մեծութիւնը կ'իրականանայ խոնարհութեան եւ ծառայասիրութեան ճամբով: Եկեղեցւոյ առաջին սպասաւորին գերազանց կարգախօսը պէտք է ըլլայ ծառայել, քան իշխել, քանզի Յիսուսի տիրաւանդ պատգամով ան կոչուած է ոչ թէ էութեամբ ըլլալու տէր, այլ ծառայ բոլոր հաւատացեալներուն եւ Հայ եկեղեցիին: Այսպէս, վերոգրեալ կաթողիկոսի տիտղոսը կը խորհրդանշէ, որ Հայ եկեղեցիին անունով իրեն շնորհուած իշխանութիւնը ոչ թէ հարկադրող, այլ գերազանցապէս հոգացող եւ բառին բուն իմաստով որպէս հովիւ պատասպարող եւ առաջնորդող բնոյթ ունի:

Արդեօ՞ք կարիք կայ վերստին յիշեցնելու, որ Հայց. առաք. սբ. եկեղեցւոյ Ազգային-եկեղեցական ժողովը Հայ եկեղեցւոյ իրաւական եւ վարչական կառոյցին ամենահեղինակաւոր մարմինն է, որուն ճնշող մեծամասնութիւնը կազմուած է աշխարհական պատգամաւորներէ:

Հայ եկեղեցին ընդունած չէ «Պապական անսխալականութեան վարդապետութիւն»-ը, որ ԺԹ. դարուն որդեգրեց Կաթողիկէ եկեղեցին Վատիկանի Ա. ժողովին մէջ: Հայ ժողովուրդը դարերու հոլովոյթին մէջ որքան ալ մեծարած, նոյնիսկ սրբացուցած ըլլայ իր հոգեւոր առաջնորդը՝ զայն բնաւ եւ երբեք չէ նկատած անսխալական կամ անձեռնմխելի անձնաւորութիւն: Եւ յետոյ, ի՞նչ կը նշանակէ «ցկեանս»: Եկեղեցւոյ մէջ ցմահ պաշտօնավարութեան գործընթացը նոյնպէս արժանի է քննադատական մտածողութեան: Ի՞նչ կը նշանակէ այսօր մէկը ընտրել «ցմահ», այսինքն զինք պաշտօնի վրայ պահել մինչեւ անոր վախճանը: Այս հնաբոյր սովորոյթը լուրջ հարցեր կը յառաջացնէ. արդեօ՞ք նման կառուցուածք մը իսկապէս կը նպաստէ եկեղեցական կեանքի բարենորոգման եւ կենսունակութեան, թէ՞ փոխարէնը չի յանգեցներ կորդացման ու հաստատութենական կաթուածահարութեան: Ժամանակակից, աշխուժ հասարակութեան մէջ կանոնաւոր հաշուետւութիւնը, տարիքային սահմանափակումները եւ անձնակազմի թարմացումը կը համարուին ժողովրդավարական կարեւորագոյն սկզբունքներ, իսկ ցմահ պաշտօններու կառչիլը կը թուի միանգամայն ժամանակավրէպ: Այս լուրջ հակասութիւնն ու անհամապատասխանութիւնը պէտք է անպայման զգօն քննարկումներու եւ Եկեղեցիէն ներս հնարաւոր բարեփոխումներու առիթ դառնան:

Եկեղեցիէն ներս աւելի մեծ մասնակցութիւն ձեռք բերելու եւ համատեղ որոշումներ կայացնելու հնարաւորութիւններու ընձեռումը, օրինակ՝ աշխարհիկ մարմիններու ներգրաւումով, հաւատացեալներու հետ կանոնաւոր խորհրդակցութիւններով եւ հաշուետւութեան թափանցիկ մշակոյթով, Եկեղեցին ոչ միայն կ'ամրապնդէ իր հեղինակութիւնը, այլեւ կը բարձրացնէ իր հասարակական-ընկերային կեանքին մէջ ունեցած դերն ու նշանակութիւնը, նաեւ համապատասխան ճանաչումը: Միայն այն եկեղեցին, որ կաշիէ խունացած աչապահներով չի փակեր իր տեսադաշտը նոր ժամանակներուն դիմաց, նաեւ չի կոնծիր ժամանակի սկզբունքներէն թելադրուած մարտահրաւերներուն առջեւ, ընդհակառակը՝ զանոնք ամենայն յանձնառութեամբ կը համարկէ իր առաքելութեան մէջ, կրնայ լրջօրէն ճանաչում ձեռք բերել եւ ընունուիլ որպէս հոգեւոր-բարոյական



հեղինակություն ժողովրդավարական-սահմանադրական պետութեան եւ հասարակութեան մէջ:

Նկատի ունենալով Արցախի 44-օրեայ արինալի հակամարտութենէն ետք Հայաստանի առջեւ ծառացած անվտանգութեան կարեւորագոյն մարտահրաւերները, ինչպէս նաեւ հարեւան Իրանի եւ ամբողջ կովկասեան տարածաշրջանին մէջ աճող անկայունութիւնը, բաց աստի՝ առկայ ընդհանրապէս աշխարհաքաղաքական պայթիւնավտանգ իրավիճակը, ՀՀ քաղաքական իշխանութեան եւ Եկեղեցիին միջեւ կը պարտադրէ անմնացորդ ու ամբողջանուէր կառուցողական գործակցութիւն: Հայ առաքելական եկեղեցին, որպէս երկրի ամենահին հաստատութիւններէն մին, կը վայելէ պատմական վստահութիւն եւ բարոյական հեղինակութիւն Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայութեան լայն շերտերուն մօտ: Պետութեան եւ Եկեղեցիին միջեւ գործակցութիւնը՝ հիմնուած փոխադարձ յարգանքի, առողջ եւ կառուցողական երկխօսութեան, պարտականութիւններու յստակ բաժանման եւ ընկերային-հասարակական համախմբուածութեան ընդհանուր նպատակի վրայ, ստորգ, մեծապէս կը նպաստէ երկրի ներքին կայունութեան՝ մասնաւորապէս ներկայի լուրջ եւ անկանխատեսելի վտանգ ներշնչող ժամանակահատուածին մէջ:

Եկեղեցին պէտք է գործէ որպէս մշակութային ինքնութիւն ձեւաւորող ուժ՝ չմիջամտելով պետութեան կայացուցած քաղաքական որոշումներուն, իսկ պետութիւնը իր կարգին պարտի գնահատել Եկեղեցիին դերակատարութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ,– արդարեւ փաստ մը, որ վերոգրեալ տեսանք ՀՀ սահմանադրութեան համապատասխան յօդուածով,– անոր ոչ միայն անցեալին, այլեւ ներկայիս բերած բարոյական, հոգեւոր եւ մշակութային անուրանալի ներդրումներուն համար: Յատկապէս աշխարհագրական այնպիսի տարածաշրջանի մը մէջ, ինչպիսին են այսօր ամբողջ Միջին Արեւելքն ու ընդհանրապէս Կովկասը, ուր կրօնական եւ քաղաքական լարուածութիւնները առաւել եւս սրած են, աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւններուն միջեւ հաւասարակշռուած յարաբերութիւնները եւ ազգաշէն գործակցութիւնը էական գործօններ են ազգային դիմադրողականութեան ամրապնդման համար:

Հակառակ պարագային ապարդիւն պիտի ըլլան խուճապն ու սարսափի բոլոր ճիչերը՝ «Hannibal ad portas!» «Հանիպալ [իմա՝ թշնամին կը գտնուի] դարպասներուն մօտ», երբ չարաբաստիկ օր մը մեր անհանդուրժողութեան, անմիաբանութեան ու ինքնակործան վրէժխնդրութեան հետեւանքով պետութիւն եւ եկեղեցի, ազգ եւ հայրենիք բաժին դառնան անարգ թշնամիներու:

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Ժընեւ, 22 յունիս 2025

ԱՊԱԿԱՆՈՒՄՆԵՐՈՒ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ.

ԴԱՏ-ԴԱՏԱՐԱՆ, ԴԱՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ-ԴԱՏԱՎՃՈՒԹԻՒՆ,

ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆ-ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Պարոյր Յ. Աղպաշեան



Ա՛յս է Հայաստա՛ն, մեր երկիր դրախտավայրը:

Բայց, ո՞ր դրախտավայրի մասին է խօսքը. պատմակա՞ն, խորհրդայի՞ն, թե՛... այժմու:

Այո՛, կար ժամանակ, երբ մեր երկիրը, ՀԱՅՐԵՆԻՔը, դրախտավայրէն աւելի

գեղեցիկ ու գրաւիչ էր, սքանչելի ու պանծալի, մեր աչքին լոյսը, մեր դափնեպսակն ու դափնեվարդը:

Նոյնիսկ իր դաժան, բռնապետական ու հալածական ժամանակներուն, հայրենիքը կը մնար աներեր, անգին, անյաղթահարելի եւ աննկուն, որովհետեւ հայրենիք հասկացողութիւնը չէր կրնար այլ որակում ու բացատրութիւն ունենալ, ոչ ալ կրնար փոխարինուիլ օտարացումներով ու կոշտացումներով:

Վստահաբար, այս էր գիտակցութիւնը, որ հայրենիքը մնաց եւ եղաւ լուսափարոս, հոգ չէ թե՛ մերթ ընդ մերթ վիրաւորուեցաւ, ձեւափոխուեցաւ եւ այլակերպուեցաւ, բայց, առանց հրաժարելու իր էութենէն եւ ինքնութենէն, կանգունութիւնը եւ անսասանութիւնը նկատելով իր գոյութեան անկրկնելի գրաւականը, որքան ալ թունաւոր մթնոլորտները, բիրտ հարուածներն ու նենգաւոր յարձակումները փորձէին անձիտել ու հաշուեյարդել իր ներկայութիւնը:

Եթէ հայրենիքը կրցաւ դիմանալ ու տոկալ նուաճողներու ու հրոսակներու ոտնձգութիւններուն, խժոժութիւններուն ու բարբարոսութիւններուն, ատիկա կը պարտի իր հայրենասիրական, հողասիրական եւ ազգասիրական սրբութիւններուն, որոնք ոչ մէկ սակարկութեան ու պայմանաւորութեան հետ առնչութիւն ունէին, որովհետեւ, հայրենիքը գերիվեր էր որեւէ այլ նկատառումէ կամ հաշուարկումէ:

Հայրենիքը, իր կենդանութիւնն ու գոյատեւութիւնը, կենսունակութիւնն ու հրաշագեղութիւնը ամրապինդ դարձնելու համար, միշտ աչալուրջ եղաւ, իր «բազկերակ»ները բաբախուն ընթացքի մէջ պահելով, հոն տեսնելով իր ապագայի գրաւականները եւ իր յաւերժութեան երթը:

Եթէ պատահեցան արգելքներ կամ առաջացան խոչընդոտներ, ատոնք եւս պատճառ չէղան որ հայրենիքը յուսահատուի, յանձնուի այն որոգայթներուն, որոնք հիւսուած էին (կամ կը հիւսուէին) իր դէմ, որուն համար, միշտ զինուած էր, իր սրբագոյն առաջադրանքներուն պահպանումով ու գործադրումով, կառչած մնալով իր ազգային ակունքներուն, հաւատալով որ՝ միայն այդ ներշնչումներով եւ ազդեցիկութիւններով, ան կրնայ թիավարել ու խուսանաւել դէպի աւելի բարօր եւ ապահով ափեր:

Գ. Հանրապետութեան ժամանակաշրջանը, 1991էն սկսեալ, դժբախաբար, չէղաւ այնքան խոստմնալի ու բերկրալի, որքան կ'անկնկալուէր իրմէ, հակառակ որ՝ անկախութիւնը միշտ հետապնդելի ու փայփայելի երազ մըն էր, որուն հոգեւին կը տենչար հայ ժողովուրդը:

«Ինչո՞ւ»ն ունի իր տրամաբանական ու համոզիչ պատասխանները, որոնց օրին ու բազմաթիւ անգամներ անդրադարձած ենք, սակայն, մեր այսօրուան նիւթը, մեզ կը մղէ, թե՛ բարձրաձայն խորհրդածելու, թե՛ մեկնաբանելու այն լարուած ու ձգտուած վիճակին մասին, որ կը տիրէ Հայաստանի մէջ, իր քաղաքական, ապահովական ու տնտեսական, եւ առ հասարակ այն տագնապներով, որոնք Հայաստանը դարձուցած են լայնածիր ու լայնահունչ



տարածքի մը, իր անվերջանալի եւ յաջորդական բիրտ զարգացումներով, ստեղծելով խիստ անբաղձալի կացութիւն մը, իր ներքին թէ արտաքին բեւեռներով, մանաւանդ որ՝ իշխանութիւն-ընդդիմութիւն հակամարտութիւնները հասած են իրենց զագաթնակէտային ծայրայեղութիւններուն, որոնց վրայ եկաւ աւելնալու ուրիշ սուր ու բարդ օրակարգ մը. կառավարութիւն-եկեղեցի յարաբերութիւններու անհանդուրժողական պայքարով:

Այս բոլորին զուգահեռ, որ, իրօք, մտահոգիչ սահմաններու հասած է, հանրապետութիւնը, իր անկախութենէն ի վեր ու մինչեւ օրս, կը զալարուի, ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (corruption), ու ՆԵԽԱԾՈՒԹԻՒՆԸ, ՓՏԱԾՈՒԹԻՒՆՆԸ ու ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԻՒՆՆԸ են, իրենց համատարած բնոյթով ու տարողութեամբ, իսկապէս դառնալով քանդողական աղէտ մը, ինչ որ մեծապէս կը մրոտէ նաեւ Հայաստանի վարկը եւ անոր ազգային-ժողովրդական-պետական արժանապատուութեան հիմունքները:

Հարցը այն է, որ այս հիւանդագին ախտաւորութիւնը չափազանց խորացած ու տարածուած է, համարեա բոլոր մարզերէն ներս, որոնք բացայայտ են, տեսանելի ու զգալի, միանգամայն, յատկապէս պետական, նախարարական, դատական եւ իրաւաբանական շրջանակներէն ներս:

Այս աններելի եւ անընդունելի սահանքներն ու սայթաքումները մէկ օրէն միւսը չեղան, ոչ ալ ներածուեցան, այլ՝ խմորուեցան եւ աճեցան այն ժամանակներուն, երբ նախագահական վերին պաշտօնակատարները, իրենց մանկլաիկներով, հետեւորդներով, խրտուիլակներով, մերձաւորներով եւ իւրայիններով, թունաւորեցին մթնոլորտը, եղծանեցին, լրդծեցին ու պղծեցին ամէն ինչ որ պարկեշտութիւն է, մտացիութիւն, անկողմնակալութիւն, պատուաբերութիւն ու զգաստութիւն, հիմնովին ոչ-վայել քաղաքակրթեալ, քաղաքավարեալ ու բարեկրթեալ պետութեան մը արժանիքներուն:

Այս գրառումները ո՛չ շինծու են, ո՛չ չափազանցութիւն, ո՛չ ալ զրպարտութիւն, այլ՝ բացարձակ ճշմարտութիւն, մերկապարանոց իրականութիւն, թափանցիկ եղելութիւն, որովհետեւ անոնց հեղինակները, ջախջախիչ մեծամասնութեամբ, պետական այրերն են, իրենց զանազան պաշտօններով ու հանգամանքներով, պատասխանատուութիւններով ու լիազօրութիւններով:

Եթէ այս յանցագործութիւնները, անպատուութիւնները, զարշապղծութիւնները ու պարտագերծութիւնները տեղի ունեցած են (ու տեղի կ'ունենան) օր-ցերեկով, յատկապէս պետական աւագանիներու ձեռամբ կամ համաձայնութեամբ, յայնժամ պէտք է պատկերացնել, թէ այդ համակարգը որքան փճացած է, այլասերած ու գոեհկացած, որ պետականութեան ու գերիշխանութեան արժանապատուութիւնները որքան ոտնակոխուած եւ արինաքամուած են:

Այս տխուրութիւնները եւ այլանդակութիւնները, անշուշտ, սկսած ու կիրարկուած են բարձրագոյն մակարդակներու վրայ, բայց, ո՞վ ըսաւ թէ՝ անոնցմէ չեն վարակուած հասարակական խաւեր, կամայ թէ ակամայ, ուղղակիօրէն թէ անուղղակիօրէն, այսպէս թէ այնպէս, արդարանալով, որ՝ եթէ մեծամեծները այդ ուղին որդեգրած են, գողականութիւնը «օրինականացուցած», այն ատեն, ինչո՞ւ իրենք անմասն պիտի մնան այդ հրապարակային կողոպուտներէն, աւարներէն ու թալաններէն:

Միթէ պերճախօս փաստեր չե՞ն, որ երկրորդ եւ երրորդ նախագահները, արդէն «միջազգային համբաւ»ներու արժանացած են, իրենց «թալան»ային... մրցանիշներով, սակայն, ցաւ ի սիրտ, այս երկու «մաֆիոզ»ները, իրենց աւագակային զօրակիցներով, որեւէ պատժամիջոցներու չենթարկուեցան, հակառակ իրենց դէմ յարուցուած «թոն»երով ամբաստանութիւններուն, որովհետեւ դատավարութիւնները եղան կեղծ, արհեստական ու պիտակային:



Տակաւին վերջերս, ուրիշ թարմ օրինակ մը եւս պարզուեցաւ, երբ նախկին Ազգային Ժողովի նախագահ ու նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանը կալանաւորուեցաւ, իր բազմատեսակ գեղծարարութիւններուն պատճառով, սակայն, երբեք զարմանալի պիտի չըլլայ, նախորդներուն նման ան ալ ազատ արձակուի կամ տնային կապանքի տակ պահուի, ապա, կաշառքով, ինչպէս միւսները... փրկուի:

Այս է տխուր ու ցաւալի խեղկատակութիւնը, որ բոլորին աչքին առջեւ է ուր տակաւին յոխորտանք կայ, որ բոլոր «օլիկարիս»ները պիտի ստանան իրենց արժանի պատիժները:

Հեգնանք թէ՞ զաւեշտ:

Եթէ արդարութիւն եւ անաչառութիւն գոյութիւն ըլլար, յարգուէր ու գործադրուէր, այսօր, Հայաստանի բանտախուցերը, ոչ միայն բաւարար պիտի չըլլային, այլեւ պիտի յորդէին ու վիստային... չանմեղներու վռնակներով:

Պարզ ակնարկ մը, հետեւողութիւն մը, ուշադրութիւն մը հայաստանեան «չարաշխարհ»էն, արդէն բաւարար է համոզուելու, թէ ինչո՞ւ հայրենիքէն ներս ապօրինութիւնները, պարտագանցութիւնները, անիրաւութիւնները ու հակաօրինակութիւնները այսքան հող ու տեղ շահած են, իսկ անոնց դիմաց, ինչո՞ւ զսպուածութիւններն ու զգոնութիւնները չեն գործադրուած, իսկ աւելի ահաւորը, ինչո՞ւ տակաւին համակարգին մէջ, կան, կը լսուին ու կը տեսնուին, ամենէն ահաւոր օրինազանցները:

Այս ապառոջ հոսանքին դէմ յանդիման, դիտորդներ ու հետեւորդներ չ'են նկատեր, որ՝ առանց այդ ալ գլխիվայր շրջուած իրավիճակները եւ անոնց պարագլուխները հարենիքը հոս հասցուցին, եւ, ամէն ինչ որ՝ հայրենապաշտութեան ու հայրենապաշտութեան, ինքնիշխանութեան եւ ինքնատիրութեան հայոց անբեկանելի կռուաններն են, ցնցումներու ու տեղաշարժերու ենթարկուելու վտանգներու առջեւ գտնուեցան ու «տողանցք»ը... կը շարունակուի:

Այս վատահամբաւ կարգավիճակը կ'անհանգստացնէ՞, կը յուզէ՞, կը մտալկէ՞ կամ կ'ալեկոծէ՞ հայութիւնը, երբ կ'ապրի այն հիւանդկախութիւնը, որ համակած է հայրենիքը, իր պետականացման, պետականավարման ու պետականադրոշման սիւներու խախտումներով ու կաղացումներով:

Կը թուի թէ՛ այլեւ կը հաստատուի, որ պետութեան ամրակրելի եւ ամրապնդելի խարխիւները, այնքան ալ մխիթարական չեն, այլ՝ կը ծածանին ու կը ծփան, տարբեր հորիզոնականներու վրայ:

Ի վերջոյ, գերիշխանութեամբ յաւակնող պետութիւն մը, ո՞րքանով ինքզինք կրնայ նկատել հաւատարիմ իր առաքելութեան, գոյակերտութեան ու համաչափութեան, հպարտանալու կամ հարազատուելու, թէ ինք կը մնայ այդ գոյերթին ախոյեաններէն մէկը:

Այս հաստատումը կամ որակումը, ո՞ր կողմէն ալ եւ երբ ալ գայ, ան կրնա՞յ դառնալ անշեղ, անսխալ եւ անսովոր ուղիի մը յաւակնողը, այնքան ատեն, որ հայաստանեան դաշտը ողողուած ու հեղեղուած է բազմադէմ ու խայտաբղետ դիմաքանդակներով ու դերակատարներով, իրենց սեւագոյն կերպարներով ու մթնագոյն գործերով:

Այս ամբողջ փաթեթը, իր յոռեգոյն ու ծանրագոյն տուեալներով, արդէն կը յուշէ, այլեւ՝ կ'արձանագրէ, որ Հայաստանի կարգազնացքը, որուն մէջ ան կը գործէ, կ'ապրի ու կը փորձէ համակերպիլ, կը գտնուի, առնուազն, ինքզինք վերանորոգելու եւ իր նախկին տարազներէն դուրս գալու հրամայականութեան առջեւ:

Ուրիշ ի՞նչ ընտրանք կայ, որ հայրենիքը չմնայ իր մահացուական ընթացքին մէջ, երբ, յայտնի է, որ, ան չի կրնար անթացուպային տեսքով ու հեւքով շարունակել իր յարատեւութիւնն ու գոյակեցութիւնը, այնքան ատեն որ՝ զինք շրջապատող ու կարգաւորող պատնէշները կը մնան ի գորտ:



Չեմ գիտեր, ո՞վ՝ որո՞ւ համար կամ որո՞ւ կողմէ, ինչպէս կը դիտէ այն ողբերգական համայնապատկերը, երբ հայրենիքը կը ճանչցուի եւ կը յիշատակագրուի, իր ԴԱՏական կոչումներով եւ անուանումներով, ուր ամենօրեայ հերթականութեամբ, մեծամասնութիւն մը, իր առաւել կամ նուազ չափանիշներով, կը ձերբակալուի, կը խուզարկուի, կը դատակոչուի, կը տարուբերուի, կը դատուի, կը դատաքննուի, կը դատաւճռուի:

Ասիկա ի՞նչ կը նշանակէ.

Հայաստանի ժողովուրդը (մեծաւ մասամբ անմեղ թէ պարկեշտ), պէ՛տք է ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ առջեւ հերթագրուի, մինչ, իսկական անառակները, ստահակները, ցոփերն ու շուայտները, ազատ-համարձակ կը դեգերին ամենուրեք, իսկ իրենց նկատմամբ ԽՍՏԱԳՈՅՆ վճիռները կը մնան շոգիացած, որովհետեւ, ապականումի նոյն բոյնը սողոսկած է նաեւ դատարաններէն ներս, անբռնելի եւ անգուսպ նոր պատուհաս մը բեռնելով հայրենիքի ուսերուն:

(Ի դէպ, ոեւէ մէկը չկարծէ կամ չմտածէ, թէ՛ Լիբանանը, զերծ է այս բոլորէն, ընդհակառակը, հոն եւս տիրած «գոյն»ը, նոյնքան մոայլ է ու թանձր):

Յամենայն դէպս, հայութիւնը տագնապեցնողը իր հայրենիքին ՓԽՐՈՒՆ ճակատագիրն է, որուն ճիրաններէն դուրս գալու հաւանականութիւնը, ցարդ աննշմարելի է, անժամկէտ եւ անորոշ:

Վերջին հաշուով, երբ դատ-դատարանը, դատաքննութիւն-դատաւճռութիւնը, դատաւոր-դատախազութիւնը, մեղմ ըսած, ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑԱԾ են, ալ ի՞նչ կարելի է սպասել պատկան (գերեվարուած) կողմերէն, եթէ ոչ, ինչ որ, հայելիի նման պարզուած է ու շեշտուած, բացառելով այն պատուականները, արժանաւորները եւ յարգելիները, որոնք իրենց պատասխանատուութիւններուն գիտակից, արդարամիտ, անշահախնդիր, անբասիր եւ համաճառայող, հայրենիքը վեր ու հեռու կը փորձեն պահել որեւէ ստորին արկածախնդրութիւններէ, բայց, փաստ է, որ ատոնք ալ, սակաւաթիւ ու հագուագիւտ են:

(Պէյրութ)

8/7/2025

(Պրպտելու ու Կշռելու Հետքերով)

**ՔԱԼԻՖՈՐՆԻՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍԵ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷ
ԲՈՆԱԳՐԱՒՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՒԱԾՔԻ ՑԱՆԿԸ**

Յարութ Սասունեան

www.TheCaliforniaCourier.com



Լոս Անճելըսի Քալիֆորնիոյ համալսարանի (UCLA) «Խոստում» հայկական հիմնարկի ծիրին մէջ գործող Հայոց ցեղասպանութեան հետազոտական ծրագիրը (AGRP) նախորդ շաբաթ մեկնարկեց բեկումնային նախագիծ մը, որ հայերուն կարելիութիւն պիտի տայ փոխհատուցում ստանալ իրենց ունեցուածքին համար, որ



Ցեղասպանութեան ընթացքին եւ անկէ ետք բռնագրաւուած էր թրքական կառավարութեան կողմէ:

Բացի մէկուկէս միլիոն հայերու զանգուածային սպանդէն, թրքական կառավարութիւնը բռնագրաւած է նաեւ անոնց հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը, եւ բռնագրաւած է անոնց ունեցուածքը: Քալիֆորնիոյ համալսարանին շնորհակալ նախաձեռնութեան շնորհիւ՝ առաջին անգամն ըլլալով բոլոր պակսող տեղեկութիւնները հաւաքուած են մէկ շտեմարանի մէջ:

Յունիս 16-ին կայացած *ուեպինարին* ընթացքին Հայոց ցեղասպանութեան հետազոտական ծրագիրի տնօրէն, փրոֆեսէօր Թաներ Աքչամ լուսարձակի տակ բերաւ Ցեղասպանութեան ընթացքին եւ անկէ ետք համակարգուած բռնագրաւումն ու վերաբաշխումը հայկական հարստութեան, զոր թրքական կառավարութեան կողմէ նկարագրուած է իբրեւ «լքուած ունեցուածք» (Emval-i Metruke):

Անկախ թուրք հետազոտող Սայիթ Չեթինօղլուն տարիներ տրամադրած է հաւաքելու այս գոյքերուն վերաբերող կառավարութեան աճուրդի յայտարարութիւնները, որոնք 1920-ական եւ 1930-ական թուականներուն հրապարակուած էին թրքական 34 մեծ ու փոքր քաղաքներու տեղական թերթերուն մէջ: Չեթինօղլուն այս յայտարարութիւնները յանձնած է Քալիֆորնիոյ համալսարանին, որ թուայնացուցած եւ թարգմանած է զանոնք օսմաներէնէն ժամանակակից թրքերէնի եւ անգլերէնի: Անոնք հասանելի են հետեւեալ հասցեով՝ www.international.ucla.edu/armenia/stolenarmenianproperties:

Համալսարանի կայքին վրայ տեղադրուած 31 էջերէ բաղկացած համապարփակ զեկոյցին մէջ Չեթինօղլուն եւ Աքչամը մանրամասն կերպով նկարագրած են թրքական կառավարութեան հակասական եւ խաբուսիկ հրամանները՝ բռնագրաւուած հայկական ունեցուածքի տնօրինման վերաբերեալ. «1915 թուականի մայիս 27-ին տրուած է պաշտօնական հրաման, որմէ կարճ ժամանակ ետք սկսած է հայկական ունեցուածքի լայնածաւալ բռնագրաւումը: 31 մայիս 1915-ին օսմանեան նախարարաց խորհուրդը հրապարակած է հրամանագիր մը, որ պաշտօնապէս կը կարգաւորէ հայկական կալուածներու «բռնագրաւումը», որուն յաջորդած է 10 յունիսի աւելի մանրամասն 34 յօդուածէ բաղկացած հրամանագիրը: Ամրան ընթացքին տարբեր նահանգներ ուղարկուած են յատուկ շրջաբերականներ, որոնք իրենց լրումին հասան 26 սեպտեմբեր 1915-ի պաշտօնական օրէնքով եւ նոյն թուականի նոյեմբեր 8-ի կիրարկման հրամանագիրով: Այս օրէնքներն ու հրամանագիրները կը սահմանեն, որ հայկական բոլոր շարժական եւ անշարժ գոյքերը պէտք է արձանագրուին պաշտօնական գրանցամատեաններու մէջ, եւ անոնց արժէքը պէտք է հատուցուի հայերուն՝ իրենց նոր բնակավայրերուն մէջ... [Սակայն], Օսմանեան արդարադատութեան, ելեւմուտքի եւ ներքին գործոց նախարարութիւններուն միացեալ յանձնաժողովի 1918 թուականի զեկոյցին մէջ յստակ նշուած է, որ ոչ մէկ հայ փոխհատուցում ստացած է իր բռնագրաւուած ունեցուածքին համար: Փաստօրէն օսմանեան պետութիւնը դարձած է ... աւարի գլխաւոր շահառուն՝ օգտագործելով այս կալուածները եւ անոնց վաճառքէն ստացուած եկամուտները պետական տարբեր հաստատութիւններ ֆինանսաւորելու համար»:

Չեթինօղլուն եւ Աքչամը բացատրած են, որ 1922-ին՝ Օսմանեան կայսրութեան փլուզումէն ետք, նորաստեղծ Թուրքիոյ Հանրապետութիւնը «վերահսկողութիւն հաստատեց մնացած հայկական ունեցուածքի մեծ մասին վրայ: Սակայն նորաստեղծ պետութիւնը դիմագրաւեց ֆինանսական մեծ դժուարութիւններ: Իբրեւ հետեւանք՝ 1923-էն սկսեալ պետական տարբեր հաստատութիւններ սկսան աճուրդի հանել այդ թալանուած հայկական ունեցուածքը: Այս



վաճառքներուն մասին պաշտօնական ծանուցումները պարբերաբար կը հրապարակուին թրքական տեղական թերթերուն մէջ»:

Օրինակ, 14 սեպտեմբեր 1931-ին «Տիարպէքիր»ի (Տիգրանակերտ) թերթին մէջ յայտարարուած է, որ 17 սեպտեմբեր 1931-ին ածուրդ պիտի կատարուի Ալի Փինար գիւղին մէջ գտնուող Օհանի դստեր՝ Հաթունի (Խաթուն) անունով արձանագրուած տան, որ 20 լիրայով վաճառուած է Քարա Քիլիսէի գաղթականներէն Շէյմուսին (Ահմետի որդիին):

Հաշուարկուած է, որ բռնագրաւուած հայկական ընդհանուր ունեցուածքը, որոնց մէջ հարիր հազարաւոր տուներ եւ շէնքեր, գործարաններ, հանքեր, մէկ միլիոնէ աւելի ակր հողատարածք, խաղողի այգիներ, ձիթենիի այգիներ, թթենիի այգիներ, շուրջ 2500 եկեղեցիներ եւ 1000 դպրոցներ այժմ հարիրաւոր միլիառ տոլարներ կ'արժեն:

Բռնագրաւուած հայկական ունեցուածքը բաշխուած էր թրքական տարբեր կառոյցներու: Ըստ Չեթինօղլուի եւ Աքչամի, «ինչպէս Միութիւն եւ յառաջադիմութիւն կոմիտէի ժամանակաշրջանին», Թուրքիոյ Հանրապետութիւնը այս ունեցուածքներուն մէկ մասը փոխանցած է «ընկերութիւններուն՝ ազգային արդիւնաբերութիւնը եւ իսլամական քաղքենիութիւնը զարգացնելու համար, իսկ մէկ մասն ալ յատկացուած է Հանրապետական ժողովրդական կուսակցութեան՝ այդ ժամանակաշրջանի միակ կուսակցութեան... Անշարժ բազմաթիւ գոյքեր, ըստ անհրաժեշտութեան, բաշխուած են տարբեր հաստատութիւններու, ինչպէս՝ միութիւններու, պետական հաստատութիւններու, քաղաքապետարաններու, առեւտուրի պալատներու, արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան, Կարմիր մահիկին եւ դրամատուներուն: Մէկ խօսքով, կարելի է ըսել, որ [թրքական] հասարակութեան իւրաքանչիւր հատուած օգտուած է հայկական ունեցուածքէն»:

Քեմալական ժամանակաշրջանին բռնագրաւուած հայկական կալուածները բաշխուած են հետեւեալ կերպով.

- 1.- «Հողի վաճառք եւ բաշխում իսլամներուն»,
- 2.- «Յատկացում եւ վաճառք ներգաղթեալներուն (մուհաժիր)»,
- 3.- «Փոխանցում եւ յատկացում պետական հաստատութիւններուն»,
- 4.- «Յատկացում զինուորականներուն»,
- 5.- «Յատկացում եւ վարձակալութիւն դրամատուներուն, Առեւտուրի պալատին եւ ապրանքներու փոխանակման»,
- 6.- «Վաճառք՝ ընկերութիւններուն»,
- 7.- «Յատկացում, վարձակալութիւն եւ վաճառք վարչակազմին կապուած հաստատութիւններուն, ինչպէս՝ Թրքական օճախին, Կարմիր մահիկին, Ուսուցիչներու միութեան եւ Տրապիզոնի մարզական ակումբին»,
- 8.- «Յատկացում Միութիւն եւ յառաջադիմութիւն երիտթուրքական կուսակցութեան ղեկավարներու ընտանիքներուն», որոնք սպաննուած են հայերուն կողմէ, ինչպէս՝ Թալէաթ եւ Ճեմալ փաշաները, Ճեմալ Ազմին եւ Պեհաէտտին Շաքիրը՝ համաձայն 1926 թուականի մայիս 31-ին Թուրքիոյ խորհրդարանին կողմէ որդեգրուած օրէնքին:



Այժմ հայ համայնքին պարտականութիւնն է առնել Քալիֆորնիոյ համալսարանին կողմէ հաւաքուած այս արժէքաւոր տեղեկատուութիւնը եւ դատ բանալ Թուրքիոյ դէմ Միացեալ Նահանգներու դաշնակցային դատարաններուն մէջ՝ պահանջելով արդարացի փոխհատուցում բռնագրաւուած հայկական ունեցուածքի համար:

Ինչպէս գրած էի նախորդ ամիս, ամերիկահայերը պէտք է կոչ ուղղեն ամերիկեան Քոնկրէսին՝ որդեգրելու օրէնք մը, զոր պէտք է ստորագրէ Միացեալ Նահանգներու նախագահը, եւ որ՝ կարելիութիւն պիտի տայ դատական հայցեր ներկայացնելու Թուրքիոյ Հանրապետութեան դէմ՝ բռնագրաւուած գոյքի դիմաց փոխհատուցում ստանալու համար: Այս նոր օրէնքը հայերուն կարելիութիւն պիտի տայ դատական հայցեր ներկայացնելու վաղեմութեան ժամկէտի աւարտէն շատ աւելի ուշ:

Միացեալ Նահանգներու դատարանները կրնան օրինական կերպով պարտադիր վճիռներ կ'այացնել՝ պահանջելով Թուրքիայէն փոխհատուցում վճարել հայերուն անոնց կորուստները եւ համար: Եթէ Թուրքիան մերժէ կատարել այդ պահանջը, դատարանները կրնան որոշում տալ Միացեալ Նահանգներու մէջ գտնուող եւ թրքական կառավարութեան պատկանող

բոլոր սեփականութիւններու, օրինակ՝ շէնքերու, դրամատնային հաշիւներու եւ Թրքական օդանաւային ընկերութեան պատկանող օդանաւերու բռնագրաւման վերաբերեալ:

Քալիֆորնիոյ համալսարանը՝ իբրեւ ակադեմական հաստատութիւն, իր աշխատանքի բաժինը կատարած է հայ ժողովուրդին կողմէ բռնագրաւուած ունեցուածքի այս արժէքաւոր ցանկը պատրաստելով: Այժմ հայ համայնքին կարգն է դատական գործողութիւններու սկսելու՝ Թուրքիայէն լիարժէք փոխհատուցում պահանջելու համար:

27/6/2025

ՊՐԻՍՄԱԿԷՍ

ՈՉ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ



Մարուշ Երամեան

13 Յունիս 2025-ին սկսած Իրան-Իսրայէլ պատերազմին 10-րդ օրը հետեւեալ յայտարարութիւնը կը լսենք, յայտարարութիւն, որ խորքին մէջ ամփոփում մըն է, սակայն շլմորեցնող եւ քիչ մըն ալ անհասկնալի.

«Իսրայէլ կը հարուածէ Իրանը, Իրան կը հարուածէ Իսրայէլը, Ամերիկա կը հարուածէ Իրանը, Իրան կը հարուածէ

Քաթարը, Ամերիկա շնորհակալութիւն կը յայտնէ Իրանին, Իրան ներողութիւն կը խնդրէ Քաթարէն. Քաթար կը միջնորդէ զինադադարի համար, Իսրայէլ շնորհակալութիւն կը յայտնէ Քաթարին. Քաթար շնորհակալութիւն կը յայտնէ Իրանին, իսկ Ամերիկա կ'աւետէ՝ խաղաղութիւնը սկսաւ...»:

Բան մը հասկցա՞ք...



Ժողովուրդը չի գիտեր ի՞նչ ընել, որո՞ւ դէմ պատերազմիլ՝ փորձանքի՞ն, տգիտութեան՞, համաճարակներո՞ւն, սղաճի՞ն թէ անմարդկութեան... Մարդկային պատմութեան մէջ ասկէ աւելի դառն ժամանակաշրջան չէ եղած:

Այս ըսողները կ'երեւի ծանօթ չեն այն օրերուն, երբ Բրիտանական կայսրութեան մէջ մարդու միս ... կը վաճառուէր, որովհետեւ... սպանուողները շատ էին, իսկ ուտելիք չկար...

«Սուրիան պարտուեցաւ մամուլի ճամբով, Իրաքը պարտուեցաւ մամուլի ճամբով, Ալճերիան պարտուեցաւ մամուլի ճամբով, Եգիպտոսն ալ պիտի պարտուի մամուլի ճամբով, զինուորական կերպով պարտուելէն առաջ», կ'ըսէ այս օրերուն վիստացող քաղաքական մեկնաբաններէն մէկը: Ինչո՞ւ: Որովհետեւ արաբական բոլոր երկիրները ուշք չդարձուցին մամուլին, մամուլի պատերազմին, որ նորօրեայ գէնքերէն մէկն է, գլխաւորը, եթէ ոչ հզօրագոյնը...

«Միբելի Ամերիկա,- կ'ըսէ իրանցի դեռատի աղջիկ մը,- անցնող 200 տարիներուն դուն խաղաղութիւն եւ տէմոքրըսի բերիք, շնորհակալ ենք, բայց... հիմա ատենն է որ փոխադարձենք՝ կը խնդրենք որ ալ փոխես արտաքին քաղաքականութիւնդ. դո՛ւրս ելիր այս շրջանէն, դո՛ւրս ելիր Միջին Արեւելքէն. այս երկիրը չի նմանիր Միջին Արեւելքի մնացեալ երկիրներուն. Իրանը կա՛ր, կա՛յ եւ պիտի՛ մնայ... Իրանը չի՛ սիրեր յարձակիլ, քանդել, պատերազմիլ. Իրանի ժողովուրդը խաղաղասէր ժողովուրդ է, ոչ թէ քեզի նման՝ վայրագ, պատերազմներու սիրահար...»:

Պ՛էտք է իմանանք, թէ «Մարդկային կարեկցանքին անհետ կորսուիլը, բարբարոսութեան մէջ իյնալու եզրին գտնուող մշակոյթի մը առաջին նշաններէն մէկն է»:

Մարդկային կարեկցանքը սակայն վաղուց է որ անհետ կորսուեր է, նորութիւն չես ըսեր, տիկին փիլիսոփայ Հաննա Ա.

Սպանիոյ վարչապետը կասեցուցեր է տնտեսական յարաբերութիւնները Իսրայէլի հետ...

«Իսրայէլի սիբելի համակիր. ծանր լուր մը ունիմ քեզի տալիք. գիտե՞ս թէ ինչ պատահեր է երէկ Նիւ Եորքի մէջ... Ջահրան Մամտանի, իսլամ գաղթականը, որ թունդ ընդդիմադիր է սիոնիստականութեան, ընտրուեր է Նիւ Եորքի քաղաքապետ, Նիւ Եորքի մէջ, ուր հրէական մեծ գաղութ կայ եւ ուր 700 հազար հրեայ ընտրութեան մասնակցեր է... Ասիկա ի՞նչ կը նշանակէ. կը նշանակէ թէ կարելոր փոփոխութիւններ տեղի կ'ունենան... Ճշմարտութիւնը կը կորսուի, կը կորսուի եւ ի վերջոյ ինքզինք կը գտնէ ո՞ւր... զանգուածային գերեզմաններու մէջ...»:

Ինչո՞ւ համար Արեւմուտքի մէջ կան բազմաթիւ կեղրոններ իսլամութիւնն ու արաբականութիւնը ուսումնասիրելու համար, իսկ արաբական երկիրներուն մէջ մէկ հատ նման կեղրոն չկայ: Ինչո՞ւ: Որովհետեւ այնտեղ հաճոյքի կեղրոններ կան միայն...

Այս ամբողջ իրարանցումին մէջ յիմար, անտրամաբանական, անհաւատալի լուր մը շրջան կ'ընէ ընկերային ցանցերուն վրայ՝ Ամերիկայի Քոնկրէսը որոշում գոյացուցեր է -թիւ H.R.1161 (կրնաք ճշդել), նախագահ Թրամփին արտօնութիւն տալ Կրին Լէնտը գնելու եւ անունը փոխելու, թէւ Կրին Լէնտը ըսած ըլլայ՝ «Մենք ծախու չենք...»: Եւ նախագահ Թրամփ ի՞նչ անուն որոշեր է Կրին Լէնտին համար... Կարմիր-Ճերմակ-կապոյտ երկիր Red White and Blue land...

«Ամերիկան ներսէն կը քանդուի կոռուրտութեամբ» կը ճչայ մէկը, որովհետեւ բոլոր անոնք, որոնք պաշտօնականօրէն կեցութեան իրավիճակ չունին, դուրս դրուեր են: Ասոր հետեւանքը այն եղեր է, որ սեւ աշխատանք կատարողները պակսեր են... Կրնաք ստեղծուած քառսը պատկերացնել:

Ի՞նչ հետաքրքրական է, որ Իսրայէլ բոլոր միջոցներով փորձեց պաղեստինցիները դուրս քշել երկրէն, բայց հիմա իսրայէլցիները իրենք են, որ գաղթականութեան ցուպը առած դուրս կու գան իրենց խոստացուած երկրէն (promised land)...



«Ինձի եթէ մնար, անցեալները, երբ Իրան հարիւրաւոր ռումբեր կ'արձակէր, մէկն ալ «սխալմամբ» կրնար Ազատ մզկիթին վրայ իյնալ, հիմնայատակ կործանել զայն եւ տեղ պատրաստել Երրորդ Տաճարին համար», կը յայտարարէ հրեայ լկտի քաղաքագէտ մը, որ նաեւ պետական պաշտօն ունի:

«Ես զիրենք Իսրայէլէն դուրս կ'ուզեմ տեսնել. ասոր համար կրնանք օգտագործել ամէն միջոց, ինչպէս օրինակ արգիլել բոլոր մարդկային օգնութիւնները. եթէ աշխարհի երկիրները զիրենք շատ կը սիրեն, շատ կը մեղքնան, թող իրենց քով առնեն»: Ասիկա ըսողը՝ Տանիէլլա Վայս (Daniella Weiss), թեկնածու է այս տարուան Նոպէլեան... խաղաղութեան մրցանակին, for her decades-long efforts in strengthening Jewish communities and promoting regional stability...: Ասկէ աւելի վաւերական զուէշտ տեսա՞ծ էք: Բարեբախտաբար տակաւին կա՛ն բաց աչքերով դէպքերը դիտող մարդիկ, որոնք փոթորիկ բարձրացուցեր են ընկերային ցանցերուն վրայ այս խայտառակ թեկնածութեան համար, որ առաջարկուեր էր իսրայէլեան երկու համալսարաններու կողմէ: Հաւանաբար թեկնածութիւնը մերժուի:

Իսկ Քանատայի պետութիւնը ճիգ կը թափէ պաղեստինեան ինքնութիւնը ջնջելու, Պաղեստին ծնած անձերուն արգիլելով Պաղեստինը յիշել իրենց նորոգուած անցագրերուն վրայ, որպէս ծննդավայր: Պատմողը դեռատի գանատուի մըն է, որ Քանատա ծնած իր մեծ մօր օրինակը կը բերէ, ցոյց կու տայ հին անցագրին նկարը, ուր յստակօրէն նշուած է՝ ծննդավայր՝ Ալ Պասսա Պաղեստին եւ կ'ըսէ՝ «Ասկէ ետք Քանատայի մէջ արտօնուած չես Պաղեստին ծնած ըլլալ»:

Սպանիոյ մէջ շրջանէ մը ի վեր խաչմերուկներու լոյսերուն կարմիրին վրայ գրուած է՝ Stop Israel, իսկ կանաչին վրայ՝ Free Palestine: Յիշեցում, որ ճշմարտութիւն ըլլալուն, թէեւ յիշեցումի պէտք չէ կարօտի, բայց դժբախտաբար այդպէս չէ:

Հրեայ թղթակից Կիտէն Լէվի կ'ըսէ.

«Երեք սկզբունքային պատճառներ, որոնք հրեաները կը մղեն առանց խղճահարութեան ապրելու այս ահաւոր վայրագութեան մէջ.

Ա. Գրեթէ բոլոր իսրայէլցիները, եթէ ոչ բոլորը, խորապէս կը հաւատան, թէ իրենք Աստուծոյ ընտրեալ ազգն են, եւ կը տրամաբանեն՝ եթէ Աստուծոյ ընտրեալներն ենք, ուրեմն իրաւունք ունինք մեր ուզածը ընելու:

Բ. Պատմութեան մէջ շատ աւելի վայրագ պատերազմներ եղած են. աւելի երկար գրաւումներ եղած են, թէեւ այսօր Իսրայէլ իր գրաւումը կրնայ որպէս մրցանիշ դիտել: Բայց չէ՛ եղած պատմութեան մէջ այնպէս, որ գրաւողը ինքզինք ոչ միայն որպէս զոհ ներկայացնէ, այլ որպէս ՄԻԱԿ զոհը ներկայացնէ: Ասիկա պատճառ կը դառնայ որ իւրաքանչիւր հրեայ իր կեանքը հանդարտօրէն, առանց խղճահարութեան շարունակէ:

Գ. Երրորդն ու ամենէն վտանգաւորը՝ հերթականօրէն պաղեստինցիները ներկայացնել որպէս ոչ-մարդկային արարածներ... որովհետեւ եթէ անոնք ան-մարդկային արարածներ են, եթէ անոնք մեզի հաւասար մարդ չեն, ուրեմն մարդկային իրաւանց հարց չի մնար»:

Jeffrey Sachs (1) «Կը կարծեմ թէ կարելոր է գիտնալ, թէ այս պատերազմը ուրկէ՛ կու գայ. անիկա կու գայ Ուաշինկթընէն, ուր 2011 թուականին որոշուած էր գահընկէց ընել նախագահը: Խորքին մէջ սակայն որոշումը կու գար... Երուսաղէմէն, Իսրայէլի պետութեան փափաքը եղած է 25 տարիէ ի վեր. Նաթանիահուն կ'ուզէր Միջին Արեւելքը Իսրայէլի պատկերով «կերտել», քանդելով երկիրը շրջապատող մնացեալ երկիրները, որոնք հակառակ եղած են Ի.ին. Օպամային օրերէն ասիկա որոշուած է, CIA-ի միջոցով ճիհատիսթներ մտցնել երկիրը եւ քառս ստեղծել: Սուրիոյ պատերազմը մէկն է ծրագրուած վեց պատերազմներէն, Լիբանանի, Լիպիոյ, Իրաքի, միակ պատերազմը, որ չպատահեցաւ, Իրանի հետ էր (ինչ որ այսօր արդէն կատարուած իրողութիւն է...): Գործողութիւնը կը կոչուէր operation timber sycamore, որուն համար Ուիքիփետիան կ'ըսէ.

««Timber sycamore»-ը զենքի գաղտնի մատակարարման եւ վարժեցման ծրագիր էր, որ կը վարէր ԱՄՆ-ի Կեդրոնական հետախուզական գործակալութիւնը (CIA) եւ որուն կ'աջակցէին Մեծ Բրիտանիայի եւ որոշ արաբական հետախուզական ծառայութիւնները, ինչպէս Սէուտական Արաբիոյ հետախուզութեան ծառայութիւնը: Ծրագրին նպատակն էր Սուրիոյ նախագահը իշխանութենէ հեռացնել»:

Եւ վերջապէս՝ հրեայ երիտասարդ մը նկարեր է դիտելու հարթակ մը (viewing platform), ուր իսրայէլացիք կ'երթան Կազգայի ոմբակոծումները դիտելու... No comment.

(1) Ճեֆրի Տէյվիտ Սաքս ամերիկացի տնտեսագէտ եւ հանրային քաղաքականութեան վերլուծաբան է, փրոֆէսոր Քոլումբիայի համալսարանէն ներս, ուր նախապէս տնօրէն եղեր է: Աշխատեր է կայուն զարգացման եւ տնտեսական զարգացման թեմաներու վրայ:

<http://www.kantsasar.com/news/56356-2/>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Առաջին անգամ ըլլալով, Տուպայի մէջ, Հայաստան - Ազերպայճան ամենաբարձր մակարդակի հինգ ժամ տեւողութեամբ բանակցութիւններ ընթացան առանց մեծ պետութիւններու միջնորդութեան, որոնց աւարտին հրապարակուած կարճ հաղորդագրութիւնը հաստատեց Հայաստանի համար վճռորոշ

դիւանագիտական յաղթանակ մը՝ Սիւնիքի միջանցքի հաղորդակցական ուղիներու Հայաստանի ինքիշխանութեան եւ իրաւագործութեան ներքոյ գործարկումը: Դիքորոշում մը որ Հայաստանի իշխանութիւնները 2020ի պատերազմէն ի վեր հետեւողական կերպով պաշտպանած են, հակառակ Ռուսաստանի եւ Ազերպայճանի անդուլ ջանքերուն՝ պարտադրելու ռուսական վերահսկումը՝ Սիւնիքէն անցնելիք ճանապարհին, որ իրարու պիտի կապէ Ազերպայճանի երկու հողամասերը. եւ հակառակ Հայաստանի մէջ ընդդիմադիր ճակատի անվերջ պնդումներուն, ըստ որոնց իբրեւ թէ Հայաստանի իշխանութիւնները զիջած են «Զանգեզուրի միջանցք»ը թուրքեւազերական գոյզին:

Ռուսաստան ինչպէ՞ս պիտի հակազդէ Ազերպայճանի զիջումին՝ «Զանգեզուրի միջանցք»ի վերահսկումը իրեն յանձնելու մասին իրենց պայմանաւորութեան լոյսին տակ:

Արդէն, Տուպայի հանդիպումին նախորդող շաբաթներուն Ռուսաստանի մէջ ազերիներու լայնածաւալ ձերբակալութիւնները կը յուշէին որ ռուսազերական մեղրալուսինը սպառած է: Ազերական AZAL օդային ընկերութեան Պաքու-Կրոզնի գիծը ապահովող օդանաւին հրթիռակոծումը եւ ջախջախումը անցեալ Դեկտեմբերին սկիզբը հանդիսացաւ երկու երկիրներու յարաբերութիւններու վատթարացման: Ազերպայճան ալ իր կարգին հակազդելով Ռուսաստանին, ռուսերու հանդէպ հալածանքները սաստկացուց: Ազերիներու ինքնավստահութիւնը կու գայ Թուրքիոյ անոնց շնորհած անսերեւեթ նեցուկէն, ինչպէս նաեւ Իսրայէլի հետ տնտեսական ու ռազմավարական շահերով պայմանաւորուած սերտ յարաբերութիւններէն, Արեւմուտքի համար ուժանիւթի այլընտրանքային աղբիւր հանդիսանալու հանգամանքէն: Արցախի հայ բնակչութեան ցեղային գտումին՝ միջազգային



դատապարտումի բացակայութիւնն ալ կը վկայէ արեւմտեաններուն մէջ Ազերպայճանի վայելած նեցուկին մասին: Իսկ ռուսական բանակի հեռացումը Արցախի տարածքէն՝ Ազերպայճանին տուաւ յաւելեալ առաւելութիւն մը՝ չեզոքացաւ ռուսական անմիջական յարձակումի մը վտանգը:

Ռուսական դիրքին կարծրացումը կարելի է բացատրել միջազգային մի քանի ազդակներու շաղկապումով՝ ուքրաինական ճակատին անոր ձեռք ձգած յաջողութիւններով, ԱՄՆու՝ իր պատմական դաշնակիցներուն դէմ շուկայական յարաբերութիւններու մէջ հաստատած պարտադրանքներով, որոնք լրջօրէն տկարացուցին արեւմտեան ճակատի մարտունակութիւնը, մինչ միւս կողմէն ալ՝ BRICSի շրջանակին մէջ Ռուսաստանի ռազմավարական գործակցութեամբ Իրանի եւ Չինաստանի հետ՝ ձեւաւորուեցաւ հակաարեւմտեան միջազգային նոր հարթակ մը:

Հայազերական մերձեցումը սրեց նաեւ հայ-ռուսական յարաբերութիւնները՝ որուն անմիջական դրսեւորումներէն են՝ Եկեղեցի-Կառավարութիւն, Սամուէլ Կարապետեան-Կառավարութիւն հակադրութիւնները, որոնք 2026ի ընտրութեան սեմին ալ աւելի սրանալու նախադրեալներ կը ցուցաբերեն:

Թրամփի վերընտրութենէն ի վեր անոր հռչակած բոլոր խաղաղութեան նախաձեռնութիւնները ձախողութեան մատնուած են, բացի հայազերականէն, որ յաջողութեան հնարաւորութիւն ունի, եթէ գործընթացը իր բնական հունով ընթանայ: Սակայն, Ռուսաստան իր ձեռքին տակ ունեցած բոլոր միջոցները պիտի գործածէ զայն ձախողեցնելու համար:

Թէեւ ԱՄՆ ոչ մէկ լուրջ դերակատարութիւն ունեցած է Տուպայի հայ ազերական բանակցութիւններու յաջողութեան մէջ, բայց եւ այնպէս նախագահ Թրամփի ինքն իրեն վերագրած յաջողութիւնը աւելի կը սրէ Հայաստանի հանդէպ Ռուսաստանի անհանդուրժողութիւնը, կատարուածը համարելով ռուսական ազդեցութեան գօտին սահմանափակելու նպատակ հետապնդող գործողութիւն:

ԺԻՐԱՅՐ ՉՈԼԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

16/7/2025

ՏԵՍԱԿԷՏ

ՓԱՇԻՆԵԱՆԻ «ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ- ԻՆՉ Է ԵՒ ԻՆՉ ՉԷ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ

Վերջին տարիներուն, Հայաստանի քաղաքական դաշտին մէջ յատկանշական տարածում սկսած է գտնել «Իրական Հայաստան» կոչուող գաղափարախօսութիւնը: Ան յայտնապէս կ'անշուի վարչապետ Փաշինեանի եւ անոր քաղաքական շրջանակին: Ի տարբերութիւն մեր ազգային գաղափարախօսութեան, այս մէկը փիլիսոփայական եւ գործնական խոր դատարկութիւն մը կը ներկայացնէ իր ոգիով ու բովանդակութեամբ:

Նիկոլ Փաշինեանի իշխանութեան որդեգրած «Իրական Հայաստան» գաղափարախօսութիւնը, իբրեւ արդիական, իրապաշտ եւ պետականամետ մօտեցում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգային յենքերը վերաձեւող քաղաքականութեան ծրագիր: Ան կը մերժէ հայութեան պատմական յիշողութեան, հոգեւոր ժառանգութեան եւ աշխարհասփիւռ ինքնութեան բազմաշերտ իրողութիւնը:



«Իրական Հայաստան»ի գաղափարախօսութիւնը կը տարածէ այն պատկերացումը, թէ պետութիւնը պէտք է ըլլայ ոչ միայն կառավարչական համակարգ, այլ նաեւ միակ ճանաչելի եւ օրինական յենքը, որ կը որոշէ ի՛նչ է ընդունելի՝ պատմութեան, մշակոյթի, հոգեւոր եւ քաղաքականութեան ոլորտներուն մէջ, ինչը՝ ոչ: Այսինքն՝ պատմական ճշմարտութիւնները, ազգային նպատակներն ու յիշողութիւնը այլեւս չեն հիմնուիր ժողովրդական գիտակցութեան վրայ, այլ՝ պետական հրահանգով ձեւաւորուած նոր ցուցմունքներու:

Պետական դիրքորոշումը կը դառնայ բացառիկ իրաւունք ունեցող ձայն՝ որոշելու, թէ որ պայքարը կամ յիշողութիւնը «ընդունելի» է, կամ՝ ոչ : Արցախի հերոսամարտը, Յեղասպանութեան պատմական արդարութիւնը եւ Սփիւռքի ձայնը կը մղուին արհամարհանքի, մոռացութեան կամ քարոզչական «վերամշակում»ի դաշտ: Փաստօրէն ճշմարտութեան եւ արժէքներու գնահատման միակ ուղեցոյցը պիտի ըլլայ պետութիւնը, ուրիշ՝ ոչ ոք:

Փաշինեան յաճախ կը շեշտէ քաղաքացիին գերակայութիւնը՝ «բոլոր հայերը հայ չեն, բոլորը հաւասար են» սկզբունքով: Սակայն այս հաւասարութեան տակ կը ջնջուի մեր ազգային ոգին: Քաղաքացիական պետութիւնը, որ կը ձգտի պատկանելութիւն ստեղծել միայն անձնագրով, հայ ըլլալը կը դարձնէ պատմական եւ հոգեւոր բովանդակութենէ զուրկ դատարկ կարգավիճակ:

Հայ ինքնութիւնը բազմաշերտ երեւոյթ մըն է՝ ներառելով հայերէն լեզու, հայկական Եկեղեցի, պատմական յիշողութիւն, ցեղասպանութենէն վերապրող ժողովուրդի հոգեբանութիւն, աշխարհասփիւռ համայնքներու , հայապահպանում, ներգաղթ դէպի Հայաստան եւ այլն: «Իրական Հայաստան»ը այս բոլոր շերտերը կը խեղդէ պետական յարմարեցում յայտարարի մը տակ, որ կը մերժէ աւանդական ինքնութեան ազատ հոսքը:

«Հայաստանի քաղաքացին է գերագոյն արժէքը» նշանաբանը կ'արտայայտէ հայ ըլլալը վարչական ոչ թէ հոգեւոր կամ մշակութային երեւոյթ տեսնելու մօտեցումը:

Այս տրամաբանութեամբ, ՀՀ անցագիր չունեցող Ստեփանակերտի հայը կամ Պէյրութի հայ մտաւորականը, կը նկատուին ոչ լիարժէք հայ:

Երբ պետութիւնը կը դառնայ միակ չափանիշը ազգային ըմբռնումին, կը բացառուին այն ուժերը, որոնք անկախ գործելաձև ունին կամ անբաժանօրէն կապուած են ոչ-պետական տարածքներով: Այս մօտեցումով՝ Արցախը կը ներկայացուի «բեռ», Սփիւքը՝ «անտեղեակ» կամ «խանգարող» տարր: Այսինքն՝ միայն Հայաստանի Հանրապետութեան ներսի քաղաքացին կը նկատուի լիարժէք անդամ, իսկ դուրսը մնացողները՝ երկրորդական դերակատարներ::



Արցախը՝ իբրեւ ինքնիշխան պայքարի ձայն, եւ Սփիւռքը՝ իբրեւ հոգեւոր եւ տնտեսական հարստութեան շտեմարան, դուրս կը մղուին Փաշինեանի կառուցելիք «պաշտօնական ազգի» պատկերէն: Այդ բացառումը կ'արտայայտուի իշխանութեան լռութեամբ ու քաղաքական վարքագծով՝ Արցախի թալանուող իրաւունքներէն մինչեւ Սփիւռքի անտեսումը ազգային օրակարգին մէջ:

Այս տեսլականով, Արարատը հաւանաբար դառնայ անցեալին «եկած» գեղարուեստական խորհրդապատկեր, ոչ համազգային խորհրդանիշ: Սուրբ Էջմիածինը՝ կը նսեմանայ իբրեւ հոգեւոր հեղինակութիւն, իսկ Հայոց Յեղասպանութիւնը՝ իբրեւ համաշխարհային արդարութեան հետապնդում, կը դառնայ հրապարակային յիշատակութիւն, ոչ՝ պահանջատիրական պայքար:

Այսպէս, «Իրական Հայաստան»ը ոչ թէ համախմբող ու ամրապնդող, այլ՝ ազգային արժեքներէ, խորհրդանիշներէ հեռանալու ծրագիր: Ան կը միտի հայ ժողովուրդին արմատները գրկել իր տարածական խորութենէն (Արցախ, Սփիւռք, Արարատ), հոգեւոր բովանդակութենէն (Աւանդութիւն, Եկեղեցի, գոհողութիւն), եւ պատմական պահանջներէն (Յեղասպանութիւն, վերադարձ, անկախութիւն):

Նշեալ կեղծ փիլիսոփայական վարկածները, որքան ալ արդի բռնապաշարով հնչեն, խորքին մէջ կը միտին ապագային եւ ինքնութենէ զուրկ հաւաքականութեան մը վերածել մեր հայրենիքը: «Իրական Հայաստան»ի այն տրամաբանութիւնը, որ՝ «Արցախը Հայաստան չէ» կամ՝ «Սփիւռքը իրաւունք չունի միջամտելու», աշխարհաքաղաքական ինքնութեան փոխարէն, պատահականութեան լքուած վարչական տարածքի մը պիտի վերածէ Հայաստանի սահմանները:

Այս հեռանկարով, հայրենի հողը պիտի դատարկուի ամենայն հայոց նպատակակէտը ըլլալու խորհուրդէն : Նոր մեկնաբանութեամբ եւ պարզ խօսքով՝ հողը միայն «սահմանադրական տարածք» մը պիտի դառնայ: Եթէ թուրքն ու ազերին մեզմէ զիջում պահանջեն, պէտք է ըլլալ «իրատես» ...: Պետական մակարդակով ազգային գաղափարախօսութեան բացակայութիւնը տուեալ երկիրը պիտի գլորէ անդունդ:

«Իրական Հայաստան»ի գաղափարախօսին բոլոր տեսութիւնները կը միտին հնարաւոր եւ անհնար միջոցներով երկարաձգել անոր իշխանութիւնը: Զարմանալի չէ՝ «Իրական Հայաստան»ի գաղափարախօսութեան հիմունքները յայտնապէս կը ծառայեն թուրք-ազերիական միասնութեան պահանջներուն:

Փաշինեանի առաջադրած «Իրական Հայաստան»ը համախմբելու փոխարէն բաժանումի եւ անջատումի նոր սերմեր պիտի ցանէ արդէն իսկ դժուար հայ իրականութեան մէջ: Անոր կաղապարին մէջ ձեւուած «Նոր» հայը խզուած պիտի ըլլայ Սփիւռքէն, Արցախէն, Արարատէն եւ ազգային յիշողութենէն:

«Իրական Հայաստան»ը կը հետապնդէ իրականութեան ժխտումով կառուցուած պետութիւն մը, (տարակուսելի տնտեսապէս պահպանելու իր գոյութիւնը), սակայն իբրեւ հայրենիք, զուրկ՝ արմատներէն, առաքելութենէն եւ ժողովուրդի վստահութենէն:

Փաշինեանի «Իրական Հայաստան» կոչուած գաղափարախօսութիւնը խորքին մէջ կեղծ մտահայեցողութիւն մըն է, կառուցուած՝ պարտուողականութեան, ազգային, աւանդական եւ պատմական արժեքները ժխտող հիմունքներու վրայ: «Նոր» հայու գաղափարախօսութեան դէմ պայքարը Սփիւռք- հայրենիք միասնականութեան, ազգային գոյատեւման սրբազնագոյն հրամայական մըն է մեր ժողովուրդին համար:

Առանց պատմութեան եւ պատմական յիշողութեան, ժողովուրդ մը ամբոյս է: Առանց հողի պետութիւնը՝ վարձու շէնք: Առանց տեսլականի հայրենիքը՝ ուրիշներու շահին ծառայող անցողիկ կայարան:

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆԻ ՇԵՄԻՆ. Ո՞Ր ԵՆՔ ՄԵՆՔ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԵՒ ԻՆՉ ԿԸ ԲԱՆԻՆՔ

Տեսաբան ըլլալու կարիք չկայ տեսնելու համար, որ ութսուն տարիէ վեր հռչակուող երրորդ համաշխարհայինը ենթադրութիւն չէ, ան սկսած է: Բեմը զբօսավայր դարձած լրատուամիջոցները եւ գուարճութեան անդուռ համացանցը չեն միայն: Հանդիսատես ենք, մեծ ու պզտիկ, ներքաշուած ենք պատերազմի մէջ: Աշխարհի քարտէսին առջեւ կանգնինք եւ նշենք այն երկիրները, ուր արդիական զենքերով կռիւներ կը մղուին: Վայրեր, որոնք պայթունավտանգ են: Ինչ որ տեղի կ'ունենայ Ուքրանիա եւ Ռուսիա, Իրան, Միջին Արեւելք, Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ, Ափրիկէ, նախերգանք է: Երաշխիք չկայ, որ երկու գերիզօր պետութիւններ՝ Չինաստան եւ Միացեալ Նահանգներ, Թայուանի համար համաշխարհային խարուկահանդէս պիտի չբռնկեցնեն:



Վիճակագրութիւն սիրող քաղաքակիրթ աշխարհը ինչո՞ւ գոհերու թիւերով չի խօսիր, չըսեր, թէ ամէն օր, անանուն պատերազմներու մէջ, գոհուողներու թիւի ընդհանուր գումարը ինչ է: Ռուսիա եւ Ուքրանիա հազարաւոր դիակներ կը փոխանակեն: Կը խօսին, եւ կը լսենք այնպէս՝ կարծէք այդ թիւերու ետին մարդիկ եւ կեանքեր չըլլային: Հազարաւոր մղոններ իրարմէ հեռու, Իսրայէլ եւ Իրան կը պատերազմին, ռումբերով, հրթիռներով

զիրար կը հարուածեն, քաղաքներ կը քանդեն, ամէն օր եւ ամէն ժամ մարդիկ կը սպաննուին: Միացեալ Նահանգներու իշխանութիւնը չի վարանիր արտակարգ հզօրութեամբ ռումբեր գործածել: Սարսափի հիացումով տեսանք:

Լսելով եւ հեռատեսիլի պատկերներ դիտելով՝ վկայ ենք հարաւէն հիւսիս ներխուժման մարդկային ահեղ ալիքին, որ, կրկին, իր անունը չըսող պատերազմ է, այսօր՝ գաղթականութիւն, վա՞ղը...

Այս ընկերային, քաղաքակրթական, ծաւալապաշտական, տիրակալական, շրջանային եւ մասնակի թուացող պատերազմները եւ ժողովուրդներու զանգուածային տեղաշարժերու հետեւանքները եթէ գումարենք, կը ստացուի համաշխարհային պատերազմ: Հարց տանք. արդէն դասական համարուող «համաշխարհային»-ներէն տարբեր եւ աւելի հզօր իրապէս համամոլորակային, նոյնիսկ՝ տիեզերական, պատերազմը սկսած է: Ահագնացող գուպար կայ, քանի որ, զարմանալի թող չթուի, վաղը պատերազմ կրնայ տեղի ունենալ լուսնի եւ Հրատի վրայ:

Ի՞նչ կը բանինք մենք՝ բուռ մը հայ ժողովուրդ, մեր Հայաստանի վերջին բեկոր հանրապետութեամբ, աղմկող բազմապատիկ, մէկ բեւեռէ միւսը, արեւելքէն արեւմուտք տարածուող, յարաճող-նօսրացող բազմանուն սփիւռք(ներ)ով: Ի՞նչ պատկերացում ունինք անորոշ հասցէներու վերածուած ՀԱՅ ԱԶԳԻ ներկայի եւ գալիքի մասին, այս կ'ընենք՝ դիրքերէ եւ անհատականէ անդին չնայող փառասիրութիւնները մոռնալով:

Գալիքը կրնա՞նք դիմաւորել առանց միաւորման եւ կանխատեսութեան:



Հայաստանի վերջին բեկոր հանրապետութեան եւ բազմանուն-բազմացող սփիւռքի մէջ կարծէք այլեւս անհնար դարձած է նոյն ուղղութեամբ նայելու ողջախոհութիւնը: Հայրենատէր ժողովուրդ չենք: Եթէ չենք հասկցած, որ պատմութեան արկած սփիւռք(ներ)ը հայրենիք չէ, ան գաղթականի եւ քոչուորի բնակավայր է: Հայեր կը գաղթեն հանրապետութենէն, ապա կը գաղթեն մէկ համայնքէ միւսը, նոր համայնքներ կը ստեղծեն, վարձու սենեակներ, ուր հիւր են, զորս կը համարեն «հայրենիքի մասնաճիւղ» եւ «հանգամանաւոր»-ներու ծնունդ կու տան: Նոր եւ հայրենահանուածներու սփիւռքները կարծէք կը գտնուին զուարճացող զբօսանաւի մը վրայ, որ դէկ չունի, ունի դէկեր:

Այս մասին իր «Գիրք լինելութեան» մէջ գերիբատես խօսք ունի հայրենի գրող Վիգէն Խեչումեան: Ըսած է. «Օտարի դրանք քեզ կը կոչեն հիւր, որպէսզի չասեն ծառայ»: Կարծէք «գաղթականութիւն»-ը ազգի լինելիութեան վիճակ է, որ վաղ թէ ուշ պիտի յանգի չլինելիութեան: Մինչ այդ մեր կեանքը կը խռովի ճիշդի ու սխալի անվերջանալի վէճերով, որոնք պիտի աւարտին, երբ խաղցողներ մնացած չըլլան: Ոչ հեռաւոր անցեալին հայրենահանուածները իրենք զիրենք կը կոչէին՝ վանեցի, մշեցի, այնթապցի, մարաշցի, սասունցի, հիմա այդ անուանումները մոռցուած են, կ'ըսենք՝ ֆրանսացի եմ, ամերիկացի եմ, քանատացի եմ, որդեգրած են աշխարհագրական բազմանուն ինքնութիւններ, որոնց մէջ պիտի մանրուի եւ անհետանայ հայը՝ իր լեզուով, մշակոյթով, ինքնութեամբ, իրաւունքով, կամայ կամ ակամայ համարկուելով աշխարհագրական այս կամ այն պարունակին:

Եթէ հայ ինքնութիւնը ազգի ըմբռնումով անդրադառնանք կացութեան, եթէ դեկավարութիւնները անդրադառնան, անդրադարձած ըլլային ժամանակի եւ պահու թելադրած քաղաքական-գաղափարախօսական հրամայականներուն, Հայաստանի վերջին բեկորին տէր կ'ըլլայինք՝ ո՛չ դիրքապաշտութեամբ եւ ո՛չ ընչաքաղցութեամբ, այլ՝ խմբուելով եւ խմբելով, մէկտեղելով ուժեր եւ կարողութիւններ, ո՛չ յաւելեալ զանազան իրաւունքներու համար, այլ՝ ազգի եւ հայրենիքի հանդէպ գոյութենական պարտքի:

Աջ եւ ձախ, ներսը եւ դուրսը, չենք ուզեր տեսնել, որ համաշխարհայինը սկսած է, զայն կոչեցէ՛ք կայսերական կամ կրօնական պատերազմ, ինչպէս որ կ'ուզէք: Կողմ ըլլալու համար ուժ չենք, կողմերուն համար թիւի լրացում ենք: Ինչպէ՞ս ՀԱՅ ԿՈՉՈՒԱԾ ԱԶԳ-ը, իր պարտութիւններ դիմակայող փոքրացած-փոքրացող երկրով, ուրկէ բացակայ են սփիւռք(ներ)ը եւ հայրենիք լքողները, որոնք բազմութիւն են, բայց ազգի տեսանկիւնէ սոսկ միգամած են, պիտի մնան պատմութեան բեմին վրայ:

Միալներ գործուած են, կը գործուին, պիտի գործուին, քանի որ տեւաբար չբաւարարուած ԵՄ-երու թատրոն կը սարքենք թաքցնելու համար պարտութիւն եւ նահանջ, ոչ ոք կ'ըսէ՝ հուսկ ո՞ւր հասնելու համար: Այս կացութիւնը կը բացատրէ ամէն տեսակի ընչաքաղցութիւն եւ դիրքապաշտութիւն, մի՛շտ ներսի եւ դուրսի: Նոյն հունով, ինքնախոստովանութիւն ընելէ կը խուսափինք, կը վերացնենք ամէն կարգի հեղինակութիւն, ան ըլլայ քաղաքական, կրօնական թէ բարոյական, անմիջականին զոհելով գալիք եւ ազգի էականը: Այս բոլորին ամենաթողութեան հանդէպ Հայաստանի Ազգային ժողովն է, նաեւ՝ ընդհանրապէս հայկական մամուլը, հեռատեսիլը, անդուռ համացանցը եւ հայրենասիրական «տուրիզմ»-ը:

Կը խօսինք վերականգնումի մասին: Չենք ըսեր՝ ինչպէ՞ս, քանի որ այդ ընելու համար «արժեքային համակարգ»-ով պէտք է առաջնորդուիլ, որպէսզի դուրս գանք պարտութիւն-պառակտումի սաղայելի շրջանակէն: Իսկ մենք տեւաբար կը քանդենք արժեքային համակարգը, կ'անտեսենք որակը:



Մեզի կը պակսի հիմնական-հիմնարար առաքինութիւնը, հռոմէացիին «վիրթուս»-ը (virtus), որ եսը գերանցող հոգեկան ուժն է: Մեր լինելիական ներկային մէջ այդ կանխատեսման միացման եւ առաքինութիւնն է, առանց որուն՝ ինչպէ՞ս եւ որպէս ի՞նչ պիտի հասնինք դարավերջ, որ ազգի վաղն է եւ հեռու չէ: Եթէ նախատեսելու եւ միացնելու յանձնառութեամբ չառաջնորդուինք եւ չառաջնորդենք, չին իմաստուն Կոմիտիկոսը պիտի չգայ ըսելու, թէ ի՞նչ պիտի ըլլանք եւ ո՞ր պիտի հասնինք: Երբ դադրինք մենք ըլլալէ, պատմաբաններ տեղ մը պիտի արձանագրեն, թէ եղած ենք, պիտի ըլլայ սոսկ պատմական յիշեցում, պիտի չըլլան մշեցիներ, սասունցիներ, կիլիկեցիներ, պիտի չըլլան արտագաղթած գիւմրեցիներ, երեւանցիներ, աշտարակեցիներ:

Հայկական պետութենէն եւ սփիւռքի բազմանուն ղեկավարութիւններէն պատասխանի կը սպասէ հետեւեալ հարցումը. ի՞նչ ըրած են եւ կ'ընեն բնակեցման եւ հայրենադարձութեան համար: Մի՞թէ Արցախը կը կորսնցնէինք, եթէ, ներսը եւ դուրսը, ունեցած ըլլայինք իսկական հայրենատիրական բնակեցման քաղաքականութիւն:

Ընդդէմ պարտութեան եւ պառակտումի, գոյութենական փակուղիէն դուրս գալու հրաշքը կրնանք իրականացնել կանխատեսման եւ միացման յանձնառութեամբ: Այս ո՛չ որ պիտի ընէ մեր փոխարէն: Միացնել այսօ՛ր: Վաղը ուրիշ մեծ միացումներ եղած կ'ըլլան: Մենք կը մոռցուինք ճամբեզրին: Եւ կ'ըլլան նոր անուններով անժառանգ կուշտ յետնորդներ:

Սփիւռքը ո՛չ հայրենիք է եւ ո՛չ ալ ազգ: Ան բազմադէմ հանգամանաւորներու աղմուկ է՝ վասն լաւ ապրելու: Հայ ազգի լինելիութեան տեսանկիւնէ ի՞նչ է անոր վաղը...

Ի՞նչ կը բանինք: Զիրար կը հալածենք, կը վարկաբեկենք: Վերջին թատրոնը Հայաստանեայց եկեղեցին է: Կարծէք մեզ հարուածելու եւ պատմութեան բեմէն հեռացնելու համար թշնամիի գրոհի կարիք չկայ, այդ մենք կ'ընենք: Աւանդութիւն է: Մենք պահանջեցինք հայ Արշակունի թագաւորի գահընկեցութիւնը, Հայաստանի խորհրդայնացման առաջին օրերուն, «Կոմունիստ» թերթը գրեց, որ յեղափոխութիւնը չի յաջողիր, եթէ «չիռսի հայ պուրժուա»-ի արիւնը: Այդպէս եղած ենք:

Ախտաւոր հոգեբանութեան սադայէլի շրջանակէն ազգը դուրս հանող եւ համացանցի եթերին մէջ չթափառող նոր օրերու նախախնամական մարդակերտը կը սպասուի: Ան միացեալ եւ նոյն ուղղութեամբ նայող հանրապետութեան եւ սփիւռքի թմբիրէ արթնցած ժողովուրդն է, որ հրաշք պահու մը ինք պիտի հնչեցնէ արթնութեան փող եւ զանգ:

Յիշե՛լ եւ յիշեցնե՛լ, որ վաղը ուշ է:


Յակոբ Պալեան

14 Յուլիս 2025

ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վերնագիրը ինքնին անհեթեթ է, հակասական և ոչ արժանահաւատ: Եկեղեցին ընդհանրապէս պետք չէ գրադի քաղաքականութեամբ: Ո՞ր դարուն մէջ կ'ապրինք: Գիտութիւնը այսօր այնքա՛ն զարգացած է, իսկ կրօնքի նշանակութիւնը զգալիօրէն նուազած: Արդի աշխարհի պետութիւններէն միայն Իրանի Իսլամական Հանրապետութիւնն է, որ կը կառավարուի «շարիա»-ի օրէնքներով և կը տարածէ իր ազդեցութիւնը շիայի

Ճիհատիստներուն վրայ: Մեռտի Արաբիան ժամանակէ մը ի վեր սկսեալ է որոշ ազատութիւններ շնորհել իգական սեռի ներկայացուցիչներուն և կաշխատի չառնչուիլ միջազգային ահաբեկչութեան հետ: Տարբեր է Թիւրքիոյ պարագան: Ան կը յաւակնի ստանձնել տարածաշրջանի առաջնորդի դերը և հաւասարապէս կ'օգտագործէ իսլամական կրօնքը և փանթուրքական գաղափարները՝ իր ծաւալապաշտական նկրտումներէն ելլելով: Ինչ կը վերաբերի պաղեստինցիներու ապրելու իրաւունքները խլած Իսրայէլին՝ թէպէտ մովսիսականութիւնը իրենց կրօնքն է, սակայն պետութիւնը չ'առաջնորդուիր «Թորա»-ի օրէնքներով: Թորան եբրայեցւոց դաւանանքի սուրբ գիրքն է: Ինչքան իրատեսական է ուրեմն, որ Հայաստանեայց աննշան Առաքելական Եկեղեցին փորձէ իշխանութեան պարտադրել իր խաղի կանոնները: Ունի՞ այնքան ազդեցութիւն և ոյժ, որ ներկայացնէ թէ՛ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները և թէ՛ աշխարհասփիւռ հայութեան տարբեր յարանուանումները: Թէ կը պատկերացնէ թէ միայն ինքը ունի ճշմարտութեան բանալին:



ՀԱԵ պատմութեան ընթացքին եղած է շատ երեքուն և յարափոփոխ: Բաւական է մտածել որ ան միշտ հետեւեր է քաղաքական էլիթին և միշտ փոխեր է իր նստավայրը՝ տեղափոխուելով քաղաքէ քաղաք: Արդարեւ, Քրիստոնէութիւնը Հայաստանի պետական կրօնքը հռչակուելէն ետք 301 թուին, Տրդատ Գ. Արշակունին և Գրիգոր Լուսաւորիչ հայրապետը յաջողեցան ամրապնդել կռուախնձոր դարձած Հայաստանի անկախութիւնը: Մէկ ազգ և մէկ կրօնք կարգախօսը կրցեր էր ժամանակաորապէս փրկել մեր հայրենիքը հարեւաններու ոտնձգութիւններէն: Աւելի ուշ, իր փառասիրութեան համար, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Անիի բանալիները յանձնէր է Բիւզանդիոնին: Բազրատունեաց

հարստութեան անկումէն ետք, երբ Կիլիկիոյ մէջ վերստին ամրացաւ հայոց պետականութիւնը, կաթողիկոսարանը Վաղարշապատէն փոխադրուեցաւ Կիլիկիոյ մայրաքաղաքը՝ Միս: Խաչակրաց արշաւանքներու ժամանակ, կաթողիկէ և հայ եկեղեցիները կը մերձենան ի գին կաթողիկէ յարանուանութեան մուտքին ի Կիլիկիա: Կիլիկիոյ անկումէն ետք, կաթողիկոսարանը դարձեալ կը վերադառնայ Էջմիածին/Վաղարշապատ:

Այսօր մեր փոքրիկ ազգին համար մեծ շոյալութիւն է ունենալ երկու կաթողիկոսներ՝ յանձինս Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ին: Նոյնպէս իրարմէ անկախ կը գործեն Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի չենթարկուող հայկական պատրիարքութիւնները՝ ինչքան ալ որ Էջմիածնայ վեհափառը ինքզինք անուանէ «ծայրագոյն պատրիարք»: Անունով չէ՛ այլ հեղինակութեամբ ու գործով: Ասոնց վրայ եթէ գումարենք նոր օծուած կուսակրօն «սրբազան» արքեպիսկոպոսներն ու գերաշնորհ եպիսկոպոսները, հոգեշնորհ վարդապետներն ու ծայրագոյն վարդապետները, կուսակրօն արեղաններն ու աշխարհ տեսած արժանապատիւ քահանաները, բարեշնորհ սարկաւազներն ու դպիրները, ապա կ'ունենանք ընդարձակ, բաժան-բաժան եղած անգէն խաչակրաց բանակ մը: Անդին, օլիկարիսներն ու ազգային ջոջերը զբաղած են նոր եկեղեցիներ կառուցելով՝ փոխանակ եղածները վերանորոգելու...: «Լուսաւորչական» կամ

«ուղղափառ» եկեղեցականներէն զատ ունինք հայ կաթողիկէ հոգեւորականներ, բողոքական վերապատուելիներ և «կասկածելի» Եհովայի վկաներ և ուրիշ աղանդաւորականներ: Քրիստոնէայ հայերէն բացի, գոյութիւն ունին Համշէնի իսլամացած հայերը և անշուշտ անթիւ-անհամար անհաւատ, անաստուած, անկրօն աթէիստները:

Ի՞նչ գործ ունի առհասարակ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պետականաշինութեան մէջ: Մա՛նչ բնական է, ո՛չ ալ բանական:

Համեմատութեան համար, օրինակ պիտի բերեմ Շուէտի պետական Եկեղեցին (Svenska Statskyrkan): Ան ունի ընդամենը մէկ առաջնորդ արքեպիսկոպոս, ով արժանաւոր Ուփսալա քաղաքէն կը հսկէ երկրին մէջ գործող աւետարանական հաւատամքը: Նախկին արքեպիսկոպոսը, ով հերթականութեամբ երկրի 70-րդն էր, առաջին կին հոգեւորականը եղած է, ով արժանացած էր այդ պատուաբեր բարձր պաշտօնին՝ վաստկելով հաւատացեալ ընտրողներու ձայներուն մեծամասնութիւնը (53 %):

Քրիստոնէութիւնը մուտք գործած է հեթանոս վիթինկներու ժամանակ, Ք.Ե. 1050 թուին կաթողիկ վանական Olaus Petri-ի կողմէ, որ եկած էր Հռոմէն: Սակայն քրիստոնէութիւնը որպէս կրօնք անցած է զարգացման տարբեր փուլերէ: Մարտին Լութերի կրօնական թեզերը պատճառ կը հանդիսանան, որ պապական բանակները իրենց օղակները սեղմեն հիւսիսի բողոքականներուն շուրջ: Երեսուն տարիներու տեւական պատերազմը վերջ կը դնէ կաթողիկոսեան և Հիւսիսի երկիրները կը հիմնեն իրենց ազգային եկեղեցիները և ազգային գրականութիւնը: Աւետարանը կը թարգմանուի մայրենի լեզուներուն և ծիսակատարութիւնները տեղի կունենան բոլորին համար ըմբռնելի մայրենի լեզուներով: Շուէտական Պետական Եկեղեցին այսօր զուտ կրօնական հաստատութիւն մըն է, որ կը քարոզէ Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը, առանց շահարկումներու: Ան բնաւ չի միջամտեր պետական կառավարման. ոչ ալ կը խառնուի աշխարհիկ գործերու:

Չնայած արձանագրուած գիտական նուաճումներուն և դէպի անջրպետ արձակուող արբանեակներուն՝ ՀԱԵ-ն ի զուր կը յամառի վերականգնելու իր երբեմնի փառքը: Տարօրինակ չէ ուրեմն՝ ինչո՞ւ աղանդաւորները կը շատնան մեր երկրէն ներս և ինչպէ՞ս կը յաջողին հոգեւորսով զբաղելու՝ ներքաշելով բնակչութեան խոցելի մասը, այնինչ ՀԱԵ պարտաւոր էր փրկել իր հօտը ուժացումէ: Հաւատք, յոյս և սեր քարոզելով՝ խօսքէն պէտք է անցնին գործի: Եկեղեցին նախ և առաջ պէտք է դառնայ հոգեւոր հաստատութիւն, որպէսզի տարածէ Յիսուսի սիրոյ պատգամը իր հետեւորդներուն: Ան պէտք է զբաղուի բարեգործութեամբ, հասնելով աղքատներու կարիքներուն, կերակրէ անօթիներուն և գիշերելու տեղ յատկացնէ անօթեւաններուն: Մեր մակարոյծ կղերականները հարուստ ձեռնարկատէրեր են և ընդհանրապէս աղերս չունին իրաւական պետութեան հետ:

ԱՐԱՄ ԱՃԵՄԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՄԿԱՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ



Եթէ փորձենք վերլուծել Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակը, կարելի է տեսնել ոչ միայն արտաքին մարտահրաւերները, այլև հասկնալ մեր ուժերն ու բազում խոցելի կողմերը:

Պատերազմը, այնուհետև տեղի ունեցող գործընթացները փաստ են, որ մեր շրջապատի

քաղաքական կշիռները արագ կը փոխուին, հետեւաբար պարտաւոր ենք



հետեւողականօրէն վերախմաստաւորել մեր դաշնակցային եւ ռազմավարական մօտեցումները:

Նախ ընդունինք, որ այլեւս անկարելի է անվտանգութիւն ապահովել ներգրաւուած ըլլալով մէկ դաշնակցային կառոյցի մէջ (եւ ի՞նչ կառոյց...): Ժամանակն է առանց արտաքին կախուածութեան որդեգրել ռազմավարական բազմակողմանիութիւն, ինչպէս նաեւ, որ աւելի էական է, արագ քայլերով հասնիլ դիւանագիտութեան եւ սեփական ուժերու կառուցման:

Խիստ անհրաժեշտ է մեր քաղաքական ու տնտեսական զարգացման ռազմավարութիւնը համադրել արտաքին քաղաքական ոյժերու հետ, որպէսզի կարելի ըլլայ ստեղծել ա՛յն կայուն հասարակութիւնը, որը ի գօրու կ'ըլլայ դիմադրելու եւ դիմանալու ճգնաժամերուն: Իսկ այս կը նշանակէ՝ կրթութեան, գիտութեան, երիտասարդութեան ծրագրերու, ինչպէս նաեւ համահայկական ներդրումներու խթանում...:

Յուսահատութիւնը հեռու է լաւ խորհրդատու ըլլալէ, մենք ապագային պէտք է նայինք գիտակցելով, որ յաճախ գերտերութիւնները փոքր երկիրները կը դիտարկեն որպէս շահերու դաշտ, սակայն պատմութիւնը լաւագոյն ցուցիչն է այն բանին, որ մեր ոյժին չափանիշը չեն կրանք ըլլալ ո՛չ պատերազմները, ո՛չ ալ պարտութիւնները:

Այս պահուս, երբ աշխարհաքաղաքական քարտեզը կը վերաձեւուի, Հայաստանը կանգնած է նոր կարելիութիւններու եւ մարտահրաւերներու դէմ-յանդիման:

Փաստօրէն, մենք ոչ միայն պէտք է արձագանգենք փոփոխութիւններուն, այլեւ պարտաւոր ենք ըլլալ նախաձեռնող, ունենալով յստակ **տեսլական** եւ **համախմբուածութիւն**:

Այսօր աշխարհը կ'ապրի ժամանակահատուած մը, երբ համաշխարհային կայուն կարգը՝ ձեւաւորուած Պաղ պատերազմի աւարտէն ետք, կը փլուզուի: Ամերիկեան գերիշխանութեան շրջանին հաստատուած կանոնները կը խախտուին՝ ռազմաքաղաքական նոր կեդրոններու, շահերու բախման եւ մեծ պետութիւններու մրցակցութեան պատճառով: Իսկ այս գործընթացներուն կեդրոնը, լուր ու միայնակ, մեր երկիրն է՝ Հայաստանը: Իր չափերով պզտիկ, ան գոյութեան արդար իրաւունքով յայտնուած է տարածաշրջանային եւ համաշխարհային շահերու խաչմերուկին վրայ:

Հայաստանը չի փոխեր աշխարհի կշիռը, բայց աշխարհի կշիռը անդադար կը փոխէ Հայաստանը:



Երբ աշխարհի տարբեր անկիւններուն մէջ կը բռնկին պատերազմներ՝ Ուքրանիա, Մերձաւոր Արեւելք, Ափրիկէ, երբ նոր տնտեսական եւ էներգետիկ դաշինքներ կը ձեւաւորուին, փոքր պետութիւնները յաճախ կը մնան մինակ՝ գոյատեւելու, կողմնորոշուելու եւ արժանապատուութիւնը պահելու բարդ ընտրութեան դիմաց: Հայաստանը բացառութիւն չէ:

Մեր երկիրը գոտիի մը մէջ է, ուր առկայ են մէկ քանի ազդեցիկ ոյժերու շահեր՝ Ռուսաստան, Թուրքիա, Իրան, Արեւմուտք: Իւրաքանչիւր ոյժ, ամէն մէկը իր ձեւով, Հայաստանը կը դիտէ որպէս գործիք, ելլելով իր իսկ ռազմավարական օրակարգէն: Բայց մենք պէտք չէ մոռնանք, թէ ինչ է ինքնիշխանութիւն ունենալը: Այդ կը նշանակէ, թէ մերն է որոշումը ինչպէս ապրիլ, ով ընտրել որպէս բարեկամ եւ ինչ ճամբայով քալել:

2020 թուականի պատերազմէն ետք ակնյայտ դարձաւ ճշմարտութիւն մը, որուն մասին երկարատեւ լուր մնացինք. աւանդական «դաշնակից» Ռուսաստանը այլեւս պատրաստ չէ պաշտպանելու Հայաստանի շահերը: 2023-ի Սեպտեմբերին, երբ Արցախը բախեցաւ իր տիրույթի ճակատագրին, շատ աւելի յստակ դարձաւ Հայաստանի մեկուսացումը: Հայ հասարակութիւնը սկսաւ մտածել ոչ միայն անվտանգութեան, այլեւ աշխարհաքաղաքական պատկանելութեան մասին: Ո՞ր է մեր տեղը... Ռուսական ազդեցութեան գոտիի՞ն, թէ՞ Արեւմուտքի ժողովրդավարական համակարգին մէջ: Թէ՞ մեր ապագան պէտք է կառուցենք շատ աւելի բարդ ու ճկուն հաւասարակշռութեամբ...:

Յետպատերազմեան հոգեբանական ծանր հետեւանքներ, ընկերային լարուածութիւն, արդարութեան պակասի զգացում՝ այս բոլորը կը համադրուին սահմանային սպառնալիքներու, Ատրպէյճանի կողմէ չդադրող ճնշումներու եւ Թուրքիոյ երկիմաստ վարքագիծին հետ: Հիասթափութիւնը օղակ-օղակ կ'աճի եւ անընդմեջ վկան կը դառնանք արտագաղթ կոչուած հիւժող երեւոյթին:

Սակայն ըսենք, որ այս բոլորին առընթեր, պետութիւնը իր արտաքին քաղաքականութեան մէջ կը փորձէ նոր ուղիներ գտնել՝ աշխոյժացնելով կապերը Եւրամիութեան, ԱՄՆ-ի, Հնդկաստանի եւ Իրանի հետ:

Դեռեւս չկայ այն գործընկերը, որ պատրաստ է Հայաստանի համար անվտանգութեան իրական պարտաւորութիւններ ստանձնելու: Միւս կողմէ, սակայն, Հայաստանի ուղերձը յստակ է՝ մենք կը ձգտինք խաղաղութեան, եւ չենք խնդրեր զայն որպէս ողորմութիւն, այլ կը պահանջենք որպէս ազգ, որ արժանի է իր հողին վրայ ապրելու անվտանգ եւ արժանապատիւ:



Դարերով հայ ժողովուրդը գերտերութիւններու միջեւ ապրած է որպէս կամուրջ եւ որպէս զոհ: Մեր պատմական յիշողութիւնը լի է թէ՛ փշրուած յոյսերով, թէ՛ հպարտառիթ պահերով: Այսօր, ի տարբերութիւն անցեալի, մենք կարելիութիւն ունինք գոնէ որոշ չափով ազդելու մեր ճակատագրին վրայ: Բայց ասոր համար մեզմէ կը պահանջուի սթափութիւն:

Կուրօրէն կարելի չէ վստահիլ որեւէ կողմի: Հայկական մտածողութիւնը պէտք է առաջնորդուի ռազմավարական բազմակողմանիութեամբ, կառուցուած ոչ միայն բարոյականութեան, այլ մանաւանդ՝ շահի վրայ:

Մեր երկրին ոյժը մեր մէջ է՝ մեր կրթուած երիտասարդութեան, ստեղծագործ միտքի, ձեռներեցութեան, մշակոյթի եւ **աշխարհասփիւռ համերաշխութեան**: Աւելի քան երբեք, բոլոր տեսակի ճնշումներուն դիմակայելու համար մենք պէտք ունինք ոչ միայն դաշնակիցներու, այլ նաեւ ներքին ամրութեան:

Հայաստանը պատերազմած, վիրաւորուած, բայց ապրող՝ կենդանի երկիր է: Մեր ժողովուրդը կը շարունակէ ապրիլ հողի, մշակոյթի, պատմութեան եւ վաղուայ օրուան հանդէպ պատասխանատուութեամբ: Երբ աշխարհաքաղաքական ոյժերը կը շեղին եւ անհաւատալի արագութեամբ կը փոփոխուին առաջնահերթութիւնները, յիշենք, որ մեր գոյութիւնը մաս չի կազմեր օտարի օրակարգին: Մենք մեր օրակարգը պէտք է ունենանք:

Հեռո՛ւ մեծ խաղացողներուն խաղաքարտը դառնալու տխուր վիճակէն: Ի գին ամէն ինչի պարտաւոր ենք ըլլալ ազատ եւ մրցունակ, առանց մոռնալու, թէ ինչ գին վճարած ենք հոս հասնելու համար:

Մինչ աշխարհը կը շարունակէ փոխուիլ, մենք պիտի չզիջինք այն՝ ինչին համար զոհուեցան մեր տղաքը՝ սեփական հողի վրայ արժանապատուօրէն ու խաղաղ ապրելու իրաւունքը:

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ

ԵՐԵՒԱՆ


15/7/2025

**ՀԱՅ ՈՐՈՇ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Հին ասացուածք մը կ'ըսէ. «Պատը յիմարին օրագրութեան տետրակն է»: Ի հարկէ խօսքն այստեղ պատմական յուշարձաններու կամ եկեղեցիներու պատերուն վրայ փորագիր

արձանագրութիւններուն չի վերաբերիր. ասոնք տեսակ մը թանկագին փաստագրեր են՝ յիշատակարաններ, որոնք կարելոր տեղեկութիւններ կը հաղորդեն համապատասխան կառոյցի ինքնութեան, շինութեան թուականին, կառուցողին, բարերարին եւ յարակից այլ տուեալներու մասին:

Վերոգրեալ ասացուածքը միանշանակ կը վերաբերի այն դեռակիրթ այցելուներուն, որոնց պատեր մրոտելու գործը միայն նողկանք եւ ընդվզում կը յառաջացնէ: Կապ չունի, թէ այդ պատը ի՞նչ նպատակի համար կառուցուած է, կամ պատմական, հոգեւոր-մշակութային ինչպիսի՞ արժէք կը ներկայացնէ: Ըլլայ ան հնադարեան ամրոցի մը պարիսպը կամ երբեմն ազգի մը հոգեւոր ընկալումները արտացոլող եւ հաւատքը արձանացնող եկեղեցիի մը պատը, միեւնոյն է, անոնց վրայ յաճախ ստիպուած կ'ըլլաս կարդալու յիմար այցելուի մը անունը կամ որեւէ մէկ տխմար արձանագրութիւն՝ անոնց վրայ յաւերժացնել կարենալու համար իր անբաղձալի ներկայութիւնը: Ճիշդ այդպէս, մեր օրերուն այդ պատերը թուայնացուած են հիմա՝ դրսեւորուելով իբրեւ «Դիմատետր», «Ինսթակրամ», «Եութուպ» եւ այլ նմանատիպ հանրային հարթակներ:



Այս հանրային հարթակները սկզբունքով նախատեսուած են օժանդակելու, նաեւ խթանելու մարդոց միջեւ հաղորդակցութեան կապը, երկխօսութիւն ստեղծելու կարելիութիւնը, գիտելիք եւ տեղեկութիւն հաղորդելու հնարաւորութիւնը, գոյութիւն ունեցող աշխարհագրական սահմաններէ այն կողմ ազգերու եւ ժողովուրդներու միջեւ կառուցելու կամուրջներ, սատարելու անոնց կրթութեան եւ հոգեւոր-բարոյական զարգացումին: Սակայն, ինչպէս միշտ, առկայ բոլոր միջոցներուն արժէքը կախում ունի, թէ անոնք ինչպէ՞ս եւ ի՞նչ նպատակի համար կ'օգտագործուին: Միայն օգտագործելու եւ կանխամտածուած չարաշահումներու նպատակ հետապնդելու պարագային, անոնք սովորաբար կը յառաջացնեն ունայնութիւն, պառակտում, մարդոց մէջ կը սերմանեն ատելութիւն ու, այսպէս, հանրութեան մէջ կը դառնան «գայթակղութեան

քար»՝ չարաբաստիկ բառակապակցութիւն մը, Աստուածաշունչէն աւանդուած թեւաւոր խօսք մը, որ իր մէջ ոչ մէկ օրհնութիւն կը պարունակէ, այլ կը հանդիսանայ պատճառը բոլոր տեսակի չարիքներու:

Եկեղեցին նմանապէս շուտ ճանչցաւ հանրային հարթակներու ընձեռած խոշոր հնարաւորութիւնները եւ այն բոլոր առաւելութիւնները, զորս կ'առաջարկէին համացանցային ժամանակակից կայքերու նուաճած տարածքները: Եկեղեցիին սպասաւորները իսկոյն հասկցան, որ թուային ծառայութիւնները շատ աւելի մարդոց հասնելու կարելիութիւնները ունին, քան երբեւէ հնարաւոր պիտի ըլլար իրականացնել սեփական եկեղեցիներու պատերէն ներս: Արդարեւ, հանրային բազմազան հարթակներու մէջ կաթոլիկ, ուղղափառ եւ բողոքական աղբիւրներէ կան հսկայական արժէքաւոր ներդրումներ՝ աշխարհիկ թէ հոգեւոր ներկայացուցիչներու քարոզներ, վկայութիւններ, ներհայեցողական ուղղորդումներ, բարոյական խորհրդածութիւններ, որոնք միանշանակ



կը նպաստեն մարդը ընելու աւելի մարդկային, ամրապնդելով անոր մէջ անձնապէս իր եւ շուրջ բոլորը գնուող գոյերուն անչափելի արժէք ներկայացնելու գիտակցութիւնը: Այսպէս, կառուցողական նման գործունէութիւն մը որոշակի կը նպաստէ քրիստոնէական դաստիարակութեան, առօրեային մէջ հաւատքի կայացման՝ անտարակոյս բնաւորով հոգեւոր ձեւաւորման նոր ուղիներ:

Հայ եկեղեցին թուայնացուած ճարտարագիտութեան, հանրային հարթակներու ընձեռած այս հնարաւորութիւնները քիչ մը ուշացումով յայտնաբերեց, այնուամենայնիւ, յատկապէս վերջին տարիներուն, անիկա ներկայութիւն դարձաւ շարք մը համացանցային կայքերու, գորօրինակ՝ «Դիմատետր»ի եւ «Ինսթակրամ»ի, եւ նման թուային այլ հարթակներու վրայ: Գուցէ այստեղ Հայ եկեղեցին անունով արտայայտուիլը այնքան ալ ճիշդ չէ, այլ խօսքը նոյն եկեղեցւոյ այն սպասաւորներուն՝ որոշ եպիսկոպոսներու, վարդապետներու, քահանաներու, թէկուզ սարկաւագներու մասին է, որոնք այսօրուան վիճակով դարձած են մեկական աղմկայարոյց «բլոգեր»ներ: Յաւային այն է, որ անոնց առցանց ելոյթներէն շատերը ուղղակի անհամապատասխան են Ս. Աւետարանի ոգիին: Շնորհքի ընկալման, հաւատքի վկայութեան, Բանին կենաց քարոզութեան եւ քրիստոնէական հոգեւոր-բարոյական արժէքներ հաղորդելու փոխարէն՝ մեծ հիասթափութեամբ օրէ օր ականատես կը դառնանք՝ աւելի ահագնացող եւ Հայ եկեղեցին անբարենպաստ կացութեան մէջ մղող երեւոյթի մը՝ անձնական ունայնութեան, ապակառուցողական հոետորաբանութեան, ապարդիւն բանավեճերու, ընդհուպ մինչեւ ազգային մակարդակի վրայ բաժանումներ ստեղծելու անարդարանալի ձգտումներու: Ամենեւին չեմ կարծեր, որ ծայրայեղ եւ ինքնակոչ նախանձայուզութիւնը, չըսելու համար կրօնամոլական ծայրայեղականութիւնը, ոչ եկեղեցիին եւ ոչ իսկ իրենց անձին օրհնութիւն մը կրնայ բերել: Ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, որոշ եկեղեցականներ աւելի շատ «բլոգեր»ներու վերածուած են, քան հաւատաւոր հոգեւոր հովիւներու, մեզի հաղորդելու համար կեանքի իմաստ, քրիստոնէական աշխարհահայեացքի նպատակ, տիրաւանդ պատգամներու հոգեպարար բովանդակութիւն, նամանաւանդ՝ սէր, հանդուրժողութեան ոգի եւ խաղաղասիրութիւն, որ Լեռան քարոզի ամենաեական առաքինութիւններէն մին կը կազմէ: Հանրային հարթակներու վրայ եւ համացանցային կայքերու մէջ «բլոգեր»ական գործունէութիւն ծաւալելը յարիր չէ հոգեւորականի կոչումին, նաեւ դժուար թէ ան համատեղելի ըլլայ Քրիստոսի ուղերձին եւ մեր Մայր եւ Ս. եկեղեցւոյ հոգեւոր ժառանգութեան հետ:

Մակայն Աւետարանը «ալգորիթմ» (հաշիւներու օրէնք) կամ նարկիզային անձնական ինքնանկար մը չէ, այլ գերազանցապէս կոչում է: Քրիստոնէական հաւատքի կանչ մը, սրտի խորքէն բխող լուսաւորութիւն մը, ամբողջանուէր ծառայասիրութիւն մը եւ սրբութեան ձգտող ներքին մղում մըն է անիկա: Իսկ այս կոչումը հոգեւորականը կը ծառայեցնէ ոչ թէ ինքնագովումի, այլ համակ նուիրումի, խաղաղութեան կենսագործման, համայնքաշինութեան առաքելութեան, սիրոյ, յոյսի եւ ճշմարտութեան քարոզութեան: Եկեղեցիին ձայնը բնաւ եւ երբեք իրաւունք չունի ըլլալու թուային աշխարհի աղմուկին մէջ ժխոր մը եւս, անդուրեկան արձագանգ մը, այլ կոչ՝ լռութեան, ինքնամփոփումի, խորհրդածութեան ու հաշտեցման:

Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին կարիք չունի ազդեցիկ «բլոգեր»ներու, այլ ճշմարիտ հոգեւոր հովիւներու, նաեւ Ս. Հոգիի առատաձիր շնորհներով առլցուն հովուութիւններու: Մարդիկ, որոնց համար իրենց կուրծքին կախած լանջախաչը ոսկեձոյլ եւ ադամանդակոտ զարդարանք մը չէ, այլ հաւատքի պարտաւորեցնող ճշմարտութիւն եւ Յիսուսի հետեւելու ամբողջանուէր յանձնառութիւն: Եպիսկոպոսներու կրած



պանակէներու, վարդապետներու եւ քահանաներու կործքերուն կախուած լանջախաչին արժէքը ոչ թէ շուկային ոսկիի օրուան սակին առաջարկած կամ անոնց վրայ գամուած ադամանդին, զմրուխտին ու գունագեղ յակինթներուն նիւթեղէն գնահատականն է, այլ անոնց հոգեւոր իմաստը խորհրդանշող ընկալումը, որ մարմնաւորուած է Աստուածամօր բարեխօսութեան եւ Քրիստոսի խաչելութեան, մահուան ու հրաշափառ յարութեան հաւատքի գերազանց վկայութեան մէջ:

Համացանցային կայքերն ու ցանցերը կրնան իբրեւ միջոց ծառայել, սակայն բնաւ եւ երբեք անոնք չեն կրնար փոխարինել ճշմարիտ հոգեւորականի կենդանի ու կենարար կոչումը: Եթէ երբեք հայ եկեղեցականները հաւատարիմ մնան իրենց բուն իսկ կոչումին, այն հաւատքին, որ առաքելաշաւիղ աւանդութեան մը ընդմէջէն մարմնաւորած են հայոց հաւատքին լուսակարկառ ներկայացուցիչներն ու սուրբերը, հայրապետներն ու վարդապետները, սրբազան աւանդը Լուսաւորիչին, Արիստակէսին ու Վրթանէսին, Մեծն Ներսէսին, Սահակին ու Մեսրոպին, անոնց լուսապսակ աշակերտներուն՝ Թարգմանիչ վարդապետներուն, Յովհաննէս Իմաստասէր, Օձնեցիին, Գրիգոր Նարեկացիին, Շնորհալիներուն եւ Տաթևացիներուն, նաեւ միլիոն ու միլիոն այն հաւատաւոր հայութեան, որ դաժան դարերու մղձաւանջին մէջ Քրիստոսի եւ իր Սուրբ եկեղեցիին սիրոյն իր գետաբուխ եւ ծով արիւնը հեղեց՝ անխախտ մնալով քրիստոնէական հաւատքի ուղիղ վարդապետութեան մէջ, ապա, վստահ պէտք է ըլլալ, որ «Դիմատետր»ն ու այլ հարթակներ ստոյգ կը վերածուին լոյսի վայրերու այսօրուան յաճախ թուայնացած գորշ աշխարհին մէջ:

Աբել Քինյ. Մանուկեան

18 Յունիս 2025

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ





ԵՐԿԻՐ ԱՆԳԻՆ

Ու թե՛ լ առ թե՛ լ, հիւլե՛ - հիւլե՛
Ես-ս նուաստ բայց լուսահեւ
Շաղախեցի քու հողիդ հետ,
Քու սրբալոյս միւռոնիդ հետ..

Քու դարերուդ արարչահեւ,
Վսեմաշուք լեռանդ հետ,
Քու վերքերուդ, երգերուդ հետ,
Ազատաբաղձ ոգիիդ հետ...

Ես-ս նուաստ տակաւ շատցաւ,
Ճառագայթեց, վեր խոյացաւ
Ու ճախրանքով երկնասլաց
Երկնեց տողեր լուսածարա...

Քու մուսադ էր որ այցելեց,
Բորբ սէրդ էր որ ներշնչեց,
Գրչիս խոնարհ տուաւ թելեր,
Որ երկինքը ես համբուրեմ...

Բայց թէ խզեմ թելերս բիւր
Որ կապեն զիս արմատներուդ,
Կ'անէանամ ես անարմատ,
Արմատախիլ բոյսի նման...
25/6/2019

.....

ԹԱԻԱԼՔԻՆ ՀԵՏ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Տարիներս մէկի՛ կ-մէկի՛ կ թաւալեցան լուռ ու յուշիկ
Ժամանակի հոսանուտին, անէութեան գիրկն անդունդի...
Ինծի մնաց հետքը լուսէ բորբ յոյզերուս լուսապարզե՛ւ,
Ինծի մնացին յուշեր անջինջ օրագիրիս մատեանին մէջ...
Եւ ի՛նչ բառ ու տող ալ հիւսեմ լոյս բառերով ծիրանավառ,
Կրնա՞ն անոնք թարգմանն ըլլալ ապրումներուս յորդահոսա՛ն...
Տարիներս անցան, գացին, զգուանքն անոնց մընաց ինծի,
Որպէս կայծեր իմաստութեան, գալարատանջ ցաւ երկունքի,
Որ տուաւ ծնունդ վսեմ խոհի, աստուածներուն այցին լոյսի,
Առօրեական մանրութիւններէն վեր խոյանքին հոգւոյս անբաւ,
Հաճոյքներէն խաբեպատիր դէպ՛ հորիզոնն անեզրակա՛ն,
Որուն դիմաց շատցաւ հոգիս, գրկեց համայնն անպարագիծ,
Դարձաւ փոքրիկ կենտ լուսահեւ, լոյսն համբուրեց յաւերժութեան...
16/12/2023

.....

ԻՄ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Իմ ժամանակին արժէք էր հոգին,



Անվճար տարուած լուռ աշխատանքը,
Նուիրումն անձայն, զոհողութիւնը,
Ազնուութիւնը, բարին կարեկից:

Իմ ժամանակին ծախու չէր խիղճը,
Որուն խորանը սուրբ էր մնացեր
Մամոնայի չար գայթակղութենէն
Ու կը շողշողար զերթ Մասիս սարը:

Իմ ժամանակին կենաց Բանն էր թանկ,
Իմաստութիւնն էր անկշռելի գանձ,
Որուն մէկ հիւլէն կ'արժէր աւելի
Քան ոսկի, արծաթ ու թանկարժէք իր:

Իմ ժամանակին խօսքը ուրիշ էր,
Միրտէն կը բխէր, անչափ անկեղծ էր,
Կը դառնար կամար հոգիէ հոգի,
Երդում կը դառնար անուրանալի:

Իմ ժամանակին, հայ գիրը սուրբ էր,
Հայ գիրքը գանձ էր ամէն հայ տան մէջ,
Սուրբ նշխա՛ր, մասո՛ւնք եկած դարերէն,
Երաշխի՛ք գալիք դարերուն վսեմ:

Տղաք, աղջիկներ կը խլէին զայն,
Ձեռքէ ձեռք կ'անցնէր զերթ սուրբ մանանա,
Անոր էջերուն մէջ կը փնտռէին
Լուսատու աստղը՝ հայրենեա՛ց ոգին:
11/2/2025

.....

ԾԱՌՍ

Ես իմ ծառս զարդարեցի անուշահամ բիւր միրգերով,
Տարիներուս տքնանքը լուռ եւ քրտինքս կաթի՛լ-կաթի՛լ
Ոռոգեցին զայն շի՛թ առ շի՛թ գորովանքիս հետ միասին,
Որ չըլլար ան խորշակահար, չտապալէր սիրատոչոր...

Քանի անգամ քամին սպառնաց արմատախիլ ընել զանի,
Կիզիչ տաքը, ձմռան ցուրտը խոցոտեցին ծառս մատղաշ,
Միրոյս հրաշքն էր որ զայն փրկեց ու դիեցուց զայն խանդակաթ
Եւ դիմացաւ ու բարձրացաւ, դեռ զօրացաւ կամքով արի...

Մատղաշ ծառս դարձեր է այժմ պտուղներով բիւր բեռնաւոր,
Եւ որքան ալ ուրախանամ իմ պտղաբեր աշխատանքին,



Գիտեմ, Բարձրեալն Ի՛նքը օրհնեց ծառս յուրթի եւ սիրաւոր,
Որ պարգեւէ հիւրեղ միրգեր մարդուն քաղցած եւ ծարաւի...

14/4/2019

.....

ՀԵՌԱՆԱԼ...

Կ'ուզեմ հեռանա՛լ պահիկ մը գոնէ
Մարդոցմէ հեռու գով հովիտին մէջ,
Լսել խոխոջը գետակներուն ջինջ,
Դայլայլը գուարթ ծիծառներուն ժիր...

Խիտ անտառներուն մէջ խորասուզուի՛լ,
Լսել մրմունջը ծառերու երգին,
Որոնք հինաւորց պատմութիւնն ունին
Անցած ու գացած հնօրեայ գրոյցին...

Տերեւները բիր դեռ թրթի՛ռն ունին
Միրոյ հին երգին ու մեղեդիին,
Եւ սօսափն անոնց՝ խորհուրդը խորին,
Միրոյ գգուանքին զեփիւտին մեղմիկ...

Ունկնդիրն ըլլա՛մ անոնց հեքիաթին,
Աղմուկէն հեռու, տապէն հրկիզող,
Խոնջած գլուխս յանձնե՛մ երազին,
Որ դեռ շողշողայ անչափ հոգեթով...

5/7/2019

.....

ԵՒ Ո՞Վ ԿՐՆԱՅ

Եւ ո՞վ կրնայ քեզմէ խլել
Գի՛րդ, գրի՛չդ, խոկումնե՛րդ,
Խոհ-յոյզե՛րդ, ապրումնե՛րդ,
Էութի՛ւնդ արարչահեւ...

Մարդիկ կրնան նսեմացնել
Ու փոքրացնել արարումդ,
Բայց ան գիտէ վեր թեւածել,
Երկինք տանիլ տենչ ու տենդդ...

Արարումդ թող խճբճեն,
Ծաղր ու ծանակ ընեն զանի,
Քու ի՞նչ փոյթն է թէ վեր ճախրես
Ու համբոյր տաս անհաս երկնին...



Անոնք վարը պիտի մընան,
Դուն ազատ շունչ պիտի քաշեմ,
Անոնք բնաւ պիտի գիտնա՞ն
Վայելքը մեծ, ազատատենչ...
10/7/20219

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՒՐԵԱԼ ԱԶԳԱԳՐԱԳԷՏ, ԽՄԲԱԳԻՐ ՍԵՐԿԷՅ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երեւանի մէջ, Մայիսի վերջերուն՝ իր մահկանացուն կնքած է Համշէնի ուսումնասիրութիւններով ծանօթ ազգագրագէտ, խմբագիր Սերկէյ Վարդանեան, 73 տարեկանին:



Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթը կը գրէ, թէ Վարդանեանի մահով լռեց նաեւ իր իսկ հիմնած եւ երկար տարիներ խմբագրած «Չայն Համշէնական» պարբերականը:

«Ակօս» կը շարունակէ.

«Սերկէյ Վարդանեան տասնամեակներ շարունակ որոնեց համշէնցիներու մշակոյթը, պատմութիւնը եւ մա՛նաւանդ բարբառը: Ան այս որոնումներով ճամբորդեց զանազան երկիրներ, ուր մերթ իրենց կամքով, մերթ ալ բռնի պարտադրանքով բնակութիւն հաստատած են համշէնցիները: Անոնք ծագումով հայեր են, որ իրենց ցեղապետի՝ Համամ Ամատունիի առաջնորդութեամբ հաստատուած են սելճուկեայ Խաչքար լեռներու ստորոտները, հպատակելով Օսմանեան եւ Ռուսական կայսրութիւններուն: Պայմաններու բերումով մօտ երեք դար առաջ իսլամացած են, բայց առտնի գործածութեամբ պահած մայրենի լեզուն: Ռուսական հատուածի մէջ բնակող համշէնցիներու կարեւոր մէկ մասը քրիստոնէայ է: Իսկ անոնցմէ իսլամադաւանները Բ. Համաշխարհային պատերազմի տարիներուն բռնի կերպով աքսորուած են կեդրոնական Ասիոյ երկիրներ:

Սերկէյ Վարդանեան համշէնցիներու բոլոր բեկորները ուսումնասիրած գիտնական մըն էր եւ այդ աշխատանքներու ծիրէն ներս այցելած էր նաեւ Թուրքիա: Այստեղ եւս հանդիպած էր համշէնցիներու, որոնց հետ շրջած էր նաեւ Խաչքարի լեռնադաշտերը: Այս այցելութիւնը առիթ ընձեռեց, որ ան մտերմանայ “Ակօս”-ի անձնակազմին, յատկապէս հայերէն էջերու նախկին աւագ խմբագիր Սարգիս Սերովբեանի հետ: Իր կորուստով սուգի մատնուած են համշէնցիք, համշէնահայերը եւ “Ակօս”-ի անձնակազմը»:

«Ազատ Խօսք»ը կը միանայ Սերկէյ Վարդանեանի կորուստը սգացող թերթերուն եւ իր հայրենակիցներուն, մաղթելով որ իր գործը շարունակեն այլ նուիրեալ անձինք: ՅԱԻԵՐԺ ԼՈՅՍ ՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԻՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ:

ՓԱՐԻԶԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Մարուշ Երամեան



Փարիզի Նուպարեան Մատենադարանը այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 100-ամեակը, որուն առիթով կ'ուզենք լուսարձակ մը բանալ ՀԲՀ Միութեան պատկանող այս մեծ մատենադարանի պատմութեան վրայ, որ Սփիւռքի մեծ մատենադարաններէն կը համարուի, Սուրբ Ղազարի եւ Վիեննայի Մխիթարեան

Միաբանութիւններուն մատենադարաններէն ետք:

Միութեան այն օրերու կեդրոն Գահիրէի մէջ, հիմնադրութենէն միայն հինգ տարի ետք՝ 1911-ին, հիմը կը դրուէր «ՀԲՀ Միութեան Մատենադարան»-ին:

Այս առաջին Մատենադարանին ճոխացման համար շատ շատեր, մանաւանդ օրուան կարկառուն դէմքերը, գիրքեր նուիրաբերած են, որոնք աւելի ուշ Փարիզ փոխադրուելով, կորիզը դարձած են Նուպարեան Մատենադարանին:

Մատենադարանը գոյգ նպատակներ ունէր՝ «մէկ կողմէ կ'ուզէր օտարութեան մէջ գտնուող հայոց, մանաւանդ ուսանող սերունդին տրամադրութեան տակ դնել ոչ միայն իր ազգային պատմութեան ու մշակոյթին ծանօթացման նպաստող, այլ նաեւ ընդհանուր զարգացման անհրաժեշտ հրատարակութիւններ, միւս կողմէ՝ փրկել զանազան մասնաւոր հաւաքածոներ, որոնք իրենց տէրերուն մահէն ետք կրնային ցրուիլ եւ կորսուիլ», զանոնք կեդրոնացնելով համազգային հանգամանք ունեցող այս հիմնարկին մէջ, ինչպէս կը կարդանք 1935 թուականին գրուած զեկոյցի մը մէջ:

Գաղափարը շատ կարելոր թուացեր էր այդ օրերու մեծամեծներուն՝ Պօղոս փաշա Նուպարին, Գալուստ Կիւլպէնկեանին, Գրիգոր Եղիայեանին (Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բարերար) եւ Կարապետ Շերիտճեանին, որ առաջին գրադարանապետը եղած է: Այս անունները իրենց նուիրատուութիւններով ճոխացուցեր են Միութեան մատենադարանը: Անոնց օրինակին հետեւելով ուրիշներ եւս սկսեր են գիրքեր նուիրել, ինչ որ իր օգտակարութիւնը ունեցեր է այդ շրջանին:

Երուանդ Պէյ Աղաթօն, որ Միութեան գործադիր տնօրէնն էր, սկսած է դիմումներ ընել, որպէսզի Միութեան փոխանցուի կաթողիկէ գրասէրի մը՝ հանգուցեալ Վիչէն Հոլասի մատենադարանը:

«Հոլաս միջոց մը Պոլսոյ հայ-կաթոլիկ Պատրիարքարանին նուիրած էր իր Մատենադարանը, բայց վերջէն ետ առած էր այն մտավախութեամբ, թէ իր գիրքերը միակ յարանուանութեան մը սեփականութիւնը կը մնան, մինչդէռ իր փափաքն էր որ էապէս համազգային բնոյթ ունեցող եւ ազգին բոլոր հատուածներուն առջեւ բաց հիմնարկութեան մը մօտ մնան: ՀԲՀ Միութիւնը այս տեսակետով յարմարագոյն հիմնարկութիւնն էր անշուշտ, եւ Աղաթօն Պէյ ալ այս կէտը աչքի առջեւ ունենալով կատարեց իր դիմումները, Հոլասի մատենադարանին ստացման համար»:

Սակայն այն օրերու պարագաները արգելք դարձեր են ձեռնարկին յաջողութեան: Միայն 1925-ին, Արտաշէս Հիւրմիւզի ջանքերով, Հոլասի երկու աղջիկները՝ տիկին Բասէկա եւ օրիորդ Սօֆի Հոլաս, իրենց հօր ճոխ հաւաքածոն կը նուիրեն ՀԲՀ Միութեան:

ՀԲՀ Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը յարմար կը տեսնէ «Նուպարեան» կոչել Փարիզի մատենադարանը, ի յարգանք Պօղոս փաշա Նուպարին, որ 1927-ին Փարիզի Ալպոնի հրապարակին թիւ 11 շէնքին մէջ ամբողջ յարկաբաժին մը կը գնէ, Հոլասի գիրքերը ամփոփելու եւ հանրութեան տրամադրելու համար:

Պօղոս փաշա Նուպար այդ յարկաբաժինը կտակած է ՀԲՀ Միութեան, ինք հոգացած է դարակներուն եւ կահաւորումի ծախքը եւ իր հօր՝ Նուպար Փաշայի ճոխ հաւաքածոն, որ Եգիպտոս կը գտնուէր, իր ծախքով փոխադրել տուած է եւ նուիրած մատենադարանին:



Այդ առթիւ Մատենադարանը ստացեր է նաեւ Միքայէլ փաշա Փորթուքալի մատենադարանէն մաս մը, որ հոն փոխադրուած է, Գահիրէի մատենադարանին գիրքերէն կարելորագոյններուն հետ:

Իսկ Իտալիայէն Փարիզ փոխադրուած են Մատթէոս Խէրանեանի գիրքերը, որոնք ձեռքէ ելլելու վրայ էին այն օրերուն եւ այս ձեռով փրկուեր են կորուստէ կամ օտարներու սեփականութիւնը դառնալէ:

Պօղոս փաշա Նուպարի կտակին համաձայն Նուպարեան Մատենադարանը սահմանուած է առաւելապէս հայագիտական ուսումնասիրութեանց, «հայագիտութիւնը առնելով իր ընդարձակագոյն նշանակութեամբ», եւ կը պարունակէ ոչ միայն հայ ժողովուրդին, այլ նաեւ անոր դրացի կամ անոր հետ յարաբերութիւն ունեցած բոլոր ժողովուրդներուն պատմութեան, ինչպէս եւ ընդհանուր մշակոյթին նուիրուած կարելոր աշխատութիւններ, զանազան լեզուներով: 1935-ին արդէն 25 հազար կը հաշուէին այս գիրքերը:

Տարիներու ընթացքին Նուպարեան Մատենադարանին եկան մաս կազմել Աստուածատուր Հարենցի, Օրմանեան սրբազանի, Յովհաննէս Խան Մասէհեանի, Հրանդ Ասատուրի եւ այլոց գիրքերը:

Նուպարեան Մատենադարանը կը պարփակէ նաեւ մամուլի հագուագիտ հաւաքածոներ, 1840 թուականներէն մինչեւ ներկայ ժամանակները եւ ուսումնասիրողներու տրամադրութեան տակ կրնայ դնել «Մասիս»-ի, «Կռունկ»-ի, «Արեւելք»-ի, «Հայրենիք»-ի, «Բիւզանդիոն»-ի, «Մուրճ»-ի, «Բազմավէպ»-ի, «Բանասէր»-ի, «Հանդէս Ամսօրեայ»-ի, «Ազգագրական Հանդէս»-ի, «Արաքս»-ի եւ մամուլի այլ անուններու հաւաքածոները:

Մատենադարանին առաջին վերատեսուչին՝ Գրիգոր Մինապեանի մահէն եւ Լեւոն Կիւմիւշկերտանի պատուակալ վերատեսչութեան կոչուելէն ետք, մատենադարանին յարաբերութիւնները սերտ հանգամանք մը ստացեր են Խորհրդային Հայաստանի հետ, երբ գիրքերու փոխանակութեամբ համաձայնէր են իրարու օգնել:

Այն օրերուն կնքուած համաձայնագրի մը համեմատ, Խորհրդային Հայաստան Նուպարեան Մատենադարանին պէտք էր որկէր լոյս տեսնող բոլոր հրատարակութիւնները՝ գիրք թէ մամուլ:

Լեւոն Կիւմիւշկերտան կապ հաստատեր է Մոսկուայի «Վոքս» կազմակերպութեան, Ամսթերտամի եւ Լէյտընի համալսարաններուն հետ, անոնցմէ գիրքեր ստանալու համար:

Պէտք է նշել նաեւ, որ Նուպարեան Մատենադարանէն ներս կը պահուին հին լուսանկարներ, որոնք կը կազմեն կարելոր ֆօթո-ֆոնտ մը, քարտէզներ, վաւերագրեր, հայ գրագէտներու արխիւներ: Հոն կեդրոնացած են Հրանդ Ասատուրի, Խաչատուր Միսաքեանի, Խաչիկ Ուղուրիկեանի, Օրմանեան եւ Մանկունի սրբազաններուն, Տիգրան Երկաթի, Եագուպ Արթին Փաշայի արխիւներն ու ձեռագրերը:

Այդ թուականներուն՝ 1935-ին Մատենադարանին Վարչութիւնը նպատակ ունեցեր է կազմելու նաեւ դրամագիտութեան բաժին մը, որուն կորիզը պէտք էր դառնային Կիլիկիոյ Մահակ Կաթողիկոսին կողմէ նուիրուած քսան կտոր Կիլիկեան պղինձ եւ արծաթ հագուագիտ դրամները:

Մատենադարանը հաւաքած է նաեւ ազգային նշխարներ, ինչպէս Զօր. Անդրանիկի անձնական իրերն ու թուղթերը, ամփոփուած յատուկ ապակեդարանի մը մէջ:

Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանին նուիրեր է 1673 թուականին ծաղկարար Ղազարի կողմէ Եւդոկիոյ մէջ գրուած ու նկարագարող թանկագին Յայսմաւուրք մը:

«Արամ Անտոնեան մեծ ձեռնհասութեամբ եւ նուիրումով կատարած է Մատենադարանին կազմաւորման եւ դասաւորման դժուարին աշխատանքները 1927-էն ի վեր, գրադարանապետի իր պաշտօնով»:

Արամ Անտոնեան Համաշխարհային Բ. պատերազմին, գերմանացիներուն Փարիզ ներխուժումի օրերուն, ինքզինք վտանգի ենթարկելով կրցեր է փրկել Մատենադարանին

գիրքերէն մաս մը, իսկ մնացեալը Պերլին (Գերմանիա) փոխադրուած է, «ուսումնասիրելու համար հայկական մշակոյթը եւ հայերու կապը արիական ցեղերուն հետ»: Պատերազմին աւարտէն ետք կարելի եղած է այդ գիրքերը վերադարձնել Նուպարեան Մատենադարան:

Այսօր նոյն հասցէին վրայ գտնուող ՀԲԸ Միութեան Փարիզի Նուպարեան Մատենադարանը կը շարունակէ այնքան օգտակար աշխատանքը, իր ծառայութիւնները տրամադրելով գլխաւորաբար մասնագէտներու, հայ թէ օտար:

<http://www.kantsasar.com/news/56489-2/>

ՀՈՐԻԶՈՆԻՆ ԵՏԻՆ ՄՆԱՅԻՆ ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐԸ ՈՒ ԱՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ...



Ես զարմացայ: Ու վստահաբար իմ ընթերցողներն ալ պիտի զարմանան՝ եթէ ըստի իրենց, թէ շուրջ 50 տարի առաջ Լիբանանի մէջ կը գործէր Շապին-Գարահիսարի Հայրենակցական Միութիւն մը:

-- Շապին-Գարահիսար՝...: Ի՞նչ անուն է այս, ո՞ր մոլորակին վրայ կը գտնուի,-- զարմացական հայեացքով հարց պիտի տան մեզի մեր նորահաս կամ երիտասարդ տղաքը, եթէ անոնց դիմաց արտասանէք այս երբեմնի նշանաւոր հայաբնակ բերդաքաղաքին անունը:

Այո՛, տխուր է իրականութիւնը: Շապին-Գարահիսարը կորսուած ու մոռցուած քաղաք մըն է այլեւս մեզի համար: Ամբողջ տարուան ընթացքին մէկ անգամ իսկ կը լսէ՞ք անոր անունը: Տարիներէ իվեր մէկ հոգի իսկ ելած է ձեր դիմաց ու հպարտօրէն գոչած. «Իմ մեծ հայրս շապին-գարահիսարցի էր»...:

Մերունդներու պորտալարը փրթած է իրենց անցեալին հետ:

Աշխարհագրական այն անունները, որոնք ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ կենդանի կը պահէին մարդոց սրտերուն մէջ, վերածուած են անիմանալի ու անհրապոյր բառերու...: Մինչդեռ, այդ գունագեղ անունները,-- Վասպուրականը, Կարինը, Տարօնը, Տիգրանակերտը, Խարբերդն ու Բալուն, Կիլիկիան ու Շապին-Գարահիսարը,-- քանի մը տասնամեակ առաջ թովիչ ազդեցութիւն ունէին մարդոց վրայ, անպայման լար մը կը թրթռացնէին հայ մարդուն հոգիին յատակը՝ երբ կ'արտասանուէին...: Քաղցր ու անբացատրելի ապրում մը կ'արթնցնէին մեր ներաշխարհին մէջ ու կը խթանէին մեր իմացականութիւնը...:

Ճիշդ հոս էր, ահաւասիկ, մեր հայրենակցական միութիւններուն եզակի դերն ու վսեմ առաքելութիւնը: Ապրեցնել անցեալը, թարմ ու կենդանի պահել պապենական երկրին յուշերը, սերունդները տոգորել կորսուած բնօրանին բարոյական արժէքներով:



Եւ սակայն, քանի տկարացան մեր հայրենակցական միութիւնները, քանի մի առ մի լուծարքի կամ ձեռնարկութեան ենթարկուեցան անոնք, զուգահեռաբար սկսան հետզհետէ նահանջել հայրենակարօտ զգացումները: Ու երբ սերնդափոխութիւնն ալ վրայ հասաւ՝ ա՛լ մեր շուրջ սկսանք փնտռել գէթ մէկ-երկու հոգի՝ որ կարենար գոչել. «Մեծ հայրս սեբաստացի էր», «մեծ հայրս գէթունցի էր», «մեծ հայրս շապին-գարահիսարցի էր»...:

Երեսուն կամ քառասուն տարին բաւարար եղած է՝ որպէսզի մեր մէջ բոլորովին ցամքի հայրենակցական պատկանելիութիւնը: Այսօր, մտէ՛ք Սուրիա-Լիբանանի մեր հայկական վարժարանները ու հոն, երկրորդական կարգերու հայ ուսանողներուն հարց տուէք, թէ ո՞ր տեղացի էին իրենց պապերը: Մեծաւ մասամբ ուս պիտի թոթունէն, պիտի կարկամին, նոյնիսկ անտեղի պիտի գտնեն այդպիսի հարցում մը: Չէ՞ որ իրենք հալէպցի են, լիբանանցի ու թերեւս՝ մօտիկ ապագային ալ պիտի դառնան ամերիկացի, գանատացի, աւստրալիացի...:

Ճիշդ 55 տարի առաջ, լիբանանահայ մամուլին տրուած ծանուցում մը կ'ըսէր, թէ Շապին-Գարահիսարի Հայր. Միութիւնը նոյն բերդաքաղաքի հերոսամարտի ընթացքին զոհուած նահատակներուն հոգւոյն համար հոգեհանգստեան պաշտօնական արարողութիւն կատարել պիտի տար Անթիլիասի մայրավանքի տաճարին մէջ...:

Այսօր, կը խորհիմ թէ հրապարակէն չքացած է,-- ուրիշ բազմաթիւ նոյնաբնոյթ միութիւններու նման,-- վերոնշեալ հայրենակցական միութիւնը, իսկ Շապին-Գարահիսարն ալ մնացեր է հորիզոնին ետին՝ աչքէ ու ականջէ հեռու, միտքէ հեռու, սրտէ հեռու...:

Օ՛, որքան լաւ պիտի ըլլար, եթէ իր գոյութիւնը պահպանէր ու մինչեւ մեր օրերը հասած ըլլար Շապին-Գարահիսարի Հայր. Միութիւնը, իբրեւ գործուն ու աշխոյժ մարմին մը:

Յունիսը, աւանդաբար, Շապին-Գարահիսարի հերոսամարտին ոգեկոչման ամիսն է: Թող լիբանանաբնակ շապին-գարահիսարցիները հոգեհանգստեան պաշտօնով մը յիշէին իրենց նահատակները, ապա մեծով-պզտիկով համախմբուէին իրենց կեդրոնատեղիին մէջ ու այնտեղ, բանախօսի մը բերնէն, աշխարհագրական ու պատմական տեղեկութիւններ լսէին իրենց հայրենի քաղաքին մասին: Գո՛նէ սորվէին, թէ Շապին-Գարահիսարը Սեբաստիոյ նահանգին կը պատկանէր: Հոն ծնած էր զօր. Անդրանիկը: Գո՛նէ իմանային, թէ 1915-ի Յունիսին շուրջ 5000 տեղաբնակ հայեր բարձրացան քաղաքին հինաւորաց բերդը, ամրացան այնտեղ ու ամբողջ ամիս մը անհաւասար մարտեր մղեցին թուրք մեծաթիւ բանակին դէմ: Չյուսալքուեցան, երբ հայատեաց թշնամին ուրակոծեց բերդը թնդանօթներով, երբ անոր հրոսակները հրդեհեցին հայոց բնակարանները, թալանեցին խանութները: Ու թող գիտնային, թէ լոկ անբաւարար զինամթերքն ու խիստ սակաւ պարէ՛նն էր որ կտրեց մէջքը շապին-գարահիսարցիին...:

Անյուսալի դաժան պայմաններու տակ՝ դաժա՛ն ճակատագիր:

Ինկա՛ւ Շապին-Գարահիսարն ալ: Թշնամին բերդ խուժեց: Պատմութեան մնացեալ բաժինը ենթադրելի է արդէն...

Նահատակուեցան, ի միջի այլոց, հերոսամարտի ղեկավարները՝ Ղուկաս Տէօվլէթեանն ու Աւագ Տուրիկեանը, Գարեգին Կարմիրեանն ու Շապուհ Օզանեանը, Վահան Հիւսիսեանն ու Հմայեակ Գարակէօզեանը...:

Այս բոլորը, ամենայն մանրամասնութեամբ ու սրտակեղեք պատումներով շարադրուած, պիտի գտնէք բնիկ շապին-գարահիսարցի գրագէտ ու ամերիկահայ գրականութեան համբուրելի դէմք Արամ Հայկազի «Շապին-Գարահիսար եւ իր հերոսամարտը» խորագրեալ սքանչելի յուշագրութեան էջերուն (1957): Արամ Հայկազ (1900-1986), իբրեւ ականատես-մասնակից մը այդ հերոսամարտին, փրկեց մեր պատմութեան կարեւոր մէկ էջը ու յետոյ գնաց պատմել, թէ ինք մագապուրծ վերապրելէ ետք բերդի սպանդէն՝ ինչպէ՛ս ապրեցաւ «չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ»...:

Շապին-Գարահիսարը մոռցուած է: Շապին-Գարահիսարի Հայր. Միութիւնը չբացած է հրապարակէն: Գո՛նէ չմոռնանք Արամ Հայկազներն ու զօրավար Անդրանիկները...:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ

(ԽՈՇԱԳՐՈՒԹԻՒՆ)



Տարիներու թաւալումին հետ, սկսաւ տեսնել ու նկատել բաներ որոնք վրիպած էին ցարդ իր ուշադրութենէն: Է՛հ, մտածեց, երիտասարդութեան տարիները այնքան բուռն են, տենդ ու տենչերով յագեցած, որ ժամանակ չեն ընձեռեր, կարծես, երեւոյթներու խորքը տեսնելու, խորասուզուելու եւ չտեսածը տեսնելու...

Իսկ հիմա, իր հայեացքը ան կը սեւեռէր երեւոյթներու խորքը ըմբռնելու, աներեւոյթը տեսնելու ներքին մղումով...

Բնութեան մէջ երբ կը թափառէր, ծաղիկներու հմայքէն, բոյր-թոյրերէն անդին, կը տեսնէր անոնց թառամիլը պահ առ պահ, անոնց թօշնումը քիչ առ քիչ եւ սիրտը կը մղկտար անանուն թախիծով...

Նոյն զգացումները կ'ունենար երբ բնութեան հրաշալի փթթումը կը դիտէր գարնանային զարթօնքին: Մերթ կը սքանչանար ծիլ ու բողբոջներու պայթումին ի տես, մերթ ալ իր մտապատկերին առջեւ կը տեսնէր նոյն այդ բողբոջներու անխուսափելի վերջը՝ ամռան ծաղկումէն եւ աշնան հուրհրատումէն ետք...

Բայց գեղեցկութեան եւ կեանքի խորհուրդը անմահ է, մտածեց: Ան գերիվեր է ժամանակէն եւ պարագաներէն:

Մանկան առաջին ուրախութեան ճիչին, ճիչերուն, պիտի յաջորդէին լիաւին հասունութեան բերկրանքը եւ տակաւ տարիները պիտի յանգէին ծերութեան սեմին: Յիշեց



Վահէ Վահեան բանաստեղծին տողերը այդ մասին...բառերը չիշեց, բայց միտքը կեանքի դառն իրականութեան մը պատկերը կ'արտայայտէր: Որո՞նց ափսոսալ արդեօք. Աղուորներո՞ւն որոնք իրենց հմայքը չկորսնցուցած շուտ հեռացան, թէ՞ այն աղուորներուն, որոնց հմայքը տակաւ խամրեցաւ ժամանակի թաւալքին հետ: Սա նոյնպէս կեանքի ողբերգութեան մաս կը կազմէր, որուն սակայն մարդիկ գերազանցօրէն կ'անդրադառնան, զայն կ'ապրին լիարիւն, միայն երբ հասնին իրենց կեանքի մայրամուտը, խորհրդածեց:

Խոտերուն մէջ գեղեցիկ բացատ մը նկատեց, ուր սիրահար զոյգ մը՝ իրարմով տարուած ու կլանուած, կ'ողջագորութին սրարբած...Քիչ անդին, կար դատարկ եւ հնացած նստարան մը, որ կարծես իր մենութեան ողբը կու լար: Գուցէ այդ նստարանն ալ ականատեսը դարձեր էր ժամանակին սիրահար զոյգերու գրկախառնումին կամ կայտառ մանուկներու չարաճճիութեանց...Իսկ հիմա լքուած կը հառաչէր...Այս էր կեանքը, խորհրդածեց տրտմագին, եւ ծերութեան ու լքուածութեան սարսուռ մը անցաւ մարմնով մէկ:

Զարմանալի է կեանքը, մտմտաց: Իր կեանքի գարնան ու ամռան եղանակներուն, երբե՛ք եւ երբե՛ք նման միտք-զգացումներ չէին այցելէր իրեն, երբ կեանքը կ'ետար իր շուրջ եւ իր մէջ: Սա՞ էր իմաստութիւն կոչուածը: Որքան պիտի նախընտրէր խենթ ու խելառ ապրիլ, ոստոստել կայտառօրէն մարգագետինին վրայ, ծառերուն եւ թուփերուն մէջ, իյնալ-ելլել եւ չխորհիլ, չմտածել, տրուիլ միայն բնութեան եւ ապրելու տարերքին...

Եւ հարց տուաւ ինքն իրեն թէ ինչո՞ւ արդեօք մայրամուտի ծիրանին է որ ամենէն շատ կը յուշէ մարդուն կեանքի բուն խորհուրդը, քան այգաբացը լուսահեղեղ...

Կեանքի խորհուրդը, մտորեց, ապրիլն է՝ մարմնի, մտքի ու սրտի բոլոր բջիջներով, արեւն ըմպել է անյագուրդ եւ անյոգնում, կենսաբբենալ է ինչպէս թիթեռնիկը որ եռանդագին կը ծծէ նեկտարը ծաղիկներէն եւ իր մէկ օրուան կեանքը կ'արժեւորէ լիովի...Իսկ եթէ ամպամած ըլլայ այդ մէկ հատիկ օրը որ իրեն տրուած է, հարցադրեց: Այդ ալ բախտն է կամ դիպումը, որ յաճախ որոշադրիչ դեր կը խաղայ ամենուն կեանքին մէջ ալ, շարունակեց:

Իրեն տրուած կեանքի այդ մէկ օրը՝ տարիներ ու տասնամեակներ, սրննթաց սահեր, անցեր էին եւ հիմա բախտաւոր էր որ նոր-նոր խոհեր, նոր-նոր ապրումներ կ'այցելէին իրեն: Հոգին պահեր էր իր նոյն աշխուժութիւնը: Նոյն պայծառութիւնը: Աւելին, ան նոր խոկումներ, նոր յոյզեր կը մատուցէր իրեն, կեանքի նորանոր դիտարկումներ կ'ընծայէր, գաղափար-զգացումներու նորանոր տեսադաշտեր կը պարզէր:

Ուրիշ բան մըն ալ նկատեց իր կեանքէն ներս: Ա՛լ սորված էր առանձնութիւնը սիրել: Աւելին, շատ անգամ կը նախընտրէր առանձնութիւնը, քան կեղծ ու սուտ ընկերութեան թոհուրոհը, որ խորքին մէջ ինքն իրմէ խուսափում մըն էր եւ ինքնախաբկանք: Առանձնութեան այդ պահերն էին որ զինք մղեցին արարելու, ստեղծագործելու եւ կեանքը նորովի իմաստաւորելու...

Որքան շնորհակալ զգաց Բարձրեալին հանդէպ, որ կեանք շնորհած էր իրեն, կեանքը վերարժեւորելու համար, նորոգ տեսլականներ բացեր էր իր մտահորիզոնին դիմաց, ինչպէս

մայրամուտը կը փռէ իր ոսկեշառայլ գոյները եւ կը բոցավառէ հորիզոնը հրակարմիր բոնկումներով...

Եւ եզրակացուց որ կեանքի յարահոս իրականութեան մէջ, ամէն մէկ պահը թանկագին է, եւ ապրողը ի՛նք պիտի արժեւորէ զայն համահունչ իր հոգեկերտուածքին, ներաշխարհին, իր դաւանած արժէքներու համակարգին: Իսկ ծերութիւնը, մտածեց, կեանքի այն վերջին հանգրուանն է գուցէ, երբ աչքերդ կը բացուին տեսնելու չտեսածը ներքին խորաթափանց եւ խորատես հայեացքով...Իսկ արդեօ՞ք սահման ունի չտեսածը, չիմացածը, այնպէս ինչպէս անհուն տիեզերքը...ի հակադրութիւն մարդկային կեանքի ժամանակին, որ կը սահմանափակուի՝ ծնունդէն մինչեւ մահ ժամանակամիջոցով: Դեռ որքա՛ն պիտի ապրէր արդեօք այս կեանք-երազը, որուն անցնող ժամանակի մէն մի պահը հիմա անգին էր անչափ, զոր չէր ուզեր վատնել պարապ փնթփնթոցներու վրայ կամ սուտիկ մարդկանց հետ...այլ կ'ուզէր արժեւորել առաւելագոյն չափով, գուրգուրալով անոր մէն մի վայրկեանին վրայ..

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Յուլիս 2025

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ձարմանալի է կեանքը...Որքա՛ն ալ վրդովուինք, որքա՛ն ալ հիասթափուինք, որքա՛ն ալ ցաւինք, ներքին խորհրդաւոր ՈՅԺ մը կայ մեզմէ իւրաքանչիւրին մէջ ալ, որ կը վերանորոգէ մեզ ՀՈԳԵԻԻՆ, կ'օգնէ որ ոտքի կանգնինք, անձնատուր չըլլանք կեանքի մութ ուժերուն, պայծառ աչքերով նայինք կեանքին ու աշխարհին, փնտռենք ու գտնենք լաւը, լուսաւորը, բարին՝ որոնք միշտ կան

մեր շրջապատին մէջ եւ այլուր, անոնցմով լիցքաւորուինք, անոնցմով ներշնչուինք, գօտեպնդուինք... Մարդկային կեանքը էապէս ոգիի եւ լոյսի ճանապարհորդութիւն է:

.....

Երբ աշխարհը լայն մտահորիզոնով կ'ընդգրկես, երբ կը սորվիս որ լոկ հիւլէ մըն եւ տիեզերքի անհունութեան մէջ, յայնժամ կը դառնաս խոնարհ, սրտաբաց եւ ոչ նեղմիտ ու նախանձամիտ, քանզի նախանձամտութիւնը սերտ կապ ունի նեղմտութեան հետ, ըստ իս:

.....



Այնքան դիւրին է ճառել ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵՆԷՆ, սակայն դժուար՝ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԸԼԼԱԼԸ, այնքան դիւրին՝ խօսիլ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ մասին, բայց դժուար՝ ԱՐԴԱՐ ԵՒ ՃՇՄԱՐՏԱԽՕՍ ԸԼԼԱԼԸ...Այնքան դիւրին՝ բարբաջել ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ մասին, սակայն դժուար՝ ԱՌԱՔԻՆԻ ԸԼԼԱԼԸ...: Ձեռով ու ձեռականութեամբ փայլող մեր ներկայ աշխարհին մէջ, ԸԼԼԱԼԸ է դժուար...Մինչ այնքան շատ է թուացեալը, երեւոյթը...Յաճախ ալ, ՈՒՆԵՆԱԼԸ կը ծածկէ ԸԼԼԱԼՈՒ ԷԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

.....

Հեռուն տեսնելը իմաստութիւն է..

Հեռուն ծրագրելը ազգային ռազմավարութիւն է...

Քայլ առ քայլ զայն անզիջում գործադրելը ԱԶԳԻ ու ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ է:

.....

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ հոգիի որակ է գերազանցօրէն, որ արտայայտութիւն կը գտնէ մեր արարքներուն մէջ...Առանց այդ հոգիի որակի, իրա՛ւ հայրենասիրութեան տեղ, կայ միայն շահախնդրութիւն, հաշուենկատութիւն...եւ նման բաներ:

.....

ՄԵԾԵՐԸ չեն մեռնիր, անոնք կ'ապրին նաեւ եւ ի մասնաւորի իրենց յետ-մահու կեանքով, քանզի իրենց կերպարը, վաստակն ու գործը կը դառնան ներշնչարան, ոգեշնչման աղբիւր իրերայաջորդ սերունդներուն...ՀՈԳԵՄՏԱԻՐ ԺԱՌԱՆԳ, ՈԳԻԻ ԴԱՐԲՆՈՅ որպէս, անոնք կ'ապրին յար յաւիտեան, մինչեւ այն ատեն որ կա՛յ, կ'ապրի զիրենք ծնող ժողովուրդը...: Պահ մը կրնա՞նք երեւակայել, թէ ի՞նչ պիտի ըլլար ՀԱՅ ԿԵԱՆՔԸ, եթէ չըլլային մեր ՄԵԾԵՐԸ, որոնց վսեմ օրինակին կը դիմենք յաճախ, մանաւանդ մեր դժուարին պահերուն...ՄԵԾԵՐԸ ՄԵՐ ՈՒՂԵՅՈՅՑ ՓԱՐՈՍՆԵՐՆ ԵՆ, ՈՐՈՆՅ ԼՈՅՍԸ ԱՆՇԷՋ Է:

.....

Մեծ գիտնական ԱՅՆՇԹԱՅՆԸ իր հաւատքը բանաձեւեր է որպէս «տիեզերական կրօնական զգացում»., որ վստահաբար վեր է ամէն տեսակ կրօններէ: Սա այն խոր երկիւղածութեան, սքանչացումի, տիեզերականութեան զգացումն է, ըստ իս, որ մարդ էակը կ'ունենայ երբ տիեզերքի եւ բնութեան հրաշք-ներդաշնակութեան առջեւ գտնէ ինքզինք, եւ կը խորզգայ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ կամ ԱՐԱՐԻՉԻՆ ներկայութիւնը...: Երբ կը դիտենք արեւածագը, երկնքի անսահմանութիւնը, մայրամուտը, լուսինն ու աստղերը, ծաղկող բնութեան զարթօնքը, երբ կը զգանք անոնց խորին խորհուրդը, յայնժամ մեր սիրտերը կը լեցուին խոր հիացումով, կը մեծնան, կ'աճին, կը նոյնանան տիեզերական շունչին հետ...Ի՞նչ կոչել այս զգացումը, եթէ ոչ անբառ ԱՂՕԹՔԻ պահ, տիեզերական կրօնական խորապրումի պահ...: Կա՞յ զգացումի, մտածումի, բանականութեան ՏԷՐ ոեւէ մարդ էակ, որ էապէս չունենայ նման խորապրումի պահեր...: Իսկ եթէ կայ, խորապէս ԽՂՃԱԼԻ է ան...



.....

Անչափ դժուար, այլեւ պատուաբեր է հաւատարիմ մնալ ինքն իրեն: Սա կը նշանակէ թիավարել հոսանքն ի վեր ընկերութեան պարտադրած ընթացիկ ու քարացած ըմբռնումներուն, կարծրատիպերուն, հասարակական կարծիքի բռնութիւններուն...Սա կը նշանակէ ամէն ինչ իւրովի մտածել, յարդը ցորենէն զատել, չկրկնել թութակաբար դարեւոր փոխանցուած սովորութիւններ, նախապաշարումներ...Սա կը նշանակէ քիչ մը խորթ ու զարտուղի երեւիլ, քիչ մը քարկոծուիլ, քիչ մը զրպարտուիլ, բամբասանքի առատ նիւթ հայթայթել...: Իւրովի մտածելը, իւրովի ապրիլը, ազատ ըլլալու էական յատկանիշներ են, որոնց բարձր գինը կ'արժէ վճարել, քանզի ԱԶԱՏ ԸԼԼԱԼԸ ՄԱՐԴ ԷԱԿԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԺԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ Է:

.....

Երիտասարդութիւնը ազգի մը վաղուան կեանքը երաշխաւորող ա'յն կարելոր հատուածն է, որ ամէնէն շատը ունի ճաշակը, հակումը՝ գեղեցիկ, գաղափարապաշտ, յանդուգն մօտեցումներու, արարքներու...Ան է, գերազանցօրէն, որ ոտքի կ'ելլէ ի պաշտպանութիւն արդարութեան, ազատութեան, արժանապատուութեան: Ան ժողովուրդի մը գաղափարակիր, խիզախ տարրն է: ԱՆ ՈՍԿԻ ԵՐԱԿՆ Է ՅԵՂԻՆ:

.....

Պատմութիւնը լոկ դէպքերու եւ իրադարձութեանց անկապ շղթայ չէ, անիկա էապէս պատճառ-հետեւանքային երեւոյթներու եւ իրադարձութեանց ընթացք է, օղակ առ օղակ իրարու ազդուցուած ներքին պատմական տրամաբանութեան հոլովոյթով...: Եթէ պատմութեան չմօտենանք այս ակնոցով, զայն մակերեսային կերպով սերտելը ոչ մէկ օգուտ կամ նպաստ կրնայ բերել մեր ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԹՆԱՅՄԱՆ ԿԱՄ ԽՈՐԱՅՄԱՆ...: ԽՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՒ խոր ուսումնասիրութիւնն է որ կրնայ օգնել մեզի՝ ճիշդ հասկնալու զայն եւ համապատասխան դասեր քաղելու անկէ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Չսորվեցանք մենք խօսիլը,
Գգուըռտոցն էր՝ վարքն ու բարքը,
Օտարին լոկ խոնարհեցանք,
Անարգեցինք միշտ մենք զիրար...

.....

Վարդին հետ փուշն ես սիրեցի,
Մէկը սերն էր՝ լուսեղէն թռիչք,
Միւսը՝ դառն զգաստութիւն,
Որ թռիչքիդ մէջ չսայթաքիս...

.....

Թէ արթուն է ոգին Հայկեան,
Հայր միշտ կայ ու կը մնայ
Ան՝ որ տեսաւ գեհենը սեւ,
Բայց միշտ մընաց արեւատենչ:

.....

Ազգ իմ, կէսօր եղաւ արդէն, շուտով պիտի իրիկնանայ,
Բայց դուն երբեք չհասունցար, մնացիր նոյն խակ երախան,
Տուն-տունիկի խաղէն չէլար, աշխարհին երբեք դուն չճանչցար,
Բայց ամէնէն ահաւորը՝ դուն քեզ անգամ դեռ չճանչցար:

.....

Ընկերական դիմակով որքան մարդիկ մօտեցան,
Կեանքը պատեց դիմակը, իրաւ դէմքը երեւցաւ,
Յանցանքն իմս էր որ խաբուեր, հաւատացեր էի շատ,
Բայց միամտօրէն դեռ հաւատք ունի սիրտս անուղղայ:



.....

Եւ ամէն տեղ Քաջ Նազարներ,
Եւ ամէն տեղ Փանջունիներ,
Հայ կեանքէն ներս այնքան շատ են,
Որ տեղ չկայ մարդուն խոհեմ...

.....

Հայրենիքը ոգեղենն է
Որ դարձ դար քեզ շաղկապէ
Քու պապերուդ, արմատներուդ,
Հայ հոգիին խորհրդալոյս...

.....

Ինչո՞ւ լեցնել սիրտը, հոգին
Քէնով, թոյնով, մաղձով դեղին,
Երբ այնքան լոյս կայ ոսկեշող,
Ծիածան գունեղ ու հոգեթով...

.....

Մի՛ յանձնուիր ճակատագրիդ, կռանէ կամքդ եւ պայքարիւր,
Հունտը անգամ կը պայքարի որ կարենայ ծլիլ-ծաղկիլ,
Կեանքն է պայքար մը անհատնում մինչ վերջին շունչը մեր կեանքի,
Անով է որ կրնաս աճիլ, յաղթել կեանքի ճախճախտոտին:

.....

Որքան գովեստ ես շռայլեցի կեանքիս երկար ճանապարհին
Մի կում ջուրին, մի թաս գինւոյն, բարի խօսքին ու ժպիտին,
Սիրտս տուի երբ նշոյլ մը սէր-ճառագայթ շողաց վտիտ,
Բայց արեւիս դէմ յանդիման շատ յաճախ կոյր եղան մարդիկ:

.....

Դրամին դիզած բարիքները
Պիտի մնան այս աշխարհին,
Հոգիիդ մէջ ամբարածը
Պիտի մնայ գերթ գանձ անգին...

.....

Սիրտը դիւրին կը փշրուի,
Ինչպէս սափոր մը դիւրաբեկ,
Թէ քնքշութեամբ դուն չվարուիս,
Կը կտորի ան անդարձօրէն...

.....

Անապատներ շատ եմ տեսած,
Խորշակահար եմ ես եղած,
Բայց մտքի գորշ անապատն է



Որ մոխրացնէ մտքի բերքեր..

.....

Արարումը, աշխատանքը սպեղանի են ցաւած սրտին,
Քու անձէդ դուրս կ'ընդարձակիս, կը տարածուիս,
Լոյս կը բաշխես միտքէդ, սիրտէդ եւ կը սփռվուիս,
Լոյսն այդ քեզի վերադառնայ բիրապատիկ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱ